

**«ՀԱՅՔ» ՏԱՐԱԾԱԾՐՁԱՆԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

**Մ. Գ. Մանայան
Ա. Թ. Գրիգորյան
Ա. Հ. Պատոսյան**

ՃԻՐԱԿԻ ՄԱՐԶ

**Բնությունը, բնակչությունը,
տնտեսությունը**

**«ՆԱԳԱՊԵՏԵՏ»
Երևան-2002**

ՀՏԴ 911.3(479.25)
ԳՄԴ 65.9 (24)04
Մ 246

Գիրքը հրատարակության է Երաշխավորել Երևանի պետական
համալսարանի աշխարհագրական ֆակուլտետի գիտխորհուրդը

Մանասյան Մ.Գ. և ուրիշ.

Մ 246 Ծիրակի մարզ/Մ.Գ. Մանասյան, Ա.Թ. Գրիգորյան,
Ա.Հ. Պոտոսյան.- Եր., Նահապետ, 2002. – 132 էջ:

Գիտական խմբագիր **Խ.Ե. Նազարյան**
խմբագիր աշխ. գիտ. դոկտ., պրոֆ.,
 Դ.Սարգսյան

Գրախոսներ **Մ.Մ. Թորոսյան**
 աշխ. գ. թ., դոցենտ
 Վ.Խ. Պողոսյան
 աշխ. գ. թ., դոցենտ

Գիրքը նվիրված է ՀՀ կյանքում առանձնահատուկ տեղ և դեր
ունեցող տարածաշրջաններից մեկի՝ Ծիրակի մարզի աշխար-
հագրական համայիր Վերլուծությանը: Փաստական հարուստ
տվյալների հիման վրա գրքուն տրված են մարզի
աշխարհագրական դիրքի, բնական պայմանների ու ռե-
սուրսների, բնակչության ու բնակավայրերի, տնտեսության
առանձին ճյուղերի, բնական և պատմաճարտարաբնութական
հուշարձանների հանառոտ բնութագրերը: Առանձին գլխաւ
ճննվում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման
հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների, ուսուցիչ-
ների, ուսանողների, աշխարհագետների, տնտեսագետների,
ինչպես նաև տարածաշրջանային հիմնախնդիրներով գրադարան
այլ մասնագետների համար:

Մ — 1805060000
0076.2002 2002 թ.

ԳՄԴ 65.9 (24) 04

ԵՐԿՈւ ԽՈՍՔ

Յուրաքանչյուր պետության տարածքում քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի կազմակերպումն ու գարգացումը որոշակիորեն կախված է նաև այդ երկրի պետական տարածքային կառուցվածքի բնույթից, տարածքային առանձին միավորների բնական, պատմական, սոցիալ-տնտեսական, քաղաքաաշխարհագրական և մի քանի այլ առանձնահատկություններից, գարգացման առկա միտումներից:

Յորելորդ տարին է, որ ՀՀ տարածքը բաժանված է 10 մարզի: Ցավոք, առ այսօր հրապարակի վրա բացակայում են ՀՀ առանձին մարզերի վերաբերյալ որոշակի ամփոփ ուսումնահիմություններ: Այդ բացը լրացնելու իմաստով ողջունելի նախաձեռնություն են հանդես բերել «Հայր» տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը և սույն գրքույթի հեղինակները՝ Երևանի պետական համալսարանի աշխատակիցներ, աշխ. գիտ. թեկնածուներ՝ Մ.Մանասյանը, Ա.Գրիգորյանը և Ա.Պոտոսյանը:

ՀՀ վարչատարածքային միավորների շարքում իր պատմական անցյալով ու ներկայով, աշխարհագրական դիրքով, բնաաշխարհագրական պայմանների առանձնահատկություններով, ՀՀ տնտեսության մեջ ունեցած տեղով ու դերով առանձնանում է Շիրակի մարզը, որի բնության, բնակչության և տնտեսության համայրային աշխարհագրական ուսումնահիմությանն է նվիրված սույն աշխատությունը:

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ Նազարյան

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը, սահմանները,
աշխարհագրական դիրքը

Բայաստանի Դանրապետության հյուսիսարևմտյան ճասում գտնվում է արգավանդ սևահողերով և բարձրենային մարգագետիններով հարուստ Շիրակի մարզը, որն ընդգրկում է Ախուրյան գետի վերնագավառը և միջին հոսանքի ձախափնյա ավազանը: Վարչականորեն նրա տարածքի մեջ մտնում են Ամասիայի, Աշոցքի, Ախուրյանի, Արթիկի և Անիի տարածաշրջանները: Տարածքի մեծությամբ (2684 կմ²) ԴՇում գրավում է միջին տեղ (6-րդն է), իսկ բնակչության թվով (361.8 հազ. մարդ) ամենախոշորներից է, զիջում է միայն Լոռու մարզին:

Շիրակը հանրապետության այն չորս մարզերից է, որոնք միաժամանակ սահմանակից են երկու տարբեր արտասահմանյան երկրի. արևմուտքում՝ Թուրքիային, հյուսիսում՝ Վրաստանին: Դարավից և հարավ-արևելքից մարզը սահմանակից է Արագածոտնի, իսկ արևելքից՝ Լոռու մարզերին: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Ախուրյան գետով և Եղնախաղի լեռներով: Աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից է նաև այն, որ Վրաստանի տարածքի՝ Շիրակին հարող պետական սահմանին մերձակա շրջանների ամբողջ բնակչությունը իմնականում հայեր են: Արևելքում սահմանագիծն անցնում է Զավախիքի և Փամբակի լեռնաշրաբաններով: Դարավային սահմանը պայմանական է. անցնում է Արագածի գագաթից Մաստարայի դարափուլով մինչև Թուրքիայի պետական սահման:

Շիրակն ունի եզրային դիրք: Չնայած դրան, նրա տրանսպորտաաշխարհագրական դիրքը բարենպաստ է: Կարևոր տարանցիկ նշանակություն ունեցող մարզերից է և Դայաստանի Դանրապետության Ծանապարհատրանսպորտային ցանցի գծագրության մեջ ունի հանգուցային նշանակություն: Շիրակի կենտրոնական և հարավային մասերը հատում են հանրապետության իմնական երկարուղային մայրուղին, որը միաժամանակ հարավանդրկովկասյան Թբիլիսի-Գյումրի-Երևան-Բաքու մայրուղու գլխավոր ուղեմասն

Ե: Մարզն Ախուրյան Երկաթուղային կայարանով կապ ունի Կարսի և Սարիղամիշի հետ։ Շիրակի կենտրոնում իրար են հանդիպում հանրապետության տարբեր ծայրերից եկող ավտոճանապարհները։ Նրա տարածքով են անցնում նաև Հայաստանը Վրաստանին և Թուրքիային կապող ավտոճանապարհային ցանցերը։

Ավանդության հաճածայն, պատճական Հայաստանի Շիրակ գավառի անունն առաջացել է հայերի առասպելական նախահոր՝ Հայկի բռներից մեկի Շարայի անունից։ Քանի որ Շարան գերազանց ախորժակի տեր էր և ուներ շատ զավակներ, նրան տվեցին այս բարեբեր Երկրամասը, որպեսզի և՛ ինքը կշտանա, և՛ իր բազմամարդ սերունդը կերակրի։ Դնում շատակեր մարդկանց զգուշացնում էին. «Եթե քո որկորը Շարայինն է, ապա մեր ամբարները Շիրակինը չեն» (2, էջ 298)։

Երկրաբանական կառուցվածքը, մակերևույթը և օգտակար հանածոները

Շիրակի մարզի աշխարհագրական դիրքը համընկնում է Միջերկրական ծովի լայնություններին, սակայն տեղական գործոնները եւկան փոփոխություններ են մտցրել այդ լայնություններին հատուկ ֆիզիկաաշխարհագրական պայմանների մեջ, որի պատճառը հիմնականում լեռնային ռելիեֆն է։

Պետք է նշել, որ Շիրակը, որպես ֆիզիկաաշխարհագրական ինքնուրույն միավոր, գրավում է ավելի ընդարձակ տարածք, նրա արևատական մասը՝ Կարսի սարահարթը, վարչականորեն գտնվում է Թուրքիայի տարածքում։

Այսպիսով, մարզի տարածքն իրենից ներկայացնում է մի ընդարձակ փակ գրգավորություն, որը բաց է միայն դեպի հարավ՝ Ախուրյանի հովիտը։

Շիրակի մարզի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները պայմանավորված են նրա տարածքի Երկրաբանական կառուցվածքով, ռելիեֆով և կլիմայով։

Հայկական լեռնաշխարհի հետ միասին մարզի տարածքն անցել է Երկրաբանական զարգացման բարդ ուղի։ Եռանդուն տեկտոնական շարժումները, որոնց շնորհիվ Երկրակեղեց ծալքավորվել ու կոտրատվել է, մեղի են ունեցել Երկրաբանական տարբեր ժանանակաշրջաններում։ Սակայն մարզի ռելիեֆի ծևավորնան գործում գլխավոր դերը պատկանում է ալպյան լեռնակազմությանը, երբ տարածքը բարձրացել է ծովի հատակից և թևակոխել ցանաքային գարգացման փուլ։ Հետագայում շարունակվել են վերընթաց տեկտոնական շարժումները և ծևավորվել են միջին

բարձրության լեռներ: Միաժամանակ մեծ չափեր են ընդունել էրողիան և տեղատարման երևույթները, բարձրությունները զգալիորեն քայլայվել են:

Նեզգենի ժամանակաշրջանի կեսերին տեղի են ունեցել հզոր լեռնակազմական պրոցեսներ: Տարածքի շրջակա լեռները դարձել են ավելի բարձր, հովիտները՝ ավելի խոր: Գոյանում են երկրակեղկի տարբեր ուղղություններով ձգվող բեկվածքներ: Դրանցից նշանավոր է կովկասյան ուղղությամբ ձգվող Սևան-Շիրակի տեկտոնական զոնան: Միջօրեականի ուղղությամբ խզման գծեր են առաջացել Զավախիքի լեռնավահան-Արագած-Մասիս գծում, Աշոցքում (32, էջ 188):

Եռանդուն տեկտոնական շարժումները ուղեկցվել են բուռն հրաբխականությամբ, որն ընդգրկել է մարզի ամբողջ տարածքը՝ սկսած Եղնախաղից, Աշոցքից մինչև Արագած: Հրաբխային արտավիժման ու ժայթքման նյութերը ծածկել են հսկայական տարածություններ իրենց տակ թաղելով ծալքավոր և ծալքաբեկորավոր լեռների ու խզման գծերի զգալի մասը դրանց վրա գոյացնելով հրաբխային լեռնավահաններ, առանձին լեռնազանգվածներ, սարահարթեր ու սարավանդեր: Այս եղանակով են գոյացել Արագած լեռնազանգվածը, Զավախիքի, Աշոցքի, Եղնախաղի լեռնավահանները, Աշոցքի ու Շիրակի սարահարթերը:

Այսպիսով, Շիրակի մարզի մակերևույթի հիմնական ծներն առաջացել են երկող ներծին ուժերի, ծալքավորման, բեկորատման և հրաբխային երևույթների ներգործությամբ, որոնք քայլայում, մասնատում, և ուղիեֆի բարձրությունների և ցածրությունների միջև եղած տարբերությունները:

Սակայն ներծին ուժերի գոյացրած ուղիեֆի ծներն իրենց առաջացման պահից մինչև մեր օրերը ենթարկվել են արտածին ուժերի՝ ջրի, քամու, ջերմության, հողմահարման և այլ գործոնների վերափոխող ազդեցությամբ, որոնք քայլայում, մասնատում, և վերջին հաշվով, ցածրացնում են լեռները, լցնում դժվագծները և փոքրացնում բարձրությունների միջև եղած տարբերությունները:

Երկրաբանական վաղ անցյալում մարզի տարածքն ունեցել է արևադարձային կլիմայական պայմաններ: Մոտ կես միլիոն տարի առաջ կլիման ցրտել է, ոչնչացել են ջերմասեր ու խոնավասեր բույսերը: Մի քանի փոկով հանդես եկած սաղցապատումների ներգործությամբ Արագածի, Զավախիքի, Եղնախաղի լեռների բարձր մասերում առաջացել են կրկնանման գոգավորություններ, տաշտականման լայն հովիտներ: Սաղցադաշտերի հալոցքային ջրերը լեռների լանջերին և ստորոտներին գոյացրել են մորենային ու սաղցադաշտագրաբերուկային կուտակումներ (34, էջ 299):

Այսպիսով, Շիրակի մարզի տարածքի ֆիզիկաաշխարհագրական ընդհանուր առանձնահատկությունը նրա երիտասարդ հասակն է, որն իր կնիքն է դրել մարզի լանոշաֆտային ողջ համալիրի վրա: Երիտասարդ են և՝ ոելիեֆը, և՝ գետային ցանցը, և՝ հողերը, և՝ բուսական ու կենդանական աշխարհը:

Երկրաբանական նման կառուցվածքով է պայմանավորված նաև մարզի ֆիզիկաաշխարհագրական մի այլ առանձնահատկություն՝ տարածքի համեմատաբար թույլ մասնատված պարզ ռելիեֆը, որտեղ գերակշռում են հարթ տարածությունները, որոնք իրենց ծագմամբ լճաւայրությալ կուտակումներ և հրաբխային արտավիժումներ են: Մարզը եզրավորող լեռնաշղթաները և լեռնավահանները, որոնց մեջ մասը նույնական հրաբխային ծագում ունի, ինչպես նաև ընդհանուր հարթության վրա բարձրացող առանձին կոները, շատ քիչ են խախտում ռելիեֆի համեմատաբար մեղմ բնույթը (21, էջ 320):

Շիրակի մակերևույթի առանձնահատկություններից է բացարձակ բարձրությունների մեջ՝ տատանումները՝ մինչև 3440 մ: Նրա ամենացածր կետը, որը գտնվում է հարավային մասում, ծովի մակարդակից բարձր է 1450 մ, իսկ ամենաբարձրը՝ Արագածի լեռնագագաթը՝ 4090 մ (հարավ-արևելքում):

Լայնակի ուղղությամբ ծգվող Շիրակի լեռնաշղթան մարզը բաժանում է 2 մասի: Լեռնաշղթայից հարավ՝ Ախուրյանի միջին հոսանքում, Շիրակի գոգավորությունն է, որի հատակում գտնվում է Շիրակի սարահարթը, իսկ նրանից հյուսիս՝ Ախուրյանի վերին հոսանքի շրջանում՝ Աշոցքի բարձրադիր սարահարթը:

Շիրակի գոգավորությունը նը նորագույն տեկտոնական շարժումների ներգործությամբ առաջացած մի ընդարձակ հջվածք է, որի հատակը երկրաբանական մոտ անցյալում լցվել է 300-350 մ հզորությամբ լճագետային և հրաբխային նյութերով: Այստեղ երկրակեղևի շարժումները շարունակվում են մինչև օրս: Դաճախակի տեղի ունեցող ուժգին երկրաշարժերից շատ են տուժել բնակավայրերը: 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերը մեծ ավերածություններ պատճառեցին Գյումրի քաղաքին և բազմաթիվ բնակավայրերի:

Շիրակի գոգավորությունն արևմուտքում միաձուվում է Կարսի սարահարթին: Գոգավորությունը հյուսիսից հարավ հատում է Ախուրյան գետի բավական լայն ու խոր կիրճը:

Շիրակի գոգավորության հատակը գրադեցնում է Շիրակի սարահարթը (դաշտը), որն ունի 1500-1600 մ բացարձակ բարձրություն: Այն դեպի հարավ-արևմուտք ցածրանում է և մոտավորապես Արագած երկաթուղային կայարանի մոտ միաձուվում Արարատյան դաշտին:

Չիրակի սարահարթի բնական սահմաններն են. արևելքում՝ Փամբակի, հյուսիսում՝ Չիրակի լեռնաշղթաները, հարավում և հարավ-արևելքում՝ Արագած լեռնազանգվածը ու Չարայի (Կողդար) լեռը և արևմուտքում՝ Կարսի սարահարթը:

Սարահարթի հարթ մակերևույթը գրեթե ամենուրեք ծածկված է հրաբխային փուլսր նստվածքներով՝ տուֆերով և լճագետային նստվածքներով։ Այդ պատճառով կենտրոնական մասը խիստ աղքատ է մակերևութային ջրերով։ Կարելի է ասել, որ սարահարթն իրենից ներկայացնում է մի ընդարձակ սակավաջուր տափաստան, քանի որ շրջակա լեռներից սկիզբ առնող շատ վտակներ, Ալուրյանին չհասած, համարյա ամբողջովին սպառվում են ներծծվելով հրաբխային փուլսր նյութերի մեջ։ Չնայած այս հանգամանքին անձևներից և բավական մեծ հզորության հասնող ծնածածկութից հողն այստեղ ստանում է բավարար խոնավություն տափաստանային բուսականության զարգացման համար։ Տիրապետող են արգավանդ սևահողերը։ Նկատենք, որ բուսերի վեգետացիայի հիմնական փուլում խոնավության լուրջ պակաս է զգացվում։ Այնպէս որ, ոռոգումը մշակաբույսերի աճնան համար անհրաժեշտություն է։

Չիրակի սարահարթը ծայրամասերում ունի դարավանդավորված, թույլ բլրոտ մակերևույթ, որը մեծ մասամբ կտրովված է սելավային հուներով։ Այս տեսակետից նրա հյուսիսարևելյան նասում աչքի է ընկնում Զաջուռի թեր հարթությունը, որի մակերևույթը մասնատված է տարբեր չափի երողին հովիտներով։ Նմանատիպ ռելիեֆով Արագածի նախալեռներում առանձնանում են նաև Մարալիկ-Պենզաշենի և Արթիկ-Մանթաշի դարատափերը, ինչպես նաև նույն մասերում աստիճանածև դասավորված լավային հոսքերից առաջացած մի շարք սարավանդակերպ հարթություններ (28, էջ 196):

Դարավ-արևմուտքում և հատկապես Գյումրի քաղաքի սահմաններում Չիրակի սարահարթը երողին ազդակների ներգործությամբ ծեռք է թքրել բլրոտ մակերևույթ։ Տեղ-տեղ տուֆերը տեղատարվել են, և երողին ծորակները միխրճվել են նրանց տակ փուլած լճային փուլսր շերտախմբի մեջ։ Դաշտի հարավային մասի մակերևույթը կազմված է անդեգիտա-քազալտային լավաներից և համարյա զուրկ է մակերևութային հոսքից։ Միակ գետը Կարկաչունն է, որն սկսվում է Արագածի բարձր մասից և աչքի է ընկնում հեղեղատային ռեժիմով։

Չիրակի դաշտից արևելք՝ Արագած լեռնազանգվածի և Փամբակի լեռնաշղթայի միջև, գտնվում է Չարայի լեռան (Կողդար) լավային ծածկությը։ Լեռն ունի 2505 մ բացարձակ բարձրություն և կազմված է հրաբխային լավաներից, խարամից և այլ փիրաբեկոր

նոյեմբերից: Արտահոսած լավաներն առաջացրել են թույլ ուսուցիկ, մոտ 25 կմ երկարությամբ և 10 կմ լայնությամբ սանդղած սարավանդ Այստեղից արոյունահանվում է հրաբխային ավագ:

Ծիրակի դաշտից դեպի հարավ և հարավ-արևելք ռելիեֆի բնույթը փոխվում է դառնալով համեմատաբար ավելի բարդ: Այստեղ Արագածի գաճաճաճն է. Ծիրակի մարզի սահմաններում գտնվում են Արագածի հյուսիսային, հյուսիսարևմտյան և մասամբ՝ արևմտյան լանջերը, ընդուած մինչև գագաթը: Արագածի լեռնագահանդի ռելիեֆը, որն անբողջապես պայմանավորված է հրաբխային արտավիժումներով, բաժանվում է երեք մասի՝ գագաթային, մերձգագաթային սարավանդի և փորրաթեք լանջերի: Մերձգագաթային սարավանդը մասնատված է Մանթաշ, Արթիկօդուր, Գեղածոր գետերի վերին հոսանքներով: Այդ գետերն իրենց տաշտածեն սարցարաշտային հովիտներով մասնատում են մերձգագաթային սարավանդը և հյուսիսային ու հյուսիսարևմտյան լանջերը՝ բաժանելով դրանք առանձին մասերի: Վերջիններիս մակերևույթը բարդացած է լանջերի վրա վեր բարձրացող մակարույթ կոներով և սրանց արտավիժած լավային լեզվակներով (21, էջ 322-323):

Արագածի գագաթային մասում՝ խառնարան-կրկեսում, մերձգագաթային սարավանդի վրա և տեղ-տեղ լանջերին, դիտվում են յորորդական սաղցապատճան հետքերը՝ կրկեսաննան գոզավորությունները, տրոգային հովիտները:


Ծիրակի սարահարքի հյուսիսային մասով՝ արևմուտքից արևելք, ուղղությամբ ձգվում է Ծիրակի լեռնաշղթան, որը տարածվում է Ախուրյանի հովտից մինչև Փամբակի հովիտ (Զիշկան գետի հովիտ): Ծիրակի լեռներն ունեն ծալքաթերուային կառուցվածք և առավելագույն բարձրության հասնում են Եզնասար գագաթում (2556 մ) Սրանք կազմված են լոցենի հրաբխածին շերտախնթից՝ պորֆիրիտներից, անդեգիտադացիտներից, կրաքարերից, տուֆաբրեկչիաններից: Ծիրակի լեռաշղթան աչքի է ընկնում հարավային գարիթափ լանջերով, որոնք խիստ քայլայված են: Գագաթային մասում մերկացած են ներժայուկ ապարները՝ լեռկ ժայռերի ծևով: Մեծ ուժգնության են հասնում մեխանիկական հողմահարումն ու սելավային երևույթները. Դյուսիսային լանջերը, ընդհակառակը, փորքաթեք են և հազիվ նկատելի Վերին Ախուրյանի գոզավորության կողմից: Դրանք ավելի թույլ են քայլայված, ճմակալված են ծածկված լեռնաճարդագետնային բուսականությամբ: Բացառություն է կազմում իլի գետի հովիտը, ուր կան ժայռային մերկացումներ. զարիթափ լանջեր. Այդ պատճառով էլ Ծիրակի լեռնաշղթան ունի մարզի ամենաբարդ և մասնատված ռելիեֆը:

Ախուրյան գետի վերին հոսանքի շրջանում, ֆիզիկաաշխարհագրական առանձին միավոր է Աշոցքի լեռնային գոզավորությու-

նը, որի հատակային մասում տարածվում է համանուն բարձրադիր սարահարթը:

Աշոցքի սարահարթը ծովի մակերևույթից ունի 1800-2200 մ բարձրություն: Սա հնուց հայտնի է որպես վարչատարածքային միավոր Աշոցք անունով:

Որպես ֆիզիկաաշխարհագրական առանձին միավոր՝ սրան բնորոշ են բարձրադիր մակերևույթը, կլիմայական խիստ պայմանները, բավարար խոնավությամբ ջրագրական խիտ ցանցը, մարգագետնային հարուստ բուսականությունը և այլ հատկանիշները, որոնք ցայտուն կերպով արտահայտում են քննարկվող շրջանի անհատականությունը և, դրանով իսկ եական այն տարրերությունները, որ այն ունի իրեն անմիջապես կից շրջանների նկատմամբ: Միաժամանակ, գյուղատնտեսության ներ մասնագիտացման, հեռանկարների տեսակետից սարահարթի կարևորագույն առանձնահատկությունը, կարելի է համարել՝ բնական պայմաններին համապատասխան, անասնապահության զարգացման նպատակահարնարությունը (28, էջ181):



Աշոցքի սարահարթը

Սարահարթը բաղկացած է փոքր բլրաբներով մինյանցից առանձնացող մի շարք գոգավորություններից: Բլրաբները մեծ մասամբ անդեգիտաբազալտային լավային հոսքերի առաջացրած պատվարներ են, որոնք փակելով գետակների ընթացքը, առանձին դեպքերում ստեղծել են լճային փոքր ավազաններ:

Զավախքի լեռներից, սառցադաշտային և ժամանակավոր ջրհոսքերի կողմից բերված նյութերից ծևավորվել է Ղազանչու թույլ թեր հարթավայրը, որը զբաղեցնում է սարահարթի արևելյան մասը:

Զրասացաղաշտային կուտակումները բազա են հանդիսացել պտղաբեր սևահողերի ծևավորման համար:

Աշոցքի սարահարթի առանձին տեղամասեր, որոնք ներկայացված են միջըեռային գոգավորությունների ծևով (Անասիայի, Զիրիանքովի և այլն), արտաքինից ծածկված են բազալտային լավաներով։ Դրաբխականության շնորհիվ արաջացել են կարծ տարածությամբ ծգված բազմաթիվ բլրաբներ, որոնց պատճառով սարահարթի հարավային մասում նակերևույթի հարթավայրային բնույթը փոխվել է։ Դրան նպաստել է նաև Ախուրյան գետը, որը սղոցելով անդեգիտաբազալտային լավային ծածկույթը, առաջացրել է մինչև 130 մ խորությամբ կիրճ։

Աշոցքի սարահարթի նակերևույթի ծևավորման գործում խոշոր դեր է կատարել հրաբխականությունը։ Յուրաքանչյուր անգամ արտավիժել են տարբեր բաղադրության լավային նյութեր (բազալտ, անդեգիտ, անդեգիտաբազալտ, տրախիտ, դացիտ և այլն) և նաև մասամբ սրողել հնագույն ուղիեֆքը (14, էջ 230):

Աշոցքի սարահարթը գրեթե բոլոր կողմերից շրջապատված է լեռներով։ Արևելքից նրան մերձենում են Զավախչի, արևմուտքից՝ Եղնախաղի, հարավից՝ Շիրակի, հյուսիսից՝ Չըլդըրի լեռները։

Զավախչի (Խոնավ կամ Մրին) լեռները սկսվում են Վրաստանից, Թրեալեթի լեռների կենտրոնական հատվածից և ծգվելով միջօրեականի ուղղությամբ՝ հարավային մասով մտնում են մարզի տարածքը և վերջանում Քարախաչի լեռնանցքում, որտեղով անցնում է Գյումրի-Տաշիր ավտոճանապարհը։ ՀՀ-ի սահմաններում այս լեռները ջրբաժան են Ախուրյան և Զորագետ գետերի միջև։

Զավախչի լեռներն ունեն հրաբխային ծագում և առաջացել են նեղենի ու անթրոպոգենի ակտիվ հրաբխականության հետևանքով։ Նրա ջրբաժան հատվածում բազմել են բազմաթիվ հանգած հրաբուխներ, որոնցից ամենաբարձրը Աշքասարն է՝ 3196 մ։ Լեռները կազմված են հրաբխային տարբեր ապարներից՝ բազալտներից, անդեգիտաբազալտներից, որոնց հողմահարված նյութերից ծևավորվել են Զավախչի լեռների հիմնալի սևահողերը։

Լեռների լանջերին՝ հրաբխային ապարների մեխանիկական հողմահարման հետևանքով, առաջացել են բազմաթիվ «քարային ծովեր» (քարացրոններ), որոնք հատկապես շատ են տարածված արևմտյան լանջերին։

Լեռներին բնորոշ են նաև չորրորդական սառցապատումների սառցաքերման հետքերը՝ սառցաղաշտային կրկեսները, տաշտակածները, մորենային կուտակումները։ Ցածրադիր լանջերին որոշ տարածում ունեն նաև սառցաղաշտահալոցքային ջրերի կողմից ստեղծված գոյացությունները։

Զավախքի լեռներից դեպի արևմուտք ծգվում են մի քանի ցածրադիր լեռնաբազուկներ, որոնցից ջրբաժան նշանակությամբ աչքի են ընկնում Մադաբափայի լեռները: Արանք տարածվում են դեպի Չըլդըրի լեռները և, չհասած դրանց, վերջանում մի թամբոցով, որով անցնում է Գյումրի-Ախալքալաք ավտոխոնուղին: Մադաբափայի լեռներն ունեն ջրբաժան նշանակություն Կուր և Արաքս գետերի ավազանների միջև: Այդ լեռներով Աշոցքի սարահարքը բաժանում են Ախալքալաքի սարահարքից:

Աշոցքի սարահարքի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում ավելի մեղմ գծագրությամբ աչքի են ընկնում Չըլդըրի լեռները, որոնք ծգվում են արևմուտքից արևելք և, աստիճանաբար ցածրանալով, ծովակում շրջակա հարթավայրերին:

Եղնախաղի լեռները ծգվում են Աշոցքի սարահարքի արևմտյան մասով՝ թուրքիայի և Վրաստանի սահմանով: Տարածվում են միջօրեականի ուղղությամբ՝ մոտ 60 կմ երկարությամբ: Առավելագույն բարձրության հասնում են Մեծ Եղնախաղ զագաթում (3045 մ), որտեղից սկիզբ է առնում Ախուրյանի աջակողմյան վտակներից Կարախան գետակը:

Լեռները կազմված են հրաբխային ապարներից, եղրանասերում տարածվում են լավքային ալիքավոր սարավանդներ:

Ընդհանուր առնամբ Եղնախաղի լեռներն աչքի են ընկնում խոր հովիտներով, ժայռային կատարմերով, տեղ-տեղ հանդիպող ընդարձակ հարթակներով, մակերևութային ջրերի առատությամբ: Բարձր լեռնային գոտին ունի ալպյան բնույթ: Դրաբխային գագաթները բողնում են մեկուսացված կղզիների տպավորություն (28, էջ 183):

Եղնախաղի լեռները չորրորդականում սառցապատվել են, որի հետևանքով առաջացել են ռելիեֆի սառցադաշտային ձևեր, սառցադաշտային կրկեսների հատակը ծածկված է շրջակա ժայռերից բափկած հողմահարված նյութերի գոյացություններով:

Սեյսմիկականությունը: Դայաստանի Դանրապետության տարածքում երկրաշարժային ակտիվ գոտի է հանդիսանում Շիրակի մարզը: Նրա հյուսիսը մտնում է 8-9, իսկ կենտրոնն ու հարավը՝ 9 և ավելի բար ուժգոնություն ունեցող երկրաշարժային գոտիներում: Նրա տարածքում և շրջակայքում երկրաշարժային հայտնի էակիկենտրոններ են հանդիսանում Գյումրին, Սպիտակը, Անին, Կարսը, Ախալքալաքը: Շիրակի մարզի տարածքին վնաս պատճառած երկրաշարժերից հայտնի են 1319 թ. Անիի, 1899 թ. Կարսի, 1868 թ. Գյումրիի, 1926 թ. Լենինականի, 1988 թ. Սպիտակի և այլն:

Շիրակում ուժգին երկրաշարժ տեղի է ունեցել 1319 թ., որը ավերակների է վերածել Դայաստանի հարուստ ու շքեղ մայրաքա-

ղաք Անհին: Ավերվել են շրջակայքի շատ գյուղեր, եղել են բազմաթիվ զոհեր:

Դաշնորդ խոշոր ավերիչ երկրաշարժը տեղի ունեցավ Լենինականում 1926 թ.: Այն մեծ ավերածություններ պատճառեց Լենինական քաղաքին և մոտակա մի շարք գյուղերի:

Եվ վերջապես, աղետալի երկրաշարժը ընդգրկեց ողջ Շիրակն ու Լոռին 1988 թ. դեկտեմբերի 7-ին: Ստորերկրյա ահեղ ցնցումներից հաշված վայրկյանների ընթացքում ավերակների կույտերի վերածվեց Գյումրին: Փատակների վերածվեցին մարզի բնակավայրերի զգալի մասը: Սպիտակի երկրաշարժին զոհ գնաց ավելի քան 25 հազ. մարդ: Տեղի ունեցան նաև երկրի մակերևույթի փոփոխություններ, գետնի մեջ առաջացան պատռվածքներ, լանջային փլվածքներ, սողանքներ:

Օգտակար հանածոները: Շիրակի մարզի տարածքի երկրաբանական կառուցվածքի բազմազանության շնորհիվ բազմազան են նաև ընդերքի հարստությունները: Դայաստանի Դանրապետությունում մարզն աչքի է ընկնում ոչ մետաղային օգտակար հանածոներով, հատկապես շինանյութերով, որոնց զգալի մասը ծևավորվել է երկրաբանական մոտ անցյալում տեղի ունեցած բուռն հրաբխականության հետևանքով: Սակայն քիչ չեն նաև այնպիսի շինանյութերը, որոնք առաջացել են հեռավոր անցյալում գոյություն ունեցած ծովերում, լճերում և անգամ ցամաքի վրա՝ տարբեր բնույթի նստվածքների կուտակումից:

Մարզում լայն տարածում ունեցող տուֆը, պենզան, բազալտը, անդեզիտը, կրաքարը, պեռլիտը, հրաբխային խարամն ու մոխրը, զանգան կավերը և շատ ուրիշ շինանյութեր մեծ կիրառություն ունեն ոչ միայն մեր հանրապետությունում, այլ նաև արտասահմանյան երկրներում:

Շինանյութերի մեջ առաջնակարգ դեր ունի տուֆը, որի պայմաններով հանրապետության մարզերի մեջ Շիրակը գրավում է առաջին տեղը:

Տուֆը հրաբխային ծագում ունի և շնորհիվ իր թեթևության, դիմացկունության, գեղեցիկ տեսքի ու շինարարական մի շարք լավագույն հատկանիշների, հիանալի շինանյութ է: Տուֆից են կառուցված մարզի պատմական հուշարձանների մեծ մասը, անգամ ամբողջ քաղաքներ ու գյուղեր: Մինչև օրս ճարտարապետներին ու գրոսաշրջիկներին զարմանք ու հիացմունք են պատճառուն տուֆակերտ Անիի ավերակների որմնանկարները:

Շիրակի մարզում առավել հայտնի են Արքիկի, Անիպեմզայի, Պեմզաշենի և Գյումրիի տուֆի հանքավայրերը:

Արթիկի տուֆի հանքավայրը հիշատակվում է դեռ վաղ անցյալից (III-IVդարեր): Տուֆերի ուսումնասիրությամբ 1850-ական թվականներին առաջին անգամ գրաղվել է գերմանացի գիտնական՝ Յ. Արիխը (1806-1886): Արթիկի հանքավայրը համարվել է նախկին ԽՍՀՄ-ի վարդագույն տուֆի խոչըրագույն հանքավայրը: Դանքադաշտի ընդհանուր տարածքը կազմում է 225 քառ.կմ, տուֆերի ծածկույթի միջին հաստությունը՝ 6-7 մետր, հետախուզված պաշարները՝ ավելի քան 65 մլն մ³: Տարածված են բազմերանգ տուֆերը՝ վարդագույն, սև, կարմիր: Տուֆի հանույթի և տեղափոխման աշխատանքները մերժենայցված են:

Անիպեմզայի տուֆի հանքավայրը պեմզային տուֆի ամենախոշոր հանքավայրն է: Հրաբխային գործունեության հետևանքով առաջացած 200 մ հաստությամբ լավային շերտը ստորին մասում կազմված է պեմզաներից, իսկ վերինը՝ դեղնագույն պեմզային տուֆերից: Արդյունավետ շերտի առավելագույն հաստությունը 20-25 մ է, որից 5-6 մ տուֆեր են: Պեմզան տուֆի է փոխանցվում աստիճանաբար: Որոշ տեղամասերում պեմզային տուֆերից վեր կան սև և կարմիր տուֆեր: Դանքաշերտի ընդհանուր տարածքը 1.8 կմ² է, հետախուզված պաշարները՝ 37 մլն.մ³, որից տուֆեր՝ 19 մլն.մ³: Դանքավայրի առաջին նկարագրությունը տվել է Յ. Արիխը: Նրա շահագործման տեխնիկական պայմանները բարենպաստ են և ապահովում են հանույթը բաց եղանակով:

Դանեմատարար փոքր են Պեմզաշենի և Գյումրիի տուֆի հանքավայրերը: Շիրակի մարզի տուֆի ընդհանուր պաշարները գնահատվում են մոտ 150 մլն մ³: Օգտագործվում են որպես շինարարական քար, երեսպատճան սալիկներ, տուֆաբլոկներ ստունալու համար:

Պեմզայի պաշարները Շիրակում գնահատվում են ավելի քան 100 մլն մ³: Պեմզան հրաբխային ծագմամբ, ծակոտկեն, թերև շինանյութ է, գույնը սպիտակ է, երբեմն նաև՝ դեղին, մոխրագույն: Պեմզան ոչ միայն հիանալի շինանյութ է, այլև լայնորեն կիրառվում է արդյունաբերության մի շարք ճյուղերում որպես հղկանյութ մետայյա և փայտյա իրեղը հղկելու համար, կաշվի, ռետինի, ապակու և ճենապակու արտադրության մեջ: Նրանից պատրաստում են ֆիլտրեր, ջերմամեկուսիչներ, թթվակայուն սարքեր: Շիրակի մարզում հայտնի են Անիպեմզայի և Պեմզաշենի, ինչպես նաև Այսուրյանի տարածաշրջանի պեմզայի հանքավայրերը:

Երիտասարդ հրաբխականության արդյունք են նաև բազալտ ու անդեզիտը, որոնք ավելի ամուր շինարարական քարեր են, քան տուֆը: Սրանք լայն տարածում ունեն Արագածի, Զավախ-քի, Եղնախաղի լեռնավահաններում, ինչպես նաև Շիրակի ու Աշոց-

քի սարահարթերի տարբեր տեղամասերում: Բազալտն ու անդեգիտը օգտագործվում են ոչ միայն որպես շինանյութ, այլև որպես արժեքավոր հումք՝ արդյունաբերության տարբեր բնագավառներում: Չուման եղանակով բազալտից ստանում են էլեկտրատեխնիկական, ջիմիական, շինարարական, ապակու արդյունաբերության մեջ օգտագործվող զանազան իրեր: Անդեգիտը կիրառվում է որպես թթվակայուն նյութ: Մարզի տարբեր շրջաններում կան պեղլիսի, օբսիդիանի, հրաբխային խարամի, ավազի հանքավայրեր, որոնք շահագործվում են և օգտագործվում հիմնականում մարզի սահմաններում (8, էջ 46):

Բազմապիսի կավերի ու դիատոմիտի պաշարներ կան մարզի տարբեր շրջաններում: Դայտնի են Ախուրյանի և Անիի կավերի, ինչպես նաև Ախուրյանի դիատոմիտի հանքավայրերը:

Ծիրակը հայտնի է նաև արդյունաբերական նշանակություն ունեցող կրաքարերի պաշարներով: Դայտնի են հատկապես Զաջուռի, մասամբ նաև Աշոցքի կրաքարերի հանքավայրերը:

Նստվածքային ծագման օգտակար հանածոներից հայտնի են գորշ ածխի պաշարները, որոնք կենտրոնացած են Զաջուռի հանքավայրում: Աննշան պաշարների և վատ որակի պատճառով դրանք ունեն միայն տեղական նշանակություն:

Արփի լճի գոգավորությունում խիստ բուսածածկույթի հետևանքով ձևավորվել են տորֆավայրեր: Տորֆը տեղական նշանակություն ունի և օգտագործվում է որպես պարարտանյութ:

Ծիրակը չափազանց աղքատ է մետաղային օգտակար հանածոներով: Այստեղով է անցնում Սևան-Անասիայի մետաղաբեր գոտին, որտեղ հանդիպում են քրոմի, ոսկու, մկնդեղի ոչ խոչը պաշարներ: Դրանց երևակումները հիմնականում դիտվում են Ծիրակի լեռներում:

Կ Լ Ի Մ Ա Ծ

Մարզի տարածքը հանդիսանում է կովկասյան համեմատաբար խոնավ և Առաջավոր Ասիայի լեռնաշխարհների չոր կլիմաների ազդեցության ոլորտ:

Ծիրակի կլիման բնորոշ է բացառիկ բազմազանությամբ, որի պատճառներն են ծովի մակերևուսից ունեցած բարձրությունների տարբերությունը, մթնոլորտի շրջանառությունը, տարածքի պարփակվածությունը բարձր լեռներով: Մարզի կլիման ընդիանուր առմամբ բարեխանում է, բայց աչքի է ընկույն ցամաքայնությամբ և ըստ բարձրության դաշտում է ավելի խիստ: Զները ցուրտ է, ծնառատ Անոանը մարզի հարավում շոգ է ու չոր, իսկ հյուսիսում՝ զով:

ՃԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՍԱԱԾՎԱՐ 1: 350 000

Մադարական և Վ

5

1

1

2

1

1

四

1

四

wp

214

95

1

1

1

1

8

1

7

1

1

1

Detailed description: This is a black and white map of Armenia, centered on the capital city of Yerevan. The map shows a dense network of roads connecting various towns and villages across the country. Major cities like Gyumri, Vanadzor, and Artik are visible. Numerous smaller settlements are marked with circles. Some roads are labeled with numbers such as 3042, 2992, and 4090. There are also several elevation markers, including '2273' and '1952'. The map is framed by a grid of letters and numbers at the bottom, likely representing a coordinate system. The overall layout is a topographic-style map.

Սարգում մթնոլորտի ընդհանուր շրջանառության մեջ տիրապետում է մթնոլորտային զանգվածների արևմտյան հոսքը: Ինչքան հաճախակի են օդային զանգվածների արևմտյան ներխուժումները, այնքան շատ են տեղումները:

Տարվա տաք կեսին, արեգակի բարձր դիրքի շնորհիվ, մարզի տարածքը գտնվում է արևադարձային օդային զանգվածների ոլորտում, և առաջանում են երաշտներ: Տարվա ցուրտ կեսին հրենոլորտի շրջանառությունը հիմնականում պայմանավորված է 2 գործոնով Ասուանույան օվկիանոսի վրա զարգացող ցիկլոնային գործունեությամբ և Կարսի սարահարթի վրա ծևավորվող անտիցիկլոնի ներգործությամբ, որի հետևանքով այստեղ սարնամանիքներն ուժեղանում են և խստանում (31, էջ 50):

Կլիմայագոյացնող տեղական գործոններից կարևորագոյնը մարզի բարդ ռելիեֆն է, լեռնաշղթամերի ու հովհանների ուղղությունը և բարձր տեղադիրքը: Իգուր չէ, որ Շիրակի մարզը համարվում է Հայաստանի Հանրապետության «ցրտի բևեռ»: Կլիմայական տարբերությունները փոխվում են ըստ վերընթաց գոտիականության: Մարզի կլիմայի վրա հատկապես մեծ ազդեցություն են բողնում եղային լեռնաշղթամերը, որոնք խոշնողութում են խոնավ օդային զանգվածների մուտքը Աշոցքի և Շիրակի սարահարթեր:

Զնուանը սառը օդը շաբաթներով կուտակվում է գոզավորություններում, որտեղ օդի ջերմաստիճանն ավելի ցածր է լինում, քան նրանց շրջակա նախալեռներում: Առաջանում է ջերմային շրջադասություն (ինվերսիա):

Տեղումների տեղաբաշխման գլխավոր օրինաչափությունն այն է, որ մարզում արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ դրանց քանակը նվազում է: Անհավասարաչափ է նաև տեղումների տարեկան բաշխումը: Ամենաշատ տեղումները թափվում են զարնանը, ամենաքիչը ամռանը:

Կլիմայական պայմաններով տարբերվում են Աշոցքի և Շիրակի սարահարթերը, նրանց եղային լեռները:

Աշոցքի սարահարթի կլիման, շնորհիվ մեծ բարձրությամբ, ցուրտ է ու խոնավ, ամառը զով է և կարճատև, ձմեռը՝ ցուրտ ու երկարատև: Ամառային ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը 17° -ից չի բարձրանում, հունվար ամսվա միջին ջերմաստիճանը $-9-12^{\circ}$ է: Սարահարթի ամենացուրտ վայրը՝ Պաղակն բնակավայրն է (2004 մ բարձրության վրա), որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը կազմում է -12.7° , իսկ բացարձակ նվազագույնը՝ -46° (ամենացածրը հաճախաբետությունում): Այստեղ ամռան տևողությունը քիչ է՝ 15-17 օր, իսկ 15° -ից բարձր օդի օրական միջին ջերմաստիճանների գումարը՝ ընդամենը 256° , որն, անշուշտ, շատ քիչ է գյու-

դատնտեսական մշակաբույսերի հասունացման համար (28, էջ 184-185):

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները տրված են աղյուսակ 1-ում, բացարձակ առավելագույն ջերմաստիճանները՝ աղյուսակ 2-ում, իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանները՝ աղյուսակ 3-ում (39, էջ 50-51, 91-92, 103):

Աղյուսակ 1

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները ($^{\circ}\text{C}$)

Օդ. կայամ	Ջերմ. մաքս.	Ամիսներ												Տարի
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Պաղակն (Շուրաբաղ)	2004	-12.7	-11.1	-6.6	1.2	7.8	10.7	13.9	14.1	10.1	4.5	-1.6	-9.2	1.8
Աշոցք	2009	-11.6	-10.9	-6.5	1.9	7.7	11.1	14.6	14.8	10.4	4.8	-1.2	-7.9	2.3
Անասիա	1876	-9.5	-7.9	-3.4	3.2	8.8	12.4	15.8	16.1	12.3	6.9	0.2	-6.2	4.1
Չագուտ (Ե/Կ)	1792	-8.4	-6.9	-2.3	4.5	9.9	13.3	16.7	17.0	13.3	7.7	0.9	-5.2	5.0
Այուսի 1	1529	-9.7	-7.3	-1.3	5.9	11.9	16.0	19.7	20.2	15.7	9.5	2.2	-4.9	6.5
Արրիկ	1750	-8.2	-6.3	-1.8	5.3	10.6	14.1	17.6	18.2	14.1	8.5	1.6	-4.6	5.8
Մարալիկ	1706	-8.7	-7.1	-2.6	5.2	10.1	13.3	17.1	17.9	13.9	8.3	1.4	-5.1	5.3
Գառնիովիտ	2166	-7.8	-6.7	-3.3	2.9	8.3	11.9	15.8	16.4	12.4	6.7	0.3	-4.7	4.4
Ալուագած(թ/Վ)	3229	-12.8	-12.5	-10.2	-5.0	-0.5	3.6	8.5	9.2	5.0	-0.7	-6.2	-10.5	-2.7

Եղնախաղի և Զավախսի լեռնավահաններում կլիմայական պայմաններն ավելի խիստ են. այստեղ թագավորում է մշտական ցուրտը: Ցածր ջերմաստիճանների պատճառով ծնածածկույթը պահպանվում է բավական երկար և վերանում միայն անոան երկրորդ կեսին:

Լեռներում օղը հագեցած է ջրային գոլորշիներով, ուստի հաճախակի են մառախլապատ եղանակները: Այդ տեսակետից առանձնապես աչքի են ընկնում Զավախսի լեռները: Այստեղ լեռների ամբողջ երկարությանը լանջերը հաճախ են ենթարկվում արևմտյան և արևելյան տարրեր ջերմության և խոնավության օյային գանգվածների ներխուժմանը: Վերջիններս լեռներն ի վեր, ջերմության անկման հետևանքով, առաջացնում են խիտ ու մուրա ամպեր, ապա՝ տեղումներ: Այդ պատճառով է, որ հաճախ Զավախսի լեռներին կոչում են Մթին կամ Խոնավ լեռներ:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Աղյուսակ 2
Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանները ($^{\circ}\text{C}$)

Օդ. կայան	Բաց. բարձր. (մ)	Ամիսներ												Տար.
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Պաղակն (Շուրաբաղ)	2004	5	8	12	20	23	27	31	30	29	25	18	10	31
Աշոցք	2009	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	31
Ամասիա	1876	7	9	17	22	26	28	32	32	31	27	17	11	32
Զաջուռ (Ե/կ)	1792	7	12	18	24	26	29	32	33	32	27	19	10	33
Գյումրի 2	1556	12	14	22	29	28	33	36	35	34	29	21	16	36
Հրեթիկ	1750	9	12	18	24	26	30	34	34	33	28	19	11	34
Սարալիկ	1706	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	36
Գառնիովիտ	2166	7	6	14	19	22	27	30	30	27	24	16	11	30
Արագած (բ/լ)	3229	2	5	7	11	10	16	21	21	20	15	8	4	21

Աղյուսակ 3
Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանները ($^{\circ}\text{C}$)

Օդ. կայան	Բաց. բարձր. (մ)	Ամիսներ												Տար.
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Պաղակն (Շուրաբաղ)	2004	-46	-42	-39	-30	-10	-5	-5	-3	-13	-20	-31	-40	-46
Ամասիա	1876	-36	-29	-26	-18	-7	-2	2	1	-8	-14	-22	-29	-36
Զաջուռ (Ե/կ)	1792	-35	-26	-24	-16	-7	-1	1	2	-6	-13	-20	-30	-35
Գյումրի 2	1556	-41	-35	-30	-16	-7	-3	0	-1	-8	-14	-24	-34	-41
Հրեթիկ	1750	-30	-25	-21	-15	-6	0	2	2	-6	-11	-19	-27	-30
Սարալիկ	1706	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-36
Գառնիովիտ	2166	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-33
Արագած(բ/լ)	3229	-39	-32	-29	-24	-17	-9	-5	-2	-13	-19	-28	-34	-39

Մքնոլորտային տեղումների բաշխումը նույնպես անհավասարաչափ է: Ամենաշատ տեղումներ (մոտ 900 մմ) լինում են Զավախիսի, ապա Եղնախաղի լեռներում: Բուն Աշոցքի սարահարթում տարեկան տեղումների քանակը կազմում է 600 մմ (Ամասիայում՝ 519, Պաղակնում՝ 574 մմ):

Տեղումների առավելագույնը թափվում է զարնան վերջին: Դա տարվա այն ժամանակաշրջանն է, երբ տարբեր բնույթի օդային ճակատների անցումների հետ կապված հաճախակի առաջանում են տեղատարափ անձրևներ:

Շիրակի սարահարթի կյիման ցամաքային է, խիստ, բայց առողջարար: Զմեռը ցուրտ է և ծնառատ, անառը բարեխառն՝ ոչ շատ տաք ու չոր: Սառնամանիքները սկսվում են նոյեմբերից, իսկ հաճախ հոկտեմբերի կեսերից և շարունակվում մինչև ապրիլ: Անսառնամանիք օրերի միջին թիվը Գյումրիում հասնում է 136-ի, իսկ Արթիկում 170-ի: Ցնածածկույթով օրերի թիվը Գյումրիում է մոտ 96, իսկ ծյան ամենամեծ հզորությունը փետրվար ամսին հասնում է 18-19 սն-ի (28, էջ 197):

Ցնուան ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը Գյումրիում -9.7° է: Ցածր ջերմաստիճանի հետևանքով սարահարթի բոլոր գետերը սառչում են: Ցնուանը սարահարթի կենտրոնական մասում, շնորհիվ շրջապատի լեռներից իջնող ցուրտ օդի կուտակման, ստեղծվում է բարձր ճնշում, որը սովորաբար ուղեկցվում է պարզ-կա եղանակներով: Նման պայմաններում նակերևույթը խիստ ցրտում է, առաջանում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա), ուստի բուն սարահարթում ծննանը լինում է ավելի ցուրտ, քան նախալեռներում: Այսպես, Գյումրիում, որն ունի 1557 մ բարձրություն, հունվար ամսվա միջին ջերմաստիճանը -9.7° է, Արթիկում (1750 մ) -8.2° , Զարզուռում (1750 մ) -7.8° : Այս երևույթը ագդում է նաև Գյումրիի և Արթիկի տարեկան միջին ջերմաստիճանների վրա: Գյումրիի տարեկան միջին ջերմաստիճանը 6.5° է, իսկ Արթիկինը՝ 5.8° : Թերևս դրանով պետք է բացատրել նաև անսառնամանիք օրերի տարբերությունը, որը Գյումրիում 34 օրով պակաս է, քան Արթիկում, չնայած վերջինս նրանից բարձր է մոտ 200 մետրով:

Այստեղ բավական ակտիվ են լեռնահովտային քամիները, որոնց ազդեցության շնորհիվ անառը, չնայած պարզ, արևոտ օրերին, համեմատաբար զով է: Դրանք կեսօրից հետո շրջակա լեռներից փչում են դեպի հարթություն, որին մեծապես նպաստում է ամռանը սարահարթի ուժեղ տաքացումը: Ճնշումը ընկնում է, լեռներից ցուրտ օդը ներխուժում է հարթություն, առաջացնում զովություն:

Անառը Շիրակում երկարատև է՝ 100օր: Անենատաք ամսվա միջին ջերմաստիճանը 20° է, իսկ բացարձակ առավելագույնը՝ 35° :

Տարեկան տեղումների միջին քանակը սարահարթում կազմում է 450 մմ: Դյուսիսում այն մի փոքր ավելանում է, իսկ հարավարևմուտքում՝ պակասում:

Մթնոլորտային տեղումների ամսական և տարեկան քանակը տրված է աղյուսակ 4-ում (40, էջ 84-85):

Աղյուսակ 4

Մթնոլորտային տեղումների ամսական և տարեկան քանակը

Օդ կայան	Բաց. բարձր.	Ամիսներ												Տ
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Պաղակն (Ծուլաբաղ)	2004	18	30	36	65	107	85	56	45	34	40	29	29	574
Աշոցք	2009	25	37	58	95	102	85	63	46	34	51	38	43	677
Ամսախա	1876	19	31	37	68	118	92	62	50	37	43	31	31	619
Զաջուռ (Ե/Կ)	1792	27	28	32	59	90	77	44	30	30	41	31	28	534
Արթիկ	1750	21	26	31	62	93	82	46	31	31	36	31	26	516
Սարալիկ	1706	19	25	37	65	76	85	68	35	23	44	36	22	535
Գառնիովիտ	2166	18	21	35	65	102	90	60	37	31	48	34	20	561
Արագած (Բ/Լ)	3229	80	88	109	138	142	100	78	49	45	74	92	70	1065

Ծիրակի մարզի կլիմայի վրա որոշակի ազդեցություն են բողնում նաև հարևան մարզերը: Դատկապես նշանակալից է Կարսի անտիցիլոնի ազդեցությունը, որի հետևանքով այստեղ ծննդանը խիստ ցրտում է: Կլիմայի այսպիսի պայմաններում, եթե ձյան ծածկույթը լինում է շատ բարակ, աշնանացանի ցանքատարածությունները ցրտահարվում են:

Անրանը երեխն Արարատյան դաշտից այստեղ են թափանցում չոր օդային զանգվածներ, որի հետևանքով խիստ իջնում է օդի հարաբերական խոնավությունը: Պարզ է, որ ամենից խիստ տուժում է բուսականությունը և վաղաժամ չորանում: Այստեղ առանց արիեստական ռոռզան անհնարին է գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերքատվությունը:

Կ լ ի մ ա յ ի վ ե ր ը ն թ ա ց գ ո տ ի ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը : Լեռնային ռելիեֆի պատճառով Ծիրակի մարզում կլիման բնորոշ է վերընթաց գոտիականությամբ: Յուրաքանչյուր կլիմայական գոտում բնորոշ է կլիմայի յուրահատուկ տիպը: Կլիմայական հիմնական տիպերը 4-ն են:

1 Չափավոր ցամաքային. ընդգրկում է մարզի ցածրադիր շոշանները՝ մինչև 1800 մ բարձրությունները: Չմեռը չափավոր ցուրտ է, բավական երկարատև, հաստատուն ծնածածկույթով: Անառը չափավոր տաք է: Յունվարյան միջին ջերմաստիճանը -6-10⁰ է, հուլիսյանը՝ 14⁰-ից 20⁰: Տարեկան տեղումների քանակը կազմում է 400-600 մմ, որը գյուղատնտեսական մշակաբույսերի

համար համարվում է անբավարար: Անսառնամանիք ժամանակաշրջանը տևում է 180-200 օր:

2.Բարեխառն լեռնային. Կլիմայի այս տիպն ընդգրկում է մարզի 1800-2400 մ բարձրություն ունեցող լեռնալանջերը և սարահարթերը: Չեղոր տևական է, ցուրտ, հաստատուն ծնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղեղերն ու ծնաբքերը: Անառը մեղմ է, համեմատաբար խոնավ: Անսառնանիք ժամանակաշրջանն ավելի կարծ է՝ 160-180 օր: Դույժայան միջին ջերմաստիճանը 12° -ից 17° է, հունվարյանը -8 - -11° : Տարեկան տեղումների քանակը 600-700 մմ է:

3 Ցուրտ լեռնային. Կլիմայի այս տիպը ծևավորվում է մարզի 2400-3400 մ բարձրություններում: Սա ընդգրկում է Զավախչի, Եղնախաղի, Շիրակի լեռների գագաթամերծ մասերը, ինչպես նաև Արագածի համապատասխան բարձրությունները: Չմոանը շատ են ծնաբքերը, մառախուղեղերը, գոյանում է հզոր ծնածածկույթ: Այս գոտում դիտվում է 7-8 տարածքի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -46° (*Պաղակն*): Անառը կարճատև է, զով: Հաճախ են անպրոպային եղանակները: Տարեկան տեղումների քանակը կազմում է 700-900 մմ: Անսառնամանիքային ժամանակաշրջանը կարծ է մինչև 70 օր: Այս գոտին նարգի անառային արոտավայրի հիմնական շրջանն է:

4.Չունամերծ (խիստ ցուրտ) լեռնային. Ծնդգրկում է Արագածի հյուսիսարևմտյան հատվածի գագաթամերծ գոտին՝ 3400-4090 մ բարձրությունները: Չմոան տևողությունը երկար է, ավելի քան 6 ամիս, ծնածածկույթի հզորությունը՝ 2 մ: Գարունը և աշունը կարճատև են, իսկ ամառ համարյա չի դիտվում: Պահպանվում են ծնաբքեր, բազմանյա ծնակուտեր, ֆիոնային փոքր կուտակումներ: Տարեկան տեղումների քանակը 900-1100 մմ է: Անսառնամանիքային ժամանակաշրջանը շատ կարծ է՝ 40 օրից պակաս: Մարգի ագրոկալիմայական բնութագիրը: Ազրովկիմայագիտությունը, որը կլիման ուսումնասիրում է գյուղատնտեսության տեսանկյունից, պարզում է, թե տվյալ վայրի կլիման ինչքանով է բարենպաստ կամ անբարենպաստ մշակաբույսերի բերքատվության և գյուղատնտեսական աշխատանքների վարի, ցանքի, ոռոգման, բերքահավաքի համար: Բայց հատուկ կարևորություն ունեն մթնոլորտային այն երևույթներն ու ցուցանիշները, որոնք ուղղակիորեն ազդում են գյուղատնտեսական արտադրության վրա: Վեսաբեր մթնոլորտային երևույթներից են փոքրիկը, երաշտը, տեղատարափ անձրևը, ցրտահարությունը, կարկտահարությունը, իսկ հիմնական ազրովկիմայական ցուցանիշներից են մթնոլորտային տեղումները վեգետացիայի շրջանում, ջերմապահով-

վածությունը, բույսերի հաճար արդյունավետ ջերմությունները (օդի 5° , 10° , 15° -ից բարձր ջերմությունների գումարը):

Գյուղատնտեսական կուլտուրաների պտղակալումը և հասունացումը կախված է հատկապես 10° -ից բարձր միջին օրական ջերմության տևողությունից: Այն փոխվում է ըստ բարձրության. մարզի ցածրադիր մասերում (1450-1500 մ) այն տևում է 60-75 օր, ըստ բարձրության՝ նվազում է:

Գյուղատնտեսական կուլտուրաներին հատկապես մեծ վնաս են պատճառում ցրտահարությունները, որոնք հաճախակի են և մարզի տարբեր մասերում դիտվում են տարբեր ժամկետներում: Գարնանային վերջին ցրտահարությունների վտանգը ցածրադիր շրջաններում առկա է մինչև ապրիլի երրորդ տասնօրյակը, իսկ լեռներն ի վեր դրանց վտանգը ավելի երկար է պահպանվում՝ բարձրլեռնային գոտում՝ մինչև անառվա կեսը: Սեպտեմբերին արդեն դիտվում են առաջին աշնանային ցրտահարությունները: Շիրակի սարահարթի ցածրադիր շրջաններում վաղ աշնանային ցրտահարությունները դիտվում են ավելի ուշ հոկտեմբերին:

Ցրտահարություններից բացի, մարզի տնտեսությանը մեծ վնաս է պատճառում նաև կարկտահարությունը, որը հատկապես դիտվում է ամռանը՝ բույսերի վեգետացիայի բուռն շրջանում: Ըստ բարձրության դրա տևողությունը ավելի երկար է և մեծ վնաս է պատճառում անասնապահությանը:

Խորշակներն ու երաշտը մարզում քիչ են դիտվում: Երբեմն Արարատյան դաշտից Ախուրյանի հովտով մարզի տարածք են թափանցում Իրանական սարահարթից փշող չոր ու շոգ օդային զանգվածները: Բարեբախտաբար դրանց ազդեցության ժամանակաշրջանը կարճատև է լինում:

Ն Ե Ր Ք Ի Ն Չ Ր Ե Ր Ը

Շիրակի մակերևութային հոսքը՝ կապված կլիմայի, երկրաբանական կառուցվածքի և ռելիեֆի առանձնահատկությունների հետ, հանդես է բերում գետային ցանցի խտության, ջրառատության, նակարդակի բավականին մեծ տարբերություններ: Գետային ցանցն ամբողջությամբ պատկանում է Արաքսի ավազանին և ունի մի քանի բնորոշ առանձնահատկություններ:

Գետային ցանցի խտությունը մարզի տարածքում տարբեր է: Այն թույլ է զարգացած: Նրա միջին խտության գործակիցը 0.44 կմ/³ է: Դա պայմանավորված է մարզի երկարանական կառուցվածքով: Տարածքի մեծ մասում տարածված են հրաբխային ծագման ապարները, որոնք ջրաբափանց են, ճեղքոտված: Դրա պատ-

ճառով է գետերի սննան մեջ զգալի տեղ է գրավում նաև ստորերկրյա սնումը:

Գետային ցանցի խտության տարբերություններ կան նաև Աշոցքի և Շիրակի սարահարթերում: Այսպես, տեղումների առատության և թույլ գոլորշացման հետևանքով ջրագրական ցանցի խտությունը Աշոցքում մեծ է, քան Շիրակում: Շիրակի սարահարթն աղքատ է հոսող ջրերով, քանի որ թափված տեղումներն արագորեն ներծծվում են անդեգիտաբազալտային ջրաբափանց ապարների մեջ և լրացնում ստորերկրյա ջրերի հորիզոնները:


Սյուս առանձնահատկություններից է գետերի լեռնային և հարթավայրային բնույթը: Բոլոր գետերը, բացառությամբ Ախուրյանի, սկիզբ են առնում բարձր լեռներից: Մրանք ունեն մեծ անկում, ջրակեներգետիկ մեծ ներուժ, հոսում են երթեմն նեղ, անանցանելի կիրճերով: Աշոցքի և Շիրակի սարահարթերում Ախուրյան գետն անցնում է հարթ, երթեմն ճահճապատ տարածքներով, ունի թույլ անկում, ջրի փոքր արագություն: Սարահարթերից դուրս գալիս գետը միսրճվում է լավային հաստույթների մեջ և ստեղծում 120-ից մինչև 200 մ խորությամբ կիրճեր:

Սարգի գետերն ունեն անկայուն ռեժիմ, մակարդակի զգալի տատանումներ: Գետերի մակարդակի բարձրացումը կապված է ծնհալքի և գարնանային անձրևների հետ: Դորդացումները դիտվում են առավելապես գարնանը (ապրիլ-հունիս), երկրորդ թույլ արտահայտվածը սեպտեմբեր-հոկտեմբերին: Նվազագույն մակարդակները դիտվում են ամռանը և ձնոանը: Ըստ բարձրության ծնհալքի տևողությունը երկարում է, տեղումների ջանակն ավելանում, իսկ գոլորշացումը նվազում: Դրան համապատասխան բարձր լեռնային շրջաններում հոսքի մոդուլն ավելի մեծ է, և գետային ցանցն ավելի խիտ:

Եշված օրինաչափությունների և առանձնահատկությունների բնույթը փոխվում է՝ կախված մարգի տարածքի տարբեր մասերի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկություններից ռելիեֆի ձևից ու բնույթից, ջրաերկրաբանական պայմաններից, կլիմայից, հողաբուսական ծածկույթից, ինչպես նաև մարդու տնտեսական ներգործության աստիճանից:

Ախուրյան գետը հանդիսանում է Շիրակի մարգի հիմնական ջրային զարկերակը: Արաջի ծախակողմյան վտակն է, ունի 186 կմ երկարություն: Գետի ջրհավաք ավազանը ՀՀ սահմաններում կազմում է 3600 կմ²: Վերին հոսանքում, մոտ 70 կմ երկարությամբ, գետն ամբողջովին հոսում է մարգի տարածքով, որից հետո, միջին և ստորին հոսանքներում սահմանային գետ է Թուրքիայի և ՀՀ-ի միջև.

Սկիզբ է առնում Արփի լճից (որը վերածված է ջրամբարի, և ոաճախ կոչում են Արփի լճի ջրամբար՝ 2025 մետր բարձրությունից հոսում է Վերին Ախուրյանի գոգավորության լայն հովտով դեպի արևելք հանդարտ, գալարուն ընթացքով և կտրուկ թեքվելով հարավ մտնում է լավային ծածկույթի մեջ՝ առաջացնելով նեղ (մինչև 130 մ) կանիոն։ Սարմաշեն գյուղի մոտ հովիտը նորից լայնանում է ու այն պահպանվում մինչև Ախուրյան երկարուղային կայարանը։ Այդ հատվածում գետը հոսում է լճապատվիալ հատվածքի միջով և առաջացնում մի քանի դարավանդ։ Կարս գետն իր մեջ ընդունելուց հետո Ախուրյանը դառնում է կրկնակի ջրառատ։ Այս ժեղից սկսած նա սրբնաց հոսանքով կտրում է հրաբխային ժայթումներից գոյացած լավային դաշտը և ավելի խորացնելով իր հունը (տեղ-տեղ մինչև 400 մ) ձգվում մինչև Արաքսին խառնվելը։



Ախուրյանի կանիոնը Ամասիայի մոտ

Ախուրյանի ընդիանուր անկումը 1073 մ է, միջին թեքությունը 5.8 մ յուրաքանչյուր կմ-ի հաշվով։

Ախուրյանի համակարգը կազմված է 227 գետ ու գետակներից որոնցից միայն 28-ը ունեն 10 կմ-ից ավելի երկարություն, սեկ գետ՝ 50 կմ-ից ավելի։

Ախուրյանի ամենախոշոր վտակը Կարս գետն է՝ 139 կմ երկարությամբ, որը պատմական Յայաստանում հայտնի էր Ախուրյան անունով (Ժամանակակից Ախուրյանի ստորին հոսանքի հետ միասին)։ Գետը հոսում է Թուրքիայի տարածքից, այնպես, ինչպես և

նյուս աջակողմյան վտակները՝ Կարախանը, Չորլուն, Տեկորը և այլն.

Ախուրյանի ծախակողմյան վտակները գտնվում են Դայաստանի Դանրապետության տարածքում և հիմնականում՝ Շիրակի նարզում. Դրանցից են Դալիգետը, Աշոցքը, Գյումրին, Կարկաչունը. Զրածորը և այլն: Ախուրյանի համակարգում կան նաև չոր հուներ, որոնք լցվում են ջրով նիայն գարնանային ու ամառային անձրևներից և հաճախ գործում են որպես սելավներ: Դրանցից համեմատաբար խոշոր են Սայհսյան, Դովիտ, Կարկաչուն (Վերին հոսանքը՝ Սանթաշ) վտակները: Արփի լիճ են բափկում Կարմրավանը, Եղնացուրը, Ծաղկուտը. Չորակերտը:

Ախուրյանն ունի խառը սնուցում: Սկիզբ առնելով Արփի լճի ջրամբարից՝ գետն իր հոսանքի ճանապարհին սնվում է նաև ծնիալքի անձրևների և ստորերկրյա ջրերով: Զնային սնուցման սկզբունքը է ապրիլից և իր առավելագույնին հասնում մայիսին: Անձուային սնուցման գերակշռությունը է գարնանը և ամռանը. առանձին տարիներին անձրևները մեծ չափով բարձրացնում են գետի մակարդակը: Ստորերկրյա սննման բաժինը կազմում է 48%, որի արժեքը շանօքարյա հավասար է ծնաանձրևնայիննին: Սա գործում է մշտակես, շայց կարևոր նշանակություն է ստանում ծմբանը և ամառվա սակավածուր շրջանում: Այժմ Ախուրյանի հոսքը կարգավորված է Արփի լիճի և Ախուրյանի ջրամբարներով, մեծացել է նրա ոռոգիչ էներգետիկ նշանակությունը:

Ախուրյանն ամենամեծ ջրառատության է հասնում գարնանը: Տարվա այդ ժամանակաշրջանում այն տալիս է տարեկան հոսքի մռատ կեսը. Ամենասակավածուր շրջանը ծմեռն է, որը տալիս է տարեկան հոսքի մոտ 15%-ը: Դաճախակի են դիտվում ամառային վարարումներ: Ախուրյանի տարեկան միջին ծախսը կապս գյուղի մոտ կազմում է 8.5, իսկ Դայկածորի դիտակետում՝ 30.7 մ³/վրկ (20, էջ 65):

Շիրակի մարզի գետերի հիմնական ցուցանիշները բերված են աղյուսակ 5-ում (35, էջ 36-37, 52-53):

Այսպիսով, Ախուրյանը հանրապետության ամենաջրառատ գետերից մեկն է. նրա տարեկան հոսքի ծավալը կազմում է մոտ 1 մ³/րդ մ՝

Զնուանը գետում դիտվում են սառցային տարբեր երևույթներ: Այն սառցակալվում է: Գետն աչքի է ընկնում հատկապես սղինային նրանույթներով:

Մեծ է Ախուրյանի տնտեսական նշանակությունը: Նրա ջրերն օտագործվում են ոռոգման, էներգիայի ստացման, բնակավայրերի ու արդյունաբերական ծեռնարկությունների ջրամատակարարման

համար՝ Նրա ջուրը բավարար է Ծիրակի գոգավորության հողերը ուսուցելու համար։ Այդ նպատակով Ախուրյանից կառուցվեց Ծիրակի ջրանցքը որը շահագործվեց 1925 թվականին։ Զրանցքը սկսվում է Կապս գյուղից ներքև որտեղ գետի ջուրը հոսելով հատուկ թունելի նիջով դուրս է զալիս ծախափնյա հարթավայրը։ Զրանցքն ունի 30 կմ երկարություն և ոռոգում է մոտ 12 հազ. հա հողատարածք։ Թունելի երկարությունը 2.6 կմ է, որի վերջնամասում կառուցված է Գյումրիի ջրային էլեկտրակայանը (ԼենԴէԿ)։ Այն լրիվ հզորությամբ գործում էր ցանքերի ոռոգումից հետո (ոռոգման շրջանում աշխատում էր միայն ջրի ավելցուկ լինելու դեպքում)։ Զրային էլեկտրակայանը շահագործվեց 1928 թ., որի ընդհանուր հզորությունը 5 3 հազ կվառ է։

Աղյուսակ 5
Ծիրակի մարզի գետերի հիմնական ցուցանիշները

Գետ	Զրիավաք ավազանի մակերեսը (կմ ²)	Զրիավաք ավազանի միջին բարձրությունը (մ)	Միջին տարեկան ծախաց. մ ³ /վրկ (դիտակետը)
Ախուրյան	9670.0	2010	30.7(Դայկածոր)
Կարմրավան	35.0	2550	0.37(Կարմրավան)
Ն. Հնագուր (Չիվինի)	83.0	2470	0.68(Ալվար)
Ծաղկուտ (Էլարգետ)	19.3	2310	0.27(Ծաղկուտ)
Զորակերտ (Բալիխի)	95.5	2220	0.24(Զորակերտ)
Դալիզետ	116.0	2340	0.57(Թազագյուղ)
Մշոցք (Ղուկասյան)	197.0	2250	3.75(Կրասար)
Զրածոր (Իլիզետ)	66.0	1980	0.48(Զրածոր)
Կարկաչուն (Քառանգու)	1036.5	2790	1.27(Ղարիբքանյան)
Գաղոնովիտ	12.0	2640	-
Հաջոռո	39.6	2000	-

Ախուրյան գետի ծախակողմյան վտակներից է Կարկաչունը։ Սա ունի 55 կմ երկարություն և սկիզբ է առնում Արագածի արևմտյան լանջից, 3150 մ բարձրությունից։ Կերին հոսանքում կոչվում է Մանթաշ, որը Արթիկուր վտակն ընդունելուց հետո անվանվում է Կարկաչուն (Քառանգու)։ Գետը գյուղի մոտ այն թափվում է Ախուրյանի մեջ։

Կերին հոսանքում Կարկաչունը հոսում է տրոգային հովտով, որն ստորին հարկում դառնում է V-աձև։ Գետակը խառը սնման է,

հորդանում է մայիս-հունիսին: Տարեկան միջին ծախսը 1.27 մ³/վրկ է, հոսքը՝ 40 մլն. մ³ Գետի վերին հոսանքում կառուցվել է Սանթաշի ջրամբարը: Կարկաչունի վտակներից են Գառնիովիտը, Արթիկուուրը, Զաջուուրը, Գեղաձորը: Գառնիովիտի վերին հոսանքում կառուցվել է Սառնաղբյուրի ջրամբարը:

Ս Ե Լ Ա Վ Ն Ե Ր Ը Շիրակի մարզում սելավները տարածված են ոիննականում: Շիրակի լեռնաշղթայի հարավային լանջերին: Դրանք հիմնականում ջրաբարային տիպի են: Սելավաբեր են Ախուրյան գետի Գյումրիգետ, Դացիկ, Զաջուր, Սուսայելյան, Կանը, Յովիտ Արթիկուր վտակները. որոնք որպես սելավներ գործում են միայն ամառային հորդառատ. հաճախ կարկտախառն անձրևներից հետո. Դատկապես հայտնի են Գյումրիգետ. Զաջուրգետ և Արթիկուր հուներով անցնող սելավները, որոնք հաճախ պատճառում են նեծ ավերածություններ (20. էջ 119):

Լ Ծ Ե Ր Ը, Չ Ր Ա Մ Բ Ա Ր Ը Ե Ր Ը Շիրակի մարզը աղքատ է լճերով Դամեմատարար խոշոր լիճը Արփին է: Կան մի քանի շատ փոքր լճեր՝ լեռների գագաթամերձ ջրամբներում:

Արփի լիճը հանրապետությունում իր չափերով զբաղեցնում է երկրորդ տեղը Սևանա լճից հետո: Գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում Վերին Ախուրյանի կամ Աշոցքի ճահճապատ գոգավորության արևմտյան մասում՝ 2025 մ բարձրության վրա: Ըստ ծագման լիճը տեկտոնա-արգելափակման է: Այն առաջացել է պլիո-պլեյստոցենում տեկտոնական հովիտը լավաներով արգելափակվելու հետևանքով:

Լիջ ելքի մոտ 1949-51 թթ. կառուցվել է 15 մետր բարձրության երկարետոնե ամբարտակ. և այն վերածվել է արհեստական ջրամբարի: Նրա մակերեսը 4.5-ից ներկայունս հասել է 22 քառ կմ ի. առավելագույն խորությունը՝ 8 մ է, միջինը 4.2 մ: Լիջ մակերեսի մեծացնան հետևանքով այժմ ոչ միայն պակասել են նրա շրջապատի ճակիճները, այլև կուտակվող զարնանային ջրերը հնարավորություն են տալիս զգալիորեն կարգավորել Ախուրյան գետի ռեժիմը՝ սեծացնելով նրա ռոռոգիչ և էներգետիկ նշանակությունը:

Արփի լիջի ջրամբարի երկարությունը 7.3 կմ է, լայնությունը՝ 4.3 կմ, ջրի ծավալը՝ 90-100 մլն. մ³, ջրհավաք ավագանը 220 կմ² կառուցվել են Բայանդուրի, Ախուրիկի, Ոսկեհասկի, Գետքի, Կապաչի ջրհան կայանները, որոնց միջոցով ջրամբարի և Ախուրյան գետի ջրերը մղվում են Շիրակի մշակովի տարածքները (20. էջ 128):

Լիճը ծմբանը սաղցապատվում է: Դարուստ է ծկներով. համդիպում են ծածան, խրամուլի, ծիածուկ: Թոշուններից հայտնի է ռավալուսնը, 4-5 տեսակի բաղեր, չվող թռչուններ:

Անձրկի, ծնհալքի և փոքր գետերի ջրերը կուտակելու և ռողդելի հողային տարածություններն ավելացնելու նպատակով Շիրակի մարզում ստեղծվել են մի քանի այլ խոշոր ջրամբարներ: Ջրամբարների հիմնական ցուցանիշները տրված են աղյուսակ 6-ում:

Դրանցից ամենախոշորը **Ախուրյանի ջրամբարն** է, որը կառուցվել է Ախուրյան գետի միջին հոսանքում՝ Թուրքիայի հետ համատեղ, 1976-1981 թթ.: Գտնվում է Ախուրյանի և Անիի տարածաշրջաններում: Ջրամբարի մակերեսը կազմում է 41.8 կմ^2 , որից 16.8° Շիրակի մարզի տարածքում: Ջրաղեցնում է մարզի երազգավորս, Նորաբեր, Շիրակավան, Խսահակյան, Աղին, Զրափի գյուղերի հայսկին գյուղատեղերը:

Աղյուսակ 6
Շիրակի մարզի ջրամբարների հիմնական ցուցանիշները

Ջրամբար	Գետ	Ծահագործման տարին	Ջրամբարի մակերեսը (կմ^2)	Ջրամբարի ծավալը (մ^3)	
				լրիվ	օգտակար
Ախուրյանի	Ախուրյան	1982	41.8	525	510
Արփի լճի	Արփի լիճ	1951	22	100	90
Կառնուտի	Կառնուտ	1975	2.15	22.6	21.8
Սանթաշի	Սանթաշ	1967	0.764	8.2	7.9
Կարուաքարի	Կարկաչուն	1968	0.86	5.0	4.7
Սառնաղբյուրի	Գառնիովիտ	1972	0.56	4.85	4.55
Զաջուռի	Զաջուռ	1974	0.17	0.29	0.28
Թավշուտի	Դալիգետ	1987	0.60	6.0	5.75

Ջրամբարի ընդհանուր ծավալը կազմում է 525, օգտակարը 510 մ^3 . մ^3 ջրբողունակությունը՝ $70 \text{ մ}^3/\text{վրկ}$: Իր ծավալով ամենախոշոր ջրամբարն է մեր հանրապետությունում, սակայն նրա միայն մի մասն է մեր հանրապետության տարածքում:

Ջրամբարի չափերը մեծ են. Երկարությունը՝ 20, միջին լայնությունը՝ 2.2, առավելագույնը՝ 5.5 կմ , խորությունը՝ մինչև 46 մ : Պատվարի բարձրությունը 59 մետր է, երկարությունը՝ 220 մետր (7, տ 51-55):

Ջրամբարը ծնօանը սաղցակալվում է: Ոռոգում է 27 հազ. հա հողատարածություն Բաղրամյանի, Թալինի, Անիի, Արմավիրի տարածաշրջաններում:

Կառնուտի ջրամբարը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում՝ Կառնուտ գետի (հեղեղատի) վրա: Շահագործվել է 1975 թ.-ին: Պատվարը հողային է, ունի 34.6 մ բարձրություն: Ընդհանուր ծավալը 22.6 մլն. մ³ է, օգտակարը՝ 21.8, մակերեսը՝ 215 հեկտար: Սնվում է Շիրակի ջրանցքից և Կառնուտի հեղեղատից: Զնոպն սառցակալվում է: Զրերն օգտագործում են ոռոգման հանր: Այգաբացի ջրանցքի, Շիրակի ջրանցքի 15-րդ բաժանարարի և Արթիկի ջրհան կայանի միջոցով ոռոգվում է 7000 հա հողատարածք (7, էջ 66):

Ջաջուռի ջրամբարը հանդիսանում է Ջաջուռ գետի սելավագրերի կարգավորիչը: Գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի Ջաջուռ գետի մոտ: Ջրամբարը սնվում է ծճհալքային և անձրևային ջրերից: Զրի ընդհանուր ծավալը 290 հազ. մ³ է, օգտակարը՝ 280 հազ.. Պատվարը հողային է, ջրի հայելու մակերեսը կազմում է 17 հեկտար:

Ջաջուռի ջրամբարը նպաստում է Կառնուտի ջրամբարի ցանանը: Շահագործվել է 1974 թվականին (7, էջ 96):

Թավշուտի ջրամբարը շահագործվել է 1987 թ.-ին: Գտնվում է Աշոցքի տարածաշրջանի Բավրա գյուղի մոտ: Չևավորվում է Ջավախիքի լեռներից սկիզբ առնող Ղալիգետի և նրա ծախսափնյա վտակ Լատիֆի ջրերից:


Ջրամբարի ընդհանուր ծավալը 6 մլն մ³ է, իսկ օգտակարը՝ 5 75. Պատվարն ունի 36 մ բարձրություն և 545 մ երկարություն: Զրի հայելու մակերեսը կազմում է 60 հեկտար:

Թավշուտի ջրամբարը հնարավորություն է տալիս ոռոգել չորակա Ղազանչի, Սիզավետ, Թավշուտ և Սեպասար գյուղերի 1500 հեկտար հողատարածք (7, էջ 71):

Մանթաշի ջրամբարը գտնվում է Արթիկի տարածաշրջանում. Արագածի հյուսիսարևմտյան լանջին. Մանթաշ գետի վրա (Կարէաչուն գետի վերին հոսանքում). Արթիկ քաղաքից 14 կմ հեռավորության վրա: Ջրամբարը գտնվում է ծովի մակերևույթից 2550 մ բարձրության վրա:

Մանթաշ գետակի հոսքի կարգավորման նպատակն էր լուծել տարածաշրջանի ոռոգելի հողերի ջրապահովվածությունը, ինչպես նաև բնակավայրերի ջրամատակարարման հարցը:

Ջրամբարի պատվարը քարալիցքային է՝ երկաթբետոնե պաստառով, ունի 29 մ բարձրություն և մոտ 400 մ երկարություն: Հնդիանուր ծավալը կազմում է 8.2, իսկ օգտակարը՝ 7.9 մլն մ³. Զրի հայելու մակերեսը՝ 76.9 հա: Ջրամբարի երկարությունը 2.8 կմ է, խորությունը՝ 25 մ:



Մանթաշի ջրամբարը

Մանթաշի ջրամբարի ջրերն օգտագործվում են տարածաշրջանի 3700 հա հողերի ռողման, բնակավայրերի ջրամատակարաման, ինչպես նաև բարձր լեռնային արոտավայրերի ջրարդիացման նպատակով։ Տարեկան բաց է թողնվում 25 մլն մ³ ջուր որից 12-ը՝ ռողման, իսկ 13-ը՝ բնակավայրերի ջրամատակարաման համար։ Ջրամբարի էկոլոգիական վիճակը բարելավված սուր կարիք է զգում (7. էջ 70):

Ջրամբարը շահագործվել է 1967 թ.-ին։

Վարդաքարի (Դոռոմի) ջրամբարը գտնվում է Արթիկի տարածաշրջանում Կարկաչուն գետակի ստորին հոսանքում Վարդաքար գյուղի մոտ։ Ջրամբարը սնում է հիմնականում Կարկաչուն գետակը և նախատեսված է Լուսակերտ, Սարատակ, Ջովտաշեն, Վարդաքար և Դոռոմ գյուղերի 1120 հա հողատարածությունը ռողոգելու համար։

Սկզբում կառուցվել է 14.1 մ բարձրության պատվար, և ջրամբարն ունեցել է 3.61 մլն մ³ ծավալ։ Զուրը ռողոգելի տարածքներ տեղափոխվել է 9.6 կմ երկարություն ունեցող ջրանցքով։ Սկզբում ջրամբարը կոչվել է Դոռոմի։

Դետագայում, 1967-68 թթ. կազմված նախագծով, ջրամբարի պատվարը բարձրացվեց, ռողոգովի հողատարածություններն ավելացան 300 հա-ով։ Վերակազմված ջրամբարը կոչվեց Վարդաքար։

Զրամբարի պատվարը հողային է և ունի 15.5 մ բարձրություն և 594 մ երկարություն: Ընդհանուր ծավալը 5, իսկ օգտակարը՝ 4.7 մլն մ³ է: Զրի հայելին զքաղեցնում է 86 հա մակերես:

Զրամբարը շահագործվել է 1968 թ.

Սառնաղբյուրի ջրամբարը գտնվում է Անիի տարածաշրջանում: Սառնաղբյուր գյուղից 1 կմ հյուսիս՝ Արագածի արևմտյան լանջին, Գառնիովիտ (Մեծ ծորի ջուր) գետակի միջին հոսանքում:

Զրամբարի պատվարը խճակովճային է՝ կավային միջուկով, ունի 29 մ բարձրություն, 188 մ երկարություն: Ընդհանուր ծավալը 4.85 մլն. մ³ է, օգտակարը 4.55: Զրամբարի երկարությունը 3.2 կմ է՝ լայնությունը՝ մինչև 160 մ: Տարեկան բաց է թողնվում մոտ 5 մլն մ³ ջուր, որը որոգում է Զորակապ, Մարալիկ, Տուֆաշեն, Դայկասար և Շառնաղբյուր բնակավայրերի մոտ 900 հա հողատարածք:

Զրամբարը շահագործվել է 1972 թ.:

Կապսի ջրամբար: Մարզի գյուղատնտեսության ընդհանուր վերելքի համար մեծ նշանակություն ունեցան Շիրակի ջրանցքի, Արփիլիճի և Կառնուտի ջրամբարների կառուցումը՝ Ախուրյան գետի ջրերի հաշվին: Սակայն այս գոտում դեռևս զգացվում է ոռոգելի ջրի պակաս, որը լրացնելու նպատակով կառուցվում է Կապսի ջրամբարը: Այս գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի Կապս գյուղից 2 կմ հյուսիս-արևելք՝ Ախուրյան գետի վերին հոսանքում: Մնումը հիմնականում Ախուրյան գետից է, սակայն ջրամբարից բաց թողնվող ջրերին կիսառնվեն նաև Գյումրի քաղաքի և Կարկաչուն գետի ավելցուկային ջրերը:

Զրամբարի ընդհանուր ծավալը կազմելու է 90 մլն մ³, օգտակարը՝ 84, ջրի հայելին ունենալու է 430 հա մակերես: Պատվարը քարալիցքային է, ունի 90 մ բարձրություն և 1470 մ երկարություն, կատարային մասում՝ 12 մ լայնություն:

Կապսի ջրամբարի շինարարությունը չի պարտվել, և շահագործման համար զգալի աշխատանքներ են պահանջվում:

Աղբյուր է ըստ Հիրակի մարզի աղբյուրները կարևոր դեր են խաղում հանրապետության ջրային պաշարների մեջ: Նրանց տարածական բաշխումը պայմանավորված է ջրաերկրաբանական կառուցվածքով, կլիմայական պայմաններով և ռելիեֆի առանձնահատկություններով:

Աղբյուրներով ամենահարուստը Աշոցք գետակի ավագանն է, որտեղ աղբյուրները ցրված չեն և կենտրոնացած են փոքր տարածության վրա: Այստեղ են գտնվում Ղազանչի, Զույգաղբյուրի, Աշոցքի և Սեպասարի աղբյուրները, որոնք միասին ունեն 1894 լ/վրկ գումարային ելք: Սրանք բոլորն են գտնվում են Աշոցք գետակի հովտում, 2000 մ բարձրության վրա, միմյանցից ոչ հեռու: Աղբյուրների

ջրերի ջերմաստիճանը ցածր է $5\text{--}6^{\circ}$, հանքայնացումը նույնպես ցածր է (20, էջ 156):

Աղբյուրների մյուս խումբը գտնվում է Կարկաչուն գետակի ավազանում:

Չիրակի մարզում հայտնի են նաև արտեզյան ջրերը: Սրանք տարածված են նստվածքային շերտախմբերի այն հորիզոններում, որոնք ընկած են կավային ջրամերժ շերտերի միջև: Դայտնի է Ախուրյանի արտեզյան ավազանը, որը գտնվում է գետի միջին հոսանքներում, 1450-1500 մ բարձրության վրա: Այստեղ տարածված են ինչպես քաղցրահամ, այնպես էլ հանքային ջրերը: Ավազանը սնվում է Արագածի զանգվածի հյուսիսարևմտյան լանջերից, ինչպես նաև Չիրակի ու Փամբակի լեռներում ներծծված ջրերից: Արտեզյան ջրատար հորիզոններից բարձր շերտերում կան նաև գրունտային ջրերի պաշարներ: Արտեզյան ավազանի ստորերկյա ներհոսքը, այսինքն ջրի դինամիկ պաշարները ծևափորվում են Ախուրյան գետի ավազանից՝ 1.3, իսկ Կարկաչունի ավազանից՝ 7.29 մ³/վրկ: Այստեղ կազմավորվող խորքային ջրերի քանակը գնահատվում է 322 մլն. մ³ (20, էջ 154):

Դա նքայլ ջրերը ներկայացված են տարբեր քիմիական բաղադրությամբ:

Դիդրոկարբոնատաքլորիդային ջրերը բնորոշ են 0.8-8.0 գ/լ ընդհանուր հանքայնացմամբ: Սրանք սառն աղբյուրներ են, և դրանց մեջ մտնում են Գյումրիի (հարավային տիպ) աղբյուրները, որոնք տեղադրված են լճաալյուվիհալ շերտախմբերի արտեզյան ավազաններում: Այս աղբյուրները հաճախ կոչվում են Ախուրյան ընդհանուր անունով և գտնվում են Գյումրիից հարավ Ախուրիկ, Գետք, Բայանդուր, Երազգավորս, Նորաբեր, Գուսանագյուղ, Չիրակավան գյուղերի մոտ: Այս ջրերի քիմիական բաղադրությունը խիստ բազմազան է՝ հիդրոկարբոնատային, նատրիումային, սոլֆատային-նատրիումային: Ջրերն ունեն մեծ հանքայնացում, դրանց մեջ լուծված են ծծմբաջրածին և ածխաթթու գազ: Սրանք մտնում են հետախուզված, բայց մասամբ օգտագործվող հանքային ջրերի խմբի մեջ (20, էջ 170):

Դիդրոկարբոնատային ջրերն ունեն 0.3-6.8 գ/լ ընդհանուր հանքայնացում: Այստեղ են դասվում Արագածի, Չիրակի հանքային ջրերը (հյուսիսային տիպ): Սրանք այն ջրերն են, որոնք բխում են նեղուն-անթրոպոգեն հասակի լավային ապարներից և տարածված են բարդ տեկտոնական կառուցվածք ունեցող տեղամասերի վրա: Այս աղբյուրները մտնում են հեռանկարային, բայց լրիվ չհետախուզված հանքային ջրերի խմբի մեջ:

Հոդերը

Ծիրակի մարզի լեռնային ռելիեֆը, ապարների լիթոլիգիական կազմը, ջրաջերմային տարրեր պայմանները նպաստել են ոչ միայն կլիմայի և բուսածածկույթի բազմատիպությանը, այլ նաև խայտարեսու հողային ծածկույթի առաջացմանը: Վերջինիս ծևավորմանն ու փոփոխությանը նշանակալից չափով նպաստել են նաև մարդու կողմից հողերի դարավոր օգտագործումը, երկրագործության տարրեր հաճակարգերի կիրառումը և հատկապես ոռոգումը: Սակայն տարածքի ցածրադիր մասերից դեպի լեռնազագագարները բարձրանալիս հողագոյացման հիմնական գործոնների վերընթաց գոտիական բաշխվածությունը նպաստել է հողերի ծագումնաբանական տիպերի օրինաչափ զարգացմանը՝ նույնպես վերընթաց գոտիականությանը:

Ծիրակի տարածքի մեծ մասն ունի սարահարթային մակերևույթ և հիմնականում ծածկված է հրաբխային ապարներով, հետևաբար դրանց հողմահարման նյութերի վրա զարգացած են հիմնականում տափաստանային սևահողերը, որոնք զբաղեցնում են մեծ մակերես:

Աշոցքի սարահարթում հողագոյացնող ապարներ են տարրեր տիպի էֆուզիվ գոյացությունները՝ հիմնականում անդեգիտաբազալտները, որոնք հողմահարվելով վերածվում են մանրահատիկ մասնիկների և հողին տալիս կնծիկային կառուցվածք: Այստեղ հողառաջացման պրոցեսն ընդհանուր առնամբ ընթացել է ցուրտ կլիմայի և բարձր խոնավության պայմաններում: Այդ պատճառով մասնակի տարածում ունեն նաև մարգագետնաճահճային հողերը: Դրանց մեջ մեջ է օրգանական նյութերի պարունակությունը, որոնք ցածր ջերմաստիճանների պատճառով դանդադար են փուլը: Նահիճները չորացնելուց հետո այդ հողերը դարնում են բարձր բերքատու:

Աշոցքը եղրավորող լեռներում տիրապետում են զիխավորապես մարգագետնային դարչնագույն հողերը: Սրանք ռելիեֆի բարձր մասերում փոխարինվում են թույլ հզորության ճնաւորֆային հողերով, իսկ բարձրաբերձ լեռներում ընդհանրապես բացակայում է հաճատարած հողածածկույթը:

Սևահողերն ընդարձակ տարածք են զբաղեցնում Ծիրակում: Տարածված են նաև կարբոնատային սևահողերը, որոնք հարուստ են ածխաթթվային աղերով: Սրանք ծևավորվել են տուֆային և անդեգիտաբազալտային կարբոնատային կեղևի վրա, չոր կլիմայի պայմաններում և մեծ մասամբ կնծիկային են՝ 4-4.5% հումուսի պարունակությամբ: Առանձին վայրերում նրանցում հումուսի պարունակությունը հասնում է 7%-ի: Դամենատարար բարձրադիր մա-

սերում կարբոնատային սևահողերը փոխարինվում են խճաքարային լեռնային սևահողերով:

Չիրակում մասնակի տարածում ունեն նաև շագանակագույն հողերը: Մրանք գլխավորապես տարածված են մարզի հարավում, ցածրադիր հարթակներում, որտեղ տարեկան ջերմությունը համեմատաբար ավելի բարձր է, տեղումների քանակը՝ մի փոքր պակաս, իսկ հումուսի պարունակությունը հողում՝ մոտ 3%:

Մարգում առանձնացվում են հողերի տարածման հետևյալ հիմնական գոտիները:

1. Լեռնաշագանակագույն հողեր. Տարածվում են մարզի հարավում, նախալեռնային գոտու չոր տափաստաններում, Արագածի ցածրադիր լանջերից մինչև Ախուրյան գետի հովիտը՝ 1450-1600 մ բարձրությունների սահմաններում: Մրանք կարծես անցողիկ գոտի են կազմում Արարատյան դաշտի չոր տափաստանների և լեռնային տափաստանների միջև, ծևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում, հրաբխային ապարների վրա: Շագանակագույն հողերը հարուստ են կարրունատներով, որոնք աստիճանաբար ավելանում են մակերեսից դեպի խորքը: Այս հողատիպը պարունակում է 3-4% հումուս: Սա կարիք ունի պարարտացման՝ հումուսային նյութերով հարստացման: Ոռոգման դեպքում պիտանի են հացահատիկի մշակության, պտղաբուծության ու այժեգործության համար:

2. Լեռնատափաստանային սևահողեր. Մրանք տարածվում են մարզի 1500-2200, երեսն մինչև 2400-2500 մ բարձրությունները, ընդգրկում են Չիրակի և Աշոցքի սարահարթերի մեջ մասը և դրանք եզերող լեռների նախալեռնային ու միջին բարձրության գոտիները: Ամենատարածված հողերն են և առանցքային տեղ են զբաղեցնում Չիրակի մարզում: Այդ հողերը ծևավորվել են հիմնականում երիտասարդ անդեզիտաբազալտային լավային ծածկույթների վրա: Տեղումներն այստեղ բավարար են, խոտածածկույթը՝ հարուստ: Դողերի վերին շերտը հումուսացված է, հումուսի պարունակությունը կազմում է 4-5-ից մինչև 10-11%, իսկ սևահողերի միջին հզորությունը՝ 50-65 սմ: Սևահողերի տարածման շրջաններում տեղ-տեղ հանդիպում են նաև ճահճացած տորֆահողեր (Աշոցքի սարահարթում), որոնք չորացնելուց հետո աստիճանաբար վերափում են բարձր բերքատու սևահողերի: Մարզի սևահողային գոտին հանդիսանում է հացահատիկի մշակության կարևոր շրջան: Իզուր չէ, որ Չիրակը հանրապետության հացահատիկի շտենարանն է: Այստեղ մշակում են նաև կարտոֆիլ, շաքարի ճակնդեղ, կերային կովտուրաներ: Զարգանում է նաև պտղաբուծությունը:

3. Լեռնային մարգագետնատափաստանային հողեր. Տարածվում են սևահողերից վեր՝ 2200-ից մինչև 2600-2700 մ բարձ-

բություններում: Արանք ծևավորվում են խոտային բուսածածկույթի, ցուրտ ու երկարատև ճնշուներ ու գով աճառ ունեցող կլիմայի պայմաններում: Տարածված են Արագածի հյուսիսային, հյուսիսարևմտյան ու արևմտյան համապատասխան լամզերին և մեծ տարածք չեն զբաղեցնում: Այս գոտում տարածված են մարգագետնային և տափաստանային սևահողերը, որոնք հարուստ են հումուսով (8-12%): Գոտու ստորին հարկը օգտագործվում է իբրև խոտհարք, իսկ վերինն՝ արոտավայր:

4. *Լեռնային մարգագետնային հողեր*. տարածված են մարգագետնատափաստանային հողերից վերև՝ մինչև գագաթամերձ շրջանները: Ձևավորվել են մերձալպյան և ալպյան բուսածածկույթի տակ, ցուրտ կլիմայի և բավարար խոնավության պայմաններում: Այս հողերի բնորոշ առանձնահատկությունն է օրգանական նյութերի հարստությունը, հումուսի մեծ քանակը, կանչկանան կառուցվածքը: Մթնոլորտային առատ տեղումների հետևանքով լեռնամարգագետնային հողերն աղքատ են կարբոնատներից, մանավագանդ վերին շերտերում, որտեղից կարբոնատները անձրևային ջրերի կողմից լուծված և տարված են ներքև: Լեռնամարգագետնային հողերն ստորաբաժանվում են երկու մասի՝ մերձալպյան լեռնամարգագետնային դաշնագույն և ալպյան լեռնամարգագետնային ճմատորֆային հողերի: Ցածրադիր ճմատերին առավել բնորոշ են սևահողանան և դարչնագույն հողերը, որոնք ծածկված են մերձալպյան բույսերով, իսկ բարձրադիր ճմատերին՝ ճմամարգագետնային, ճմատորֆային հողերը: Դողաշերտի հզորությունը փոքր է. վերին ճմատերում այն հազիվ հասնում է 15-20 սմ-ի: Տեղ-տեղ ջրի ողողիչ աշխատանքի հետևանքով նշանակալի քանակություն են կազմում հողի պինդ ու կմախքային տարրերը: Լեռնամարգագետնային հողերը ծածկված են բարձրորակ արոտներով և հանդիսանում են ամառային արոտավայրերի գլխավոր շրջանը:

Շիրակի մարգում պատահում են նաև հողերի այլ տեսակներ, որոնք կապ չունեն գոտիականության հետ, ինչպես օրինակ ալյուվիալ մարգագետնային հողերը, որոնք կազմված են գետերի բերած շերտավոր նստվածքներից: Դրանք ընդհանրապես ունեն լավ արտահայտված կնծիկային կառուցվածք, հարուստ են կարբոնատներով, ինչպես նաև օրգանական նյութերով և ունեն բարձր արտադրողականություն:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարգն ունի բազմազան բուսականություն, որը պայմանավորված է բնական պայմանների առանձնահատկություններով: Բուսական ծածկույթի բազմազանության վրա առանձնապես մեծ ազդեցություն է բողնում մարգի մակերևույթը, որտեղ լեռնաշղթա-

ների միջև ընկած են ընդարձակ սարահարթեր, մեծ ու փոքր հովիտներ:

Բնական բուսականությանը, ի տարբերություն ՀՀ շատ մարդերի, բնորոշ է միատարրությունը: Այստեղ բնական անտառներն ամբողջովին բացակայում են: Տիրապետողը լեռնային տափաստաններն են, հովուսով հարուստ սևահողերով և խոտային բուսականությամբ: Այսուամենայնիվ, բուսականության տարածնան հիմնական առանձնահատկությունը վերընթաց գոտիականությունն է: Երբեմն բուսականության մի գոտիական տիպը թափանցում է մյուսի ոլորտը, այսինքն գոտիների վերին և ստորին սահմանները, կախված ուղիեֆի և կլիմայական տեղական առանձնահատկություններից, որոց տատանումներ են տալիս:

Շիրակի մարզում, Եղբակից վեր իրար են հաջորդում բուսականության հետևյալ տիպերը:

1. Լեռնատափաստանային բուսականություն. Ծևավորվում է բարեխառն չոր կլիմայի պայմաններում, զբաղեցնում է ընդարձակ մակերես՝ տարածվելով մարզի ցածրադիր շրջաններից մինչև 2300-2400 մ բարձրությունները: Այն ունի հարուստ տեսակային կազմ, իոն խոտածածկույթ և ճնակաված սևահողեր: Այստեղ ամենուրեք տարածված են տարատեսակ խոտարույսեր, որոնց մեջ գերակշռում են փետրախոտը, սեզը, շյուղախոտը, կծմախոտը, թիթեռնածաղիկը, լորազգիները և այլն: Սարզի հարավային մասում, համեմատաբար քարքարոտ հողերում տարածված են օշինդրը (յաշան), դաշտավլուկը, անթառամը, փետրախոտը (սարի սմբուկ) և այլն:

Դամեմատաբար հզոր հողային ծածկույթ ունեցող տեղամասերում տարածված են փետրախոտային տափաստանները, որտեղ հշխում է նեղտերև փետրախոտը, իսկ ավելի չորային շրջաններում՝ պղնտական փետրախոտը: Սրանց հետ միասին հանդիպում են շյուղախոտը, կելերյան սեզը և այլն:

Ներկայում փետրախոտային տափաստանները գրեթե ամբողջովին հերկված են և օգտագործվում են հացահատիկի, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, մասամբ նաև շաքարի ճակնդեղի մշակության համար: Շիրակի բուն տափաստանային բույսերը համեմատաբար նվազ քսերոֆիլ են: Նրանք կազմված են մեծ մասամբ ճիմ առաջացնող ցորենազգի տեսակներից և բավական խիտ բուսածածկույթ ունեն:

Փետրախոտային տափաստաններից մի փոքր ավելի բարձր տափաստանային բուսականության մի առանձին տիպ են կազմում հացազգատարախոտային բույսերը: Դրանք հաճախ կոչվում են տարախոտային տափաստաններ:

Առանձին տիպ են կազմում կծնախոտային տափաստանները, որոնք տարածվում են մարզի ցածրադիր շրջաններում՝ Արքիլի, Աճիի և Ախուրյանի տարածաշրջաններում։ Սրանք ունեն երկրորդական ծագում, առաջացել են հատած անտառի տեղերում, որտեղ սովորաբար տարածված են շագանակագույն հողերը։ Տիրապետող բուսատեսակը կծնախոտն է, տարածված է ողնախոտը, հանդիպում են նաև սեզը, դաշտավլուկը և մի շարք այլ բույսեր։

Դարավային դիրքադրության և սակավագոր հողերի վրա տարածված են սիզախոտային տափաստանները, որոնց հիմնական ֆոնը կազմում է մազիկավոր սիզախոտը, ինչպես նաև նրա ամենաբնորոշ ուղեկիցը օշինդրը։ Բնորոշ են նաև տարախոտային տափաստանները։

Բուն Աշոցքի սարահարթն ունի խոնավ տափաստանային (մեծ նաև մարզ փետրախոտային) բուսականություն, որի մեջ հատկապես շատ են մարգագետնային, բարձրլեռնային խոտազգիները։ Որպես կանոն, բուսական այդ տիպերին հաճապատասխանում են աղագերծված սևահողերը՝ 6-8% հումուսի պարունակությամբ։

Տափաստանային գոտին ամենաշատ յուրացվածն է և հանդիսանում է մարզի հացահատիկային մշակաբույսերի մշակության հիմնական շրջանը։

2. Մարգագետնատափաստանային բուսականություն. տարածվում է 2300 մ-ից վեր, համեմատաբար խոնավ վայրերում, որի շնորհիվ հարուստ է փարթամ ու հյութեղ խոտերով։ Այն հանդիսանում է Շիրակի մարզի անասնապահության հիմնական կերպարան բազան։ Իր փարթամ խոտարքներով ու արոտավայրերով բացառիկ մեծ նշանակություն ունի անասնապահության համար։

Բուսականության այս տիպը սովորաբար բաժանվում է երկու ենթագույուն՝ ստորին կամ մերձալպյան և վերին կամ ալպյան։

Մերձալպյան մարգագետինները միջանցիկ դեր են կատարում և կազմված են բարձր խոտերից, ինչպես նաև երկշաքիլավորներից։

Այս ենթագույուն տարածվում է մինչև 2800-2900 մ բարձրությունները։ Կլիմայական պայմանները բավական խիստ են. ամառը զույգ է ու կարճատև, իսկ ձմեռը՝ երկարատև ու ցուրտ։ Մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 600-750 մմ։ Այստեղ տարածված են հիմնականում տարախոտային մեզոֆիլ մարգագետինները, որոնք ունեն երբեմն մեկ մետր և ավելի բարձրություն։

Մերձալպյան գոտու ֆլորիստական կազմը հարուստ է։ Տարածված են ցորնազգիները, լոբազգիները և տարախոտերի շատ տեսակներ։ Բնորոշ բույսերից են ցորնուկը, դաշտավլուկը, հոտավետ հասկիկը, շյուղախոտը, եղջերավույտը, ինչպես նաև մեղրատունները երեքնուկը, խատուտիկը, ծղկին, մեխակը և այլն։

Հումուսի պարունակությունը հողերում հասնում է մինչև 8-11%-ի։

Բուն ալպյան բուսականությունը տարածվում է 2800-2900 մ-ից վեր: Այստեղ օդի ջերմաստիճանները գետնի մակերևույթի ջերմաստիճաններից ավելի ցածր են, դրա հետևանքով ալպյան բուսականությունը ցրտաշունչ քամիներից պաշտպանվում է հավելով գետնին նրա ջերմությունից օգտվելու համար: Այստեղ տարածված են հիմնականում երկշաքիլավոր բույսերը, որոնց ցողունները կարծ են, և տերևները հենց գետնի վրա կազմում են վարդաննան փնջեր: Սրանք ծածկված են խոշոր, վառ գույնի ծաղիկներով, որոնք հաճախ այնքան խիտ են ու բազմերանգ, որ նմանվում են գորգերի կոչվելով «ալպյան գորգեր»: Սրանք ավելի շատ տարածված են Զավախսի, Եղնախաղի, Արագածի և մասամբ՝ Շիրակի և Փամբակի լեռներում: Ալպյան գոտում տարածված են նաև, այսպես կոչված, քարքարոտ մարգագետինները, որոնք հարմարվել են քարքարոտ և նվազ խոնակ հողերին: Գարնանը ծնաբժերի մոտերքում աճում են հիմնականում զանազան սոխարնատ և վարդակատիպ երկշաքիլավոր բույսեր:

Դաճախ առանձնացվում է նաև վերին ալպյան կամ լեռնամարգագետնային բուսականություն, որը, ի տարբերություն ալպյան գորգերի, բաղկացած է ոչ թե երկշաքիլավոր խոտերից, այլ հացազգիներից, կամ ավելի հազվադեպ՝ բոշխերից: Այստեղ վերին ալպյան ժայռային բուսականությունը աղքատ է, անկայուն և պատկանում է «բարձիկաննան բույսերի» տիպին: Ի տարբերություն ֆորդանուիդ ֆորմացիաների բարձիկաննան թփուտների՝ այստեղի «բարձիկները» խոտաբույսեր են: Սրանք մատչելի են միայն ոչ խարներին և հատկապես այծերին, հարուստ են սննդային նյութերով:

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Կ Ա Ն Ա Չ Խ Ա Ր Ի Ծ

Աշխարհագրական դիրքի առումով Շիրակի մարզն ընկած է Կովկասյան և Փոքրասիական կենդանաաշխարհագրական մարզերի միջև: Ուստի պատահական չէ, որ նրա կենդանական աշխարհը ներկայացնում է մարգերի տարատիպ կենդանիների բնորոշ խմբավորումը: Նրա վրա որոշ չափով ազդեցություն է թողել նաև իրանական ֆառնան, որը Արարատյան դաշտով թափանցել է Շիրակ:

Կենդանական աշխարհի բազմազանությունը պայմանավորված է բուսականության բազմազանությամբ: Յուրաքանչյուր բուսական վերընթաց գոտի ունի իր յուրահատուկ կենդանական աշխարհը: Սակայն, որոշ կենդանիներ, իրենց շարժունակության շնորհիվ, հանդիպում են հանարյա բոլոր գոտիներում: Դրանցից են նապաստակը, աղվեսը, գայլը, դաշտամուկը, աքիսը, ծննդուկը, կաքավը, լորը, արծիկը և այլն:

Կենդանական աշխարհի տեղաբաշխումը համապատասխանում է հողաբուսական գոտիների դասավորությանը: Կենդանիների բնորոշ տիպերը փոփոխվում են ըստ վերընթաց գոտիների:

Եռնատափաստանային գոտին առաջին հերթին բնորոշ է կրծողներով: Տարածված են հատկապես դաշտանուկը, ճագարամուկը, գետնաւոյուռը, փոքրասիական համստերը, կույր նուկը, որոնք իրենց բները փորում են հիմնականում հացահատիկի արտերում: Գիշատիչներից տարածված են նաև արիսը, ժանտաքիսը: Լայն տարածում ունի նաև նապաստակը:

Առանձնապես բազմազան է թօնաշխարհը, շատ են տարածված ճնճղուկը, արտույտը, լորը, կաթավը, սոխակը, ծիծենակը, կաչաղակը, արծիվը, բազեն, կռունկը, սարյակը, սևակատ շաճիրուկը և այլն: Քի են սողունները:

Սերծալ այս և ալպյան գոտում տարածված են մի քանի տեսակ արծիվ, գառնաճղող, եղերավոր արտույտ, լեռնային հնդկահավ, ճնճղուկ և այլն: Շատ են միջատներն ու գույնզգույն թիթեռները: Այստեղ հանդիպում են նաև լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ՝ աղվես, նապաստակ, արիս, գայլ, սովորական դաշտանուկ, ծյան դաշտամուկ: Այստեղ շատ են թափանցում գայլերը, որոնք վտանգավոր են լեռնային արոտավայրերի անասունների համար: Բարձր կարգի կաթնասուններից երենն հանդիպում է վայրի ոչխարը (նուֆլոն), հազվադեպ՝ բեզոարյան այծը:

Կենդանական աշխարհը բավական աղքատացել է: Կան կենդանատեսակներ, որոնք անհետացել են կամ գտնվում են անհետացման եզրին:

Բ Ն Օ Գ Մ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն և Բ Ն Ա Պ Ա Ի Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն հ ի մ ն ա խ ն դ ի ր ն ե ր ը Շ ի ր ա կ ի մ ա ր գ ո ւ ն

Շրջակա միջավայրի պահպանությունը համամարդկային կարևորագույն հիմնախնդիր է: Բնօգտագործումը և բնապահպանությունը, դրանց գոտիական կազմակերպումն ու բարելավունը Հայաստանի Հանրապետության համար հասունացած և տարեցտարի սրբող խնդիր է, որն ունի իր առանձնահատկությունները: Նրա առանձին շրջանների վրա մեծ ազդեցություն են գործում ոչ միայն արտադրական ծերնարկություններն ու տրանսպորտը, այլև բնակչության խտությունը, կլիման, ռելիեֆի ծեզ, աշխարհագրական դիրքը և այլն:

Հայաստանի Հանրապետության էկոլոգիական ներկա իրավիճակը բնութագրվում է որպես անկայուն ու լարված, որն ավելի է սրվել 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի, ինչպես նաև վերջին տասնամյակի տնտեսական ճգնաժամի և շրջափակման

հետևանքով, երբ բնապահպանական միջոցառումները կտրուկ սահմանափակվել են ու հասել նվազագույնի:

Այժմ քննարկենք բնապահպանական կրնկրետ հիմնախնդիրներն ըստ բնական միջավայրի բաղադրիչների և բնական ռեսուրսների տեսակների:

Ընդերջի պահպանությունը և ռացիոնալ օգտագործումը: Արդեն նշվել է, որ Ծիրակի մարզի հիմնական հարատություն բազմապիսի արժեքավոր շինանյութերն են, որոնք որպես սպառվող ու չվերականգնվող ռեսուրսներ, ենթակա են սպառնան: Մրանց հանույթի, տեղափոխման և վերամշակման ժամանակ առաջանում են մեծ կորուստներ, որոնց մեծ մասը կամ անհատեսվարության կամ էլ տվյալ արտադրության տեխնոլոգիական պրոցեսների ցածր մակարդակի արդյունք է, որից տնտեսությունը վիրիարի վնասներ է կրում:

Դաճախ բնական շինանյութերի հանույթը կատարվում է պայթեցումներով, որովհետև արագ է ու էժան, բայց հումքի խնայողության տեսակետից այդ եղանակը միանգամայն վնասակար է: Դաճապետության քարանյութեր արդյունահանող ծերնարկությունների փաստացի տվյալների համաձայն, լեռնային զանգվածից պատրաստի արտադրանքի (ստանդարտին համապատասխան շինաքարի) ստացումը կազմում է արդյունահանվող քարի անբողջ զանգվածի 30-48%-ը: Մյուս մասը (այսինքն մեծ մասը) մի կրղմ է թափվում, որպես մնացորդ: Որպեսզի նվազագույնի հասցվեն շինանյութերի կորուստները, անհրաժեշտ է արդյունահանումը լիովին մեքենայացնել, իսկ ջարդունները օգտագործել: Պետական ստանդարտի համաձայն 1 մ² պատի վրա նախատեսվում է գործածել 8-9 տուֆ քար, 30x37.5 սմ չափի: Սակայն իրականում ոչ մի քար չի համատասխանում ստանդարտին և 1 մ² պատի վրա ծախսվում է 14-15 տուֆ քար, իսկ մի մասն էլ պիտանի չի լինում շարվածքի համար և վերածվում է թափոնի՝ նոր կառուցվող շենքերի մոտ կազմելով ավելորդ աղբակույտեր: Շարվածքը կորցնում է արտաքին տեսքը, խախտվում են շինարարական նորմաները, մեծանում է շարվածքի աշխատատարությունը և նյութատարությունը: Պատճառն այն է, որ մատակարարող կազմակերպությունները քարն ուղարկում են հատով՝ անկախ նրա չափից: Նշված երևույթները կանխելու համար մատակարարող կազմակերպությունները պետք է խստիկ պահպանեն քարերի ստանդարտ չափերը, քարերն առաքեն եղթերը կտրած, իսկ ոչ պիտանի քարերը և թափոնները գործածեն տեղում՝ կազմակերպելով տուֆավազի արտադրություն, որպես լցանյութ օգտագործելով ծայնաշերմանեկուսիչ երկարթետոնն կոնստրուկցիաներում, շինանյութերի, պոլիմերային իրերի, պլաստմասսաների արտադրությունում: Այժմ շինանյութերի մի մասը (պեղիտը, խարամը, պեմզան) արդեն գոր-

ծածկում են կահույքի, սննդի, արհեստական թելերի արտադրության մեջ: Սկսվել է շինանյութերի պոլիմերացումը, հրաբխային տուֆերից ստացվում են կոնստրուկցիոն նոր նյութեր: Ստացված նոր շինանյութերը բնական տուֆերի համեմատությամբ ամուր են 10-15 անգամ: Ուրեմն, անհրաժեշտ է նպատակին, ռացիոնալ և շահավետ օգտագործել մարզի շինանյութերը, կազմակերպել և ընդլայնել վերը նշված արտադրությունները, որոնք մեծ շահույթ կարող են ապահովել հանրապետությանը (1, էջ 43):

Մյուս կողմից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ շինանյութերի հանքավայրերը շահագործումից դուրս են թողնում ընդարձակ հողահանդակներ: Շինանյութերի հանույթից նրանց տեղում առաջանում են փոսեր, իջվածքներ, «ինդուստրիալ անյություններ»: Դրանց նպաստում է նաև շինանյութերի արդյունահանման բաց եղանակը, առաջանում են հողի մեծ կորուստներ:

Ընդերքի ռեսուրսների համալիրային և ռացիոնալ օգտագործումը մարզի Էկոլոգիական իրավիճակի կարգավորման, ինչպես նաև կանոնավոր շահույթի ապահովման հիմնական ուղին է:

Մթնոլորտի պահպանությունը: Շիրակի մարզում մթնոլորտն աղտոտող ծեռնարկությունները քիչ են, այստեղ չկան մետաղուրգիական, քիմիական արդյունաբերության ծեռնարկություններ, ցերմային էլեկտրակայաններ: Այստեղ մթնոլորտն աղտոտվում է հիմնականում ավտոտրանսպորտի, թերև արդյունաբերության որոշ ծեռնարկությունների, կաթսայատների վնասակար արտառետումների պատճառով:

Ընդհանուր առմանք Շիրակի մարզն աչքի է ընկնում օդի մաքրությամբ, որին նպաստում են ոչ միայն քիչ աղտոտող ծեռնարկությունները, այլ նաև տարածքի հիմնականում հարթ լինելու հանգամանքը:

ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի տվյալներով, 2000 թ. Շիրակի մարզում ավտոտրանսպորտից կատարված մթնոլորտային արտանետումները կազմել են 7320 տոննա, որից՝ ազոտի օքսիդներ՝ 370, ածխածնի օքսիդ՝ 6030, ածխաջրածիններ՝ 920 տոննա: Մթնոլորտ արտանետված փոշու քանակը կազմել է 35.5 տոննա: Մթնոլորտային արտանետումները անշարժ աղբյուրներից 2000 թ. կազմել են 144.6 տոննա: Ընդ որում, սկսած 2000 թ.-ից մարզում նկատվում է մթնոլորտային արտանետումների ավելացում: Այսպես, անշարժ աղբյուրներից արտանետումները 2000 թ. 1997 թ. համեմատությամբ աճել են 3.5, ավտոտրանսպորտից՝ 0.3, փոշու արտանետումները՝ մոտ 1.8 անգամ: Արտանետումների ավելացումը պայմանավորված է տնտեսության, ջեռուցման համակարգի զարգացմանը:

Սակայն պետք է նշել, որ մարզի օդագտիչ սարքերը և կայանները հիմնականում չեն գործում, և արտանետվող ամբողջ նյու-

թերը անցնում են մթնոլորտ ու քամիների միջոցով տարածվում ողջ շրջապատում:

Ծիրակի մարզի գետերն ու գետակները և ջրավագանները աղտոտվում են կենցաղային, արդյունաբերական, գյուղատնտեսական բափոններից: Զրային ավագաններ բափված վնասակար նյութերի քանակը Ծիրակում ջիշ է և 1998 թ. կազմել է 1.5 տոննա (2000թ. տվյալները բացակայում են): Հիմնականում վտանգավոր են արդյունաբերական բափոնները, որոնք հաճախ պարունակում են անօրգանական թթուներ, ֆենոլներ, թունաքիմիկատներ, լվացող նյութեր, որոնց մեծ մասը չի մաքրվում և անցնում է ջրավագաններին:

Սրտադրության տեխնոլոգիաների կատարելագործումը, ջրամատակարարման հետադարձ հաճակարգի ստեղծումը, հոսքաջրերի մաքրումը կարող են նվազագույնի հասցնել վնասակար նյութերի քանակը և կարգավորել ջրի որակը ջրային օբյեկտներում:

Ծիրակի մարզի հողային ռեսուրսները տուժում են հիմնականում ջրային էրոզիայից, օտակար հանածոների արդյունահանումից ու վերամշակումից, շինարարական աշխատանքներից:

Ախուրյան գետը իր համակարգով բավական վնաս է պատճառում հողային ռեսուրսներին: Մթնոլորտային հորդ տեղումները առաջացնում են սելավային հոսքեր, լեռնային հեղեղներ, որոնք լեռնալանջերից ողողում, տանում են հողի մասնիկները, հաճախ նաև հողի ամբողջ շերտը՝ մեծ վնաս հասցնելով վարելահողերին, արտավայրերին: Հողի էրոզիային գումարվում են նաև մարդու տնտեսական գործունեության բացասական հետևանքները հողի սխալ վարը, անասունների անսիստեմ արածեցումը, ոռոգումը, ճանապարհների անցկացումը և այլն:

Հողային ընդարձակ տարածություններ կորչում են շինանյութերի արդյունահանման, վերամշակման ընթացքում: Տուֆի, պեմզայի, պեղլիսի, կրաքարերի հանքավայրերի տեղում շահագործումից դուրս են մնում բավական հողահանդակներ, նրանց շրջակայքում զգալի տեղ են զբաղեցնում առաջացած բափոնները՝ հողաբլուրները, քարակույտերը:

Պահպանության կարիք ունեն մարզի բուսական և կենդանական ռեսուրսները: Բուսականությունը զգալի փոփոխության է ենթարկվել մարդու գործունեության հետևանքով: Լեռնային մարգագետինները, արտավայրերը խիստ տուժել են անսիստեմ արածեցման հետևանքով: Հատկապես շատ են տուժել մերձալայան և ալպյան գոտիների բուսական համակեցությունները:

Մեծ վնաս է կրել նաև կենդանական աշխարհը: Կենդանիները մեծ դեր ունեն բույսերի պահպանման, խաչածն փոշոտման, սերմերի տարածման, արեալի ընդարձակման գործում:

Առաջնահերթ խնդիր են դարձել բուսական և կենդանական ռեսուրսների պահպանության, վերարտադրության, կենսաքանական բազմազանության և գենոֆոնի պահպանության հարցերը: Բույսերի և կենդանիների «Կարմիր գրքերում» ընդգրկված են նաև Շիրակի մարզի ֆաունայի և ֆլորայի ներկայացուցիչները:

Շիրակի մարզում չկան արգելոցներ, արգելավայրեր: Սակայն առանձնացվել են որոշ տարածքներ, որոնք բնապահպանական տեսակետից կարևոր են: Դրանցից են (23, էջ 71-73):

1. Ախուրյան գետի հովիտը: Զորակի երկարությունը 7 կմ է, տեղամասը հաճախ անվանում են «Բոզգալի ծոր»: Իրենից ներկայացնում է Ախուրյան գետի ժայռոտ կանիոն՝ ծածկված ծառաթփային բուսականությամբ: Իր գեղեցկությամբ բացառիկ լանդշաֆտ է, նեղ 500 մ լայնությամբ և մինչև 100 մ խորությամբ հովիտ, որը առաջացել է լավային սարահարթում հոսող ջրի ներգրությամբ: Այստեղ, անտառազուրկ Շիրակում, ներկայացված են բազմազան ծառատեսակներ. կաղամախի՝ մինչև 15 մ բարձրության հասնող, խոշորառու կաղնի, Ախուրյանի էնդեմիկ հաղարքնի, նեղատերև դժմիկ, սովորական արոսենի, ուռենի, չիչխան և այլն:

2.Կաղամախու ծառախմբեր Ամասիայի մոտ: Տեղանասի մակերեսը 50 հա է: Առավել մեկուսացած և 77 հյուսիսարևմտյան մասում ամենից բարձր տեղադրված կղզային անտառներից մեկն է՝ լեռնամարգագետնային անտառազուրկ գոտում: Գտնվում է ծովի մակերեսությից 2300 մ բարձրության վրա: Մացառային կաղամախու հետ միասին, որն այստեղ ծևավորում է խիտ մացառություններ, միաժամանակ աճում են մասրենու մի շարք տեսակներ, հաղարքնի և այլն: Դրանք աճում են Ամասիայից 3 կմ արևմուտք՝ Ախուրյան գետի աջափնյա անանուն վտակի վերնագավառում, ձորակի երկու կողմերի լանջերին:

3.Մանթաշի ծորը և Զիարաթի սարահարթը: Ընդհանուր մակերեսը 500 հա է: Գտնվում է 2200-2300 մ բացարձակ բարձրությունների սահմաններում:

Լեռնատափաստանային տեղամաս է, որտեղ տարածված են խայտարդես ցորնուկը, Արագածի գորտնուկը, կոկոչենին և այլն: Հայն տարածում ունեն չինգիլները, քարացրոնները:

Տարածքը զբաղեցնում է Զիարաթի սարահարթի մի մասը, Արագածի արևմտյան գագաթի տակ ընկած հատվածը և Մանթաշ ծորը բարձր լեռնային արհեստական ջրանբարով, հատկապես նրա աջ ափը: Սա 77 բարձրելենային գեղեցիկ անկյուններից մեկն է, որը գովերգվել է Ավ. Խսահակյանի կողմից: Այն կարելի է դարձնել ազգային պարկ:

ՊԱՏՄԱՋՐԱՎՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՃԱՐՉԱՆՆԵՐԸ

Յայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում Շիրակը խաղացել է բացառիկ մեծ դեր: Այն միջնադարյան Հայաստանի առավել նշանավոր գավառներից էր և մտնում էր Այրարատ «աշխարհի» մեջ: Սկզբնական շրջանում Շիրակը պատկանում էր տարբեր նախարարական տների, իսկ 8-րդ դարի վերջերից, ընդարձակ շատ գավառների հետ միասին, անցնում է Բագրատունիներին:

Բագրատունիների թագավորության շրջանում (9-11րդ դարեր) էլ ավելի է մեծանում Շիրակի դերը Հայաստանի մշակութային կյանքում: Դրանից առաջ և այդ դարերում են կառուցվել աշխարհահռչակ Անին իր անզուգական վանքերով, պալատներով ու պարիսպներով հանդերձ, Տեղորի զարմանահրաշ տաճարը, Երերույքի, Հարիծի, Սարմաշենի տաճարները, Վահրամաշենի կաթողիկեն, Գյումրիի ու Արթիկի Եկեղեցիները և պատմական Շիրակի ճարտարապետական այլ գլուխգործոցներ, որոնցից յուրաքանչյուրն իր տեղում ունի հայ միջնադարյան բարձրարվեստ ճարտարապետության մեջ:

Համառոտակի ներկայացնենք մարզի ճարտարապետական հուշարձանները:

Երերույքի Եկեղեցի. Եկեղեցական ամենահին կառույցներից է և գտնվում է Աթիի տարածաշրջանի Անիպեմզա բնակավայրում, Երևան-Գյումրի երկարուղու ծախ կողմում՝ պենզայի հայտնի համբավայրերի մոտ ընկած տափարակ վայրում: Երերույքը սյունազարդ, քառանկյունի մոնումենտալ մի կերտվածք է, որը կառուցվել է 4-5-րդ դարերում: Պատերը շարված են տաշած կարմիր և գորշ տուֆով: Այն քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական հուշարձան է, եռանակ բազիլիկ տաճար, որը կիսավեր վիճակում պահպանվել է մինչև մեր օրերը: Կառույցը հիմքում երիգվում է վեցասմինքան պարագծային պատվանդանով: Աղոթարասուրահը, որն ունի 11.5×26.6 մ չափեր, բաժանվում է երեք նավի: Միջին նավը, որ ամբողջ ծավալով ավելի բարձր է կողայիններից, վերջանում է կիսաշրջան խորանով: Դյուսիսային և հարավային սրահներն արևելքից ունեն խորաններ: Ըստ Թորոս Թորոնանյանի՝ պարզորոշ են տարբեր ժամանակների վերանորոգումները, իսկ

սրահներն ու արևմտյան սենյակները կառուցվել են 6-7-րդ դարերում: Աղոթքարահի պատերի ստորոտին արտաքինից կառուցված է պարագծային եռաստիճան: Առկա են և՝ պայտաձև, և՝ շրջանաձև կամարներ: Կառույցի ծածկերն ամբողջովին փլված են: “Պահպանվել են որմնանկարչության բեկորներ, մի քանի արծանագրություններ: Թվագրված արծանագրություններից ամենահինը 1038 թ. է: Այժմ նրա ավերակները պահպանվում են պետության կողմից (2, էջ 242-243):

Երերույքի բազիլիկը քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական գլուխգործոցներից է և հնարավորություն է տալիս պարզաբանել հայկական ճարտարապետության ծագման ու կազմավորման, այլ ժողովուրդների հետ մշակութային փոխազդեցությունների արմատական հարցեր:

Երերույքի չորս կողմերում կան զանազան կառուցվածքների ավերակներ, ինչ գերեզմանոցներ: Բազիլիկից մոտ 200 մ դեպի հարավ-արևելք 1958 թ.-ի աեղումներից բացվել է 4-5-րդ դդ. արհեստական լիի պատմնեցը: Լիճը ստեղծվել է դեպի Ախուրյան հոսող գետակի ջրերից՝ արգելակող պատմնեց կառուցելու միջոցով: “Պատմնեցի երկարությունը 120 մ է, հաստությունը՝ 4 մ: Ներսից աստիճանաձև է: Լիճը շրջապատված է եղել մրգատու այգիներով (12, էջ 67):

Տաճարի շրջակայքում կան ինչ բնակավայրերի ավերակներ, որոնք ընկած են Անիպեմզայի ծայրանասում, պեմզայի հանքավայրի մոտ:

Մարմաշենի վանք. Դայաստանի Դանրապետության տարածքում պահպանված ամենանշանավոր ճարտարապետական հուշարձաններից է և գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի Վահրամաբերդ (Նախկինում Վերին Ղանլիջա) գյուղի մոտ, Ախուրյանի ծախ բարձրադիր ափին տափարակ սարավանդի վրա: Մարմաշենը կառուցել է Վահրամ Պահլավունին, և այդ պատճառով այն հաճախ կոչվում է Վահրամաշեն: Մարմաշենը մի հսկայական ու հոյակապ տաճար է, մայր տաճար կամ կաթողիկե, որի շինարարությունը տևել է 42 տարի՝ 988-1029 թթ.: Այդ մասին Վահրամ Պահլավունին, եկեղեցու պատի վրա թողել է մի չափազանց ընդարձակ արծանագրություն, որը լավ պահպանվել է մինչև օրս: Մայր եկեղեցու պատերը և՝ ներսից, և՝ դրսից պատաժ են սրբատաշ կարմիր տուֆով, իսկ իհնքային նաև շարված են բազալտով:

Կանքը կենտրոնագմբեթ է, ունի բազմաթիվ քանդակագրություններ, որոնք իրար հետ միանում և սյունաշարքեր են կազմում ոչ պակաս քանդակագարդ կամարներով: Նրա տանիքը քարապատ է, ինչպես միջնադարյան հայկական մյուս տաճարների տանիքները:

Հարավային պատին քանդակված է արևային ժամացույց, պատերին կան նաև մի շարք այլ արձանագրություններ: Վանքի զավթում գտնվում է Վահրամ Պահլավունու գերեզմանը, որն ունի տապանագիր: Եկեղեցին, չնայած այս շրջանում տեղի ունեցած մի քանի կործանիչ երկրաշարժերին, բավական լավ է պահպանվել: Այն ամբողջովին կանգուն է, փլվել է միայն հյուսիսային պատը (2, էջ 243):



Սարմաշենի վանքը

Սարմաշենի կաթողիկեթի հարավային կողմում գտնվում է մի ուրիշ փոքր եկեղեցի, որը նույնպես կառուցվել է 11-րդ դարում: Այս եկեղեցին ևս կենտրոնագմբեթ է և իր ճարտարապետական ոճով հարազատ է 10-13-րդ դարերի հայկական մյուս եկեղեցիներին ու տաճարներին: Մրա պատերը շարպած են սրբատաշ տուֆով, ունի կամարներ, սյուներ, քանդակներ, տանիքը քարածածկ է: Այս եկեղեցին այժմ խարխուկ վիճակում է:

Վահրամաշեն կաթողիկեթի և այս փոքր եկեղեցու շրջակայքում կան բնակավայրի ընդարձակ ավերակներ զանազան շենքերի մնացորդներ, ինչպես և գերեզմանոց: Եկեղեցիներն ու դրանց շուրջը փոքած բնակավայրը պատաշ են սրբատաշ պարսպով, որի հետքերը մինչև օրս ել նշնարվում են:

Սարմաշենի մայր տաճարից կես կիլոմետր հյուսիս կա 7-րդ դարում կառուցված մի եկեղեցու ավերակ. Այս եկեղեցուց կանգուն է մնացել միայն հյուսիսային կողմի հատվածը:

Դրանցով չեն վերջանում Մարմաշենի և նրա շրջակալքի հնությունները: Մարմաշենի տաճարի, Մարմաշեն գյուղի ու դրա հարևան գյուղերի շրջակայքում հանդիպում են ուրարտական սեպագիր արձանագրություններ, տարբեր ժամանակների բերդերի ու ամրոցների մնացորդներ, Ախուրյանի վրա երթեմնի եղած կամուրջների հետքեր և այլ հնություններ: Մարմաշենի մոտ են գտնվում նաև Վահրամարերի ավերակները:

Դառիճի վաճք. Արքիկի տարածաշրջանի Դառիճ գյուղում գտնվում է միջնադարյան Դառիճավանք համալիրը: Դաքույն շինությունը Ս. Գրիգոր Եկեղեցին, կառուցվել է 7-րդ դարում, որին հարավից կից են 8-րդ դ. Երկիարկ աղոթարանները: Վանքի գլխավոր Եկեղեցին, որը կառուցվել է 1201 թ. Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների հրամանով, խաչաձև-զմբեթավոր մեծաչափ կառույց է: Տաճարի անկյունները զբաղեցնում են Երկիարկանի ներ խորաններ: Սրանք աղոթարահին նայում են սյունականարակազմ բացվածքներով, որոնք ինտերիերին տալիս են պալատական տեսք:

Արևմուտքից Եկեղեցուն միացված է 8-րդ դ. քառասյուն գավիթը: Գավթի կենտրոնական մասը ծածկված է շրաքարե երդիկավոր վրանաման զմբեթով: Դարուստ է շքամուտքի հարուարանը, շարված է աստղած քարերից և մանր վեցանկյուններից:

Տաճարը կանգուն է և լավ է պահպանվել: Այն գտնվում է ուղղակի գյուղի մեջտեղում: Իր կառուցվածքով Դառիճի Եկեղեցին նման է 7-րդ դարի մեր մյուս տաճարներին: Այն ունի շատ կամարներ, սյուններ, քանդակներ, արձանագրություններ: Դառիճը հոյակապ կառուցվածք է ներքուստ և արտաքուստ խաչածև հատակագծով:

Գյումրի քաղաքի տարածքում կառուցվել են մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններ՝ Եկեղեցիներ, ամրոցներ, աշտարակներ:

Դնագույն ճարտարապետական հուշարձաններից է պեղումներով հայտնաբերված զմբեթավոր Եկեղեցին (7-րդ դար), որն ունի պայտաձև հատակագծով Ավագ խորան: Եկեղեցու շուրջը եղել է կումայրի իին բնակավայրը՝ փողոցների անկանոն ցանցով, կիսագետնափոր և մեկհարկանի բնակելի տներով: Դայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Կումայրին կառուցապատվել է ռուսական առաջադեմ քաղաքաշինական սկզբունքներով: Գյումրի և Ախուրյան գետերի միջև՝ բարձունքի վրա, սրբատաշ մև տուֆից կառուցվել է աշտարակավոր պարսպապատ ամրոց, որն ուներ զինանոց, տնտեսական շենքեր, գորանոց և զմբեթավոր Եկեղեցի:

ՂԱՏՄԱՋԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բերդն ուներ չորս դարպաս՝ Երևանի, Թիֆլիսի, Կարսի, Ախալ-քալաքի:

19-րդ դարի կառուցներից նշանավոր են Ամենափրկիչ (1858-1876), Ս. Աստվածածին (1843-1856), Ս. Նշան (1876-1885), Ս. Գևորգ (ոռւսական) Եկեղեցիները: Ամենափրկիչն Անհի Մայր տաճարի ոճով կառուցված Եկեղեցի է: 1926 թ. Լենինականի Երկրաշարժից վնասվել էր նրա գմբեթը, որը վերանորոգվել է մեր օրերում, իսկ 1988 թ. Երկրաշարժից՝ հիմնովին կործանվել է:

Արթիկի Եկեղեցիները. Արթիկում կա պատմական և ճարտարապետական տեսակետից մեծ հետաքրքրություն ներկայացնող Երկու Եկեղեցի, որոնցից մեկը մեծ, իսկ մյուսը՝ փոքր:

Մեծ Եկեղեցին կառուցվել է 7-րդ դարում՝ ունենալով այդ դարի հայկական տաճարներին բնորոշ բոլոր գծերը: Եկեղեցին իր սյուներով, խոյակներով, բարձրաքանողակներով, կամարներով, շարվածքի նորությամբ ու ճարտարապետական նտահեղացմամբ մեծ տպավորություն է թողնում այցելուի վրա: Այժմ այն գտնվում է կիսականգույն վիճակում, և կատարվում են վերականգնողական աշխատանքներ:

Փոքր Եկեղեցին ավելի հին է, հավանաբար 5-րդ դարի:

Լմբատավանք կամ Լմպատի վանքի Ս. Ստեփանոս Եկեղեցի: ճարտարապետական հուշարձան է, Արթիկից մոտ 2 կմ հարավ-արևմուտք: “Պահպանված արձանագրությունները շինարարության մասին տեղեկություն չեն պարունակում, ըստ ճարտարապետների վերլուծության՝ VI դարի կառույց է:

Լմբատավանքը ունի խաչաձև հատակագիծ և՝ դրսից, և՝ ներսից, ութանիստ թմբուկով, ունի գմբեթ: Խորանն ու կամարները պայտաձև են: Ըստ արձանագրության՝ գմբեթը X դարում վերանորոգվել է: Խորանում և նրանից աջ ու ձախ մասերում պահպանվել են որմնանկարների մնացորդներ. կենտրոնում եղել է զահակալ քրիստոսը, շուրջը՝ Երկնային ուժերի խորիրդանիշեր: Աջ և ձախ մասերին պատկերված են դեպի խորանի կենտրոնը շարժվող Երկու ծիավոր՝ ծեղզներին խաչավարտ ցուպով: Որմնանկարները հարթապատկերային են, տեղ-տեղ գրաֆիկական մոտեցումով, կատարված են հյութեղ, գուներանգային մեծ ներդաշնակությամբ:

Սեր Ժողովրդի պատմության հայտնի վայրերից է Շիրակի Ազատան գյուղը, որը նախկինում կոչվել է Խլի-Ղարաքիլիսա (նաև փոքր Ղարաքիլիսա): Այն Արևելյան Դայաստանի մի շարք այլ բնակավայրերի հետ միասին նշանավոր դարձավ ուսու-պարսկական Երկրորդ պատերազմի ժամանակ: Այստեղ 1826 թ. հուլիսին գյուղացիները, միացած ոուս սահմանապահ զինվորների հետ,

հերոսական դիմադրություն են ցույց տվել դեպի Գյումրի արշավող Դասան խանի զորքերին:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Բնակչությունը

Ծիրակի մարզը մեր հանրապետության հնագույն հայաբնակ տարածքներից մեկն է: Մարզի ներկայիս տարածքը կազմում է պատմական Ծիրակ գավառի արևելյան մասը: Ծիրակի այսօրվա բնակչության նախնիներն այստեղ հաստատվել են XIX դ. առաջին տասնամյակներից սկսած, երբ ոուս-պարսկական (1804-1813 թթ. և 1828 թ.) և ոուս-թուրքական (1828-1830 թթ.) պատերազմներից հետո Արևելյան Ծիրակը մտավ ոուսական կայսրության կազմի մեջ: Ներգաղթողների մեջ գերակշռում էին Կարսից, Կարինից, Բիրլիսից, Սուլշից, Վանից, Դիարբեքիրից, Բասենից և Սասունից տեղափոխված հայ ընտանիքները: Դամենատարար կարծ ժամանակամիջոցում նոր բնակեցված տարածքը շենացավ: Արդեն 1837 թ. հնագույն Կումայրի գյուղից արևմուտք, Ախուրյանի ծախափնյակում հիննադրվեց նոր բերդաքաղաք և կոչվեց Ալեքսանդրապոլ ի պատիվ Ալեքսանդրիա կայսրություն, որը դարձավ ոուսական գորանիստ-կենտրոն:

Տարական կառավարության կողմից հայկական մարզում անցկացված առաջին աշխարհագրի տվյալների համաձայն 1831 թ. ներկայիս Ծիրակի մարզում կար յոթանասունյոթ գյուղական բնակավայր, որոնց բնակչության թիվը կազմում էր 20260 մարդ (38, էջ 58, 62, 66-68, 75-76): Գերակշռում էին նանր և միջին մեծության գյուղական բնակավայրերը: Գյուղերի միջին մարդաշատությունը կազմում էր 263 մարդ: Դազարից ավելի բնակչություն ունեին ընդամենը երկու բնակավայր Կումայրին (Գյումրին): 3444 բնակիչ և Ազատանը՝ 1450 բնակիչ: Բնակչության միջին խտությունը կազմում էր 7.5 մարդ/կմ²: Դամենատարար խիստ էին բնակեցված ներկայիս Ախուրյանի և Արքիկի տարածաշրջանները, որոնցում բնակչության խտությունը կազմում էր համապատասխանաբար 26.4 և 9.5 մարդ/կմ²: Մնացած շրջաններում բնակչության խտությունը չէր անցնում 7 մարդուց: Ներկայիս Աշոցքի տարածաշրջանում այն կազմում էր ընդամենը 2.6 մարդ/կմ² (հաշվարկները կատարվել են գրականության ցանկում նշված թիվ 38 սկզբնադրյուրի տվյալների հիման վրա):

Մինչև XIX դ. վերջը Շիրակի մարզի բնակչությունն ավելացել է ավելի քան չորս անգամ (աղ.1), բնակավայրերի թվաքանակը կրկնապատվել: Բնակչության և բնակավայրերի թվաքանակի նման աճը պայմանավորված էր ինչպես բնական շարժով, այնպես էլ այդ ընթացքում շարունակվող ներգաղթով: 1877-78 թթ. ոուս-թուրքական պատերազմից հետո (Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համաձայն), ինչպես նաև համիլյան հայկական ջարդերի պատճառով (մինչև 1896 թ.) Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հայ բնակչության մի ստվար զանգված տեղափոխվեց Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններ, այդ թվում նաև Շիրակի մարզ:

Մարզի բնակչության թիվը համեմատաբար դանդաղ է աճել 1897-1926 թթ. ընթացքում: Մոտ 30 տարվա ընթացքում այն չի աճել 10 հազարից: Հասկանալի է, որ եթե չլինեին 1914-1920 թթ. մահաբեր տարիները, ապա այդ ավելացումն ավելի մեծ կլիներ, մանավանդ, որ այս տարիներին ևս, հատկապես Մեծ Եղեռնից հետո, շարունակվում էր ներգաղթը Արևմտյան Հայաստանից:

Աղյուսակ 7

Շիրակի մարզի բնակչության և բնակավայրերի շարժընթացը
1831-2001 թթ.
(սկզբնաղբյուրներ՝ 11, 38, 19 և 77 վիճակագրական ծառայության
տվյալներ)

Տարեթիվ	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Ընդունակ հսկողություն	Գույնական հսկողություն	Գույնական հսկողություն	Գույնական հսկողություն
	գյուղ.	քաղաք.	ընդամենը	քաղաք.	գյուղա- կան				
1831	77	-	20260	-	20260	7.5	7.5	263	
1897	147	1	125475	30616	94859	47.0	36.0	645	
1926	148	1	135130	42313	92817	50.4	35.0	627	
1959	139	4	214294	122235	92059	80.0	35.0	662	
1970	128	5	286241	184932	101309	207.0	39.0	791	
1979	128	5	332606	229650	102956	124.0	39.0	804	
1989	122	5	319643	213415	106228	119.0	41.0	870	
1995	128	3	356800	241900	114900	133.0	44.0	897	
2001	128	3	362100	242900	119200	145.0	48.0	931	

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Շիրակի մարզում խորհրդային իշխանության տարիներին տեղի է ունեցել

բնակչության թվաքանակի համեմատաբար կայուն աճ: Բնակչության թիվը 1926-1979 թթ. ավելացել է մոտ 2.5 անգամ: Հետագա տասը տարիների ընթացքում ևս ըստ էության, տեղի է ունեցել բնակչության թվաքանակի ավելացում, սակայն 1988 թ. դեկտեմբերի 7-ի աննախադեպ աղետալի երկրաշարժը, որն ըստ պաշտոնական տվյալների, խլեց ավելի քան 25 000 մարդու կյանք, զգալի ազդեցություն թողեց մարզի բնակչության թվի հետագա շարժներցի վրա:

ԽՍՀՄ-ի փլուզումը և դրան հաջորդած քաղաքական ու սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունները, ինչպես նաև վերջին տաս-տասներկու տարիների ընթացքում մեր տարածաշրջանում տիրող լարված քաղաքաաշխագրական իրավիճակն ու հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա: Շիրակի մարզում այս ամենին գումարվում են նաև 1988 թ. երկրաշարժի պատճառած վնասներն ինչպես բուն հասարակական ոլորտում, այնպես էլ բնակչության սեռատարիքային կառուցվածքում առաջացրած անցանկալի և դեռևս շարունակվող հետևանքները (Ըստ Շիրակի մարզպետարանի տվյալների 2001 թ. դրությամբ մարզի աշխատունակ բնակչությունից 30 հազարը գործազուրկ էր, 11 հազար ընտանիք ապրում էր տնակներում, 28 հազար մարդ ստանում էր նպաստ):

Ժողովրդագրական և սոցիալ-հասարակական իիմնախնդիրների առունով առավել կարևոր և կիրառական է ինչպես ՀՀ, այնպես էլ Շիրակի մարզի համար, բնակչության թվաքանակի դինամիկայի պատկերը հատկապես վերջին տասնամյակների և մասնավորապես հանրապետության անկախացումից հետո: Չնայած պաշտոնական վիճակագրության տվյալների հանաձայն 1989-2001 թթ. ընթացքում մարզում մշտական բնակչության թվաքանակն ավելացել է ավելի քան 42400 մարդով (13.3%), սակայն մարզի առկա բնակչության թվաքանակը դեռևս շարունակվող արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է, քան մշտական բնակչության համար թիվ 7 աղյուսակում բերված տվյալը (362.1 հազ.): Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Շիրակի մարզում, առկա բնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի տվյալները բացակայում են շարունակվող արտագաղթի բերահաշվառնան պատճառով: ՀՀ-ից արտագաղթի վերաբերյալ առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով, որն ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի տվյալների 1992-2000 թթ. կազմել է մոտ 644 հզ. մարդ:

Սկսած 2000 թ. մայիս-հունիսից՝ այդպիսի հաշվառում է իրականացվում նաև երկարգծի և ավտոտրանսպորտային միջոցների նկատմանք՝ 2000-2001 թթ. այդ միջոցներով մեկնողների թիվը ժամանողներին գերազանցել է 26.9 հզ. մարդով։ Դետևաբար, անենահամեստ հաշվարկներով, այժմ հանրապետության բնակչության թվաքանակը մոտ 671 հզ.-ով պակաս է մշտական բնակչության թվաքանակից, կամ մշտական բնակչության գրեթե 18%-ը բացակայում է հանրապետությունից։ Եթե նկատի ունենանք, որ վերը նշված երևույթը բնորոշ է հանրապետության բոլոր մարզերին, ապա կիրառելով նճանակության սկզբունքը, կարող ենք նշել, որ Շիրակի մարզի առկա բնակչության թվաքանակը ևս առնվազը 18%-ով պակաս է մշտական բնակչությունից և կազմում է մոտ 296 900 մարդ։

Թիվ 7 աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակի մարզում, հատկապես խորհրդային իշխանության տարիներին, առավել արագ տեմպերով աճել է քաղաքային բնակչությունը։ Եթե 1897 թ. մարզի ներկայիս տարածքում գյուղական բնակչության թվաքանակը 3.1 անգամ գերազանցում էր քաղաքային բնակչության թվաքանակին, իսկ 1926 թ. 2.2 անգամ, ապա աղյուն 1959 թ. մարզի քաղաքայնացման մակարդակը կազմում էր 57%, ընդ որում այդ ժամանակահատվածում մարզի բնակչության թվաքանակն ավելացել է բացառապես քաղաքային բնակչության հաշվին (աղ. 7)։ Դետագա ավելի քան 42 տարվա ընթացքում քաղաքայնացման մակարդակը մարզում բարձրացել է ևս 10%-ով և այժմ կազմում է 67%։ Այդ նույն ժամանակ մարզի գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ընդամենը 1.3 անգամ։ Իսկ, օրինակ, 1995-2000 թթ. ընթացքում մարզի գյուղական բնակչության թվաքանակը ոչ միայն չի ավելացել, այլ նվազել է ավելի քան 2000-ով։ Բացի այդ, 1970-2000 թթ. Շիրակում գյուղական բնակչության թվաքանակի ավելացում տեղի է ունեցել իիմնականում Ախուրյանի և նասաճք Արթիկի ու Անիի տարածաշրջանների հաշվին (աղ. 8)։ Իսկ, օրինակ, Անասիայի տարածաշրջանում 1970 թ. համենատությամբ բնակչության թվաքանակը նվազել է ավելի քան 2.3 անգամ, Աշոցքի տարածաշրջանում՝ այն ավելացել է ընդամենը 800 մարդով։

Անցած տասնամյակների ընթացքում Շիրակում որոշակի փոփոխություններ են կրել նաև բնակավայրերի թիվը և դրանց նիշին մարդաքանակը։ Մարզի բնակավայրերի առավելագույն թվաքանակը եղել է 1926 թ.՝ 149 բնակավայր, (աղ. 7)։

Աղյուսակ 8

Հիրակի մարզի գյուղական բնակչության թվաքանակի շարժմներացն ըստ նախկին վարչական շրջանների (1970-2001 թթ.)
(Ակգրնադրյուրներ՝ 25, էջ 149 և 77 վիճակագրական ծառայության տվյալներ)

Վարչական շրջաններ	Գյուղական բնակչության թվայն ըստ տարիների				
	1970 թ.	1979 թ.	1989 թ.	1994 թ.	2001 թ.
Ախուրյանի	34910	35811	38117	51685	47700
Անասիայի	18809	20576	19497	13443	8600
Աթիի	13116	12899	12526	15002	16200
Աշոցքի	9991	9277	9424	11210	12200
Արդիկի	24483	24393	22931	29626	34500
Հիրակի մարզ	101309	102956	102495	120966	119200

Մինչև 1938 թ. մարզում կար ընդամենը մեկ քաղաքային բնակավայր (Գյումրին): Դետագա երկուսուկես տասնամյակի ընթացքում մարզում հիմնադրվել են ևս մեկ քաղաքային բնակավայր և երեք քաղաքատիպ ավան (Արդիկ, Անիպեմզա, Սարալիկ և Պենզաշեն): Սարգի քաղաքային բնակավայրերի բնակչության թվի շարժմների և մի քանի այլ ցուցանիշների մասին պատկերացում է տալիս թիվ 9 աղյուսակը:

Աղյուսակ 9

Հիրակի մարզի քաղաքները
(Ակգրնադրյուրներ՝ 19, 38 և 77 վիճակագրական ծառայության տվյալներ)

Տար ակց առա գու թ	Մար զան ան հայ տու թու	Մար զան ան հայ տու թու	Մար զան ան հայ տու թու	Մար զան ան հայ տու թու	Բնակչության թիվն ըստ տարիների							
					1831	1926	1959	1970	1979	1989	2001	
Գյումրի	1840	116	Գյումրի	3444	42 85	108446	164966	205922	178251	210900		
Արդիկ	1945	105	Արդիկ	647	3 168	9 071	13 323	16 343	24 774	24 100		
Անիպեմզա	1938	105	Անի-7	-	196	1119	720	569	463	461		
Սարալիկ	1962	95	Սարալիկ	371	1646	2177	3311	4229	6545	7 900		
Պենզաշեն	1958	103	Պենզաշեն	191	1331	3599	2612	2587	3382	2913		

Ըստ 1995 թ. դեկտեմբերի 4-ի ընդունված 77 վարչատարածքային բաժանման նոր օրենքի փոխվեց մինչև այդ գյուղյուն ունեցող քաղաքային բնակավայրերի տարբերակման կարգը հան-

րապետական ենթակայության քաղաք. շրջանային ենթակայության քաղաք և քաղաքատիպ ավան: Դրա հետևանքով Շիրակի մարզում Անիպենզա և Պենզաշեն քաղաքատիպ ավանները ներկայումս դասվում են գյուղական բնակավայրերի շարքին:

Առավել նշանակալից են գյուղական բնակավայրերի թվաքանակում տեղի ունեցած տեղաշարժերը: 1831-1926 թթ. ընթացքում մարզում գյուղական բնակավայրերի թիվն ավելացել է ուղիղ երկու անգամ: Այնուհետև, 1926-1970 թթ. ընթացքում մարզում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է հասնելով մինչև 128-ի: Այդ թվաքանակն էլ պահպանվում է մինչև օրս: Շիրակում գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները 1926-2001 թթ. ընթացքում ունի հետևյալ պատկերը. մարզում այդ ընթացքում վերացել է 18 գյուղ և 7 գյուղական տիպի բնակավայրեր, քաղաք են դարձել 4 գյուղ, այլ բնակավայրերի են միացել 5 գյուղ, կազմավորվել են 5 նոր գյուղ: Ներկայումս մարզն ունի 116 գյուղական համայնք և 128 գյուղական բնակավայր:

Մարզի առանձին տարածաշրջանների գյուղական բնակավայրերի թիվը և դրանց միջին մարդաշատության կրած փոփոխությունները տրված են թիվ 10 աղյուսակում:

Լեռնային երկրներում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բնակչության և բնակավայրերի շարժընթացի ուսումնասիրությունն ըստ բարձրության գոտիների: Սովորաբար, ամբողջ աշխարհում վերջին տասնամյակների ընթացքում նկատելի է բնակչության հոսքը բարձրադիր լեռնային շրջաններից դեպի ցածրադիր հարթավայրային շրջաններ: Այս ինաստով բացառություն չի կազմում նաև Շիրակի մարզը, որը հանրապետությունում առանձնանում է տարածքի հիպսոմետրիկ համենատարբար բարձր դիրքով՝ մարզի տարածքի ավելի քան 75%-ը ընկած է ծովի մակարդակից 1500-2500 մ բարձրության գոտում, իսկ 1400-1500 մ բարձրության գոտում ընդամենը 11.6%-ը (33, էջ 156):

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Շիրակում վերջին տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել բարձրադիր լեռնային շրջանների բնակչության և բնակավայրերի թվաքանակի նվազում և ընդհակառակ առավել ցածրադիր գոտում բնակչության և բացարձակ թվաքանակի, և տեսակարար կշռի ավելացում: Մարզի 2000 մ-ից բարձր գոտիներում գյուղական բնակչության բացարձակ թիվը ոչ միայն չի ավելացել, այլ 2000 թ. 1926 թ-ի համենատությամբ նվազել է մոտ 2 անգամ, գյուղերի թիվը նվազել է 6-ով: Մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի շարժընթացի մասին ըստ բարձրության գոտիների հանգանանալից պատկերացում է տալիս թիվ 11 աղյուսակը.

Սյուլսակ 10

Ծիրակի մարզի գյուղական բնակավայրերի և գյուղերի միջին մարդաշատության շարժընթացը (1831-2000 թթ.)
(Սկզբնաղբյուրներ՝ 25, էջ 54, 38 և ՀՀ վիճակագրական ծառայության տվյալներ)

Տարա- ծաշրջաններ	1831 թ.	1926 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1988 թ.	2000 թ.	Մարդու մասնաշտատություն						
	Միավոր գյուղեր	Միավոր համայնքատարածություն	Միավոր մարդու մասնաշտատություն	Միավոր գյուղեր	Միավոր մարդու մասնաշտատություն	Միավոր գյուղեր	Միավոր մարդու մասնաշտատություն							
Ախուրյանի	27	424	39	712	38	849	33	1058	33	1023	33	1155	35	1137
Ամասիայի	3	149	32	321	30	437	26	723	26	791	26	750	26	308
Անիի	13	198	26	634	23	724	21	625	21	645	18	783	19	815
Աշոցքի	7	129	27	424	26	374	26	384	26	371	25	377	25	431
Արթիկի	27	181	24	1118	21	955	22	1113	22	1109	22	1042	23	1383
Ծիրակի մարզ	77	263	148	627	138	665	128	791	128	804	122	840	128	882

Ծիրակի մարզի ներկայիս տարածքում տարաբնակեցման ցանցի ծևավորումից հետո բնակչության թվաքանակի ավելացումը տեղի է ունեցել հիմնականում բնական աճի ճանապարհով: Միաժամանակ, որոշակի դեր է ունեցել նաև ներգաղթը, հատկապես հարևան Վրաստանից: Տասնամյակներ շարունակ Ծիրակի մարզին բնորոշ է եղել համեմատաբար բարձր ծննդիությունը, ցածր մահացությունը և բարձր բնական աճը: Այսպես, 1914 թ. մարզի ներկայիս տարածքում 1 000 բնակչի հաշվով ծննդիությունը կազմել է 35, մահացությունը՝ 19, բնական աճը՝ 16 մարդ: Խնկ ահա 1978 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 38, 10 և 28 մարդ (10, էջ 16):

Վերջին տասնամյակի ընթացքում հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը և շարունակվող արտագաղթը իրենց անմիջական ազդեցությունն են թողել ՀՀ բնակչության ժողովրդագրական իրավիճակի և մասնավորապես ծննդիության ցուցանիշի վրա: Ծիրակի մարզում այդ հանգանաքն առավել ցայտուն է դրսևորվում, քանի որ այստեղ գումարվում են նաև երկրաշարժի շատ ծանր հետևանքները: Մարզում ծննդիության և բնական աճի ցուցանիշների նվազում տեղի է ունեցել հատկապես վերջին 4-5 տարիների ընթացքում (աղ. 12):

Ծիրակի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի
շարժմանը ըստ բարձրության գոտիների (1926-2000 թ.)
(Սկզբնադրյուրներ՝ 25, էջ 146-147 և 77 վիճակագրական
ծառայության տվյալներ)

Տարեթիւր	Գյուղական բնակչություն	Գյուղական բնակչության թիվը	Գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների					
			մինչև - 1400մ	1400-1600	1600-1800	1800-2000	2000-2200	2200-ից բարձր
1	2	3	4	5	6	7	8	9
1926	148	92817		(39)26390 28.4	(36)30082 32.4	(41)26156 28.2	(31)10037 10.8	(1)152 0.2
1959	138	91796		(36)31336 34.1	(33)26820 29.2	(42)24561 26.8	(25)8725 9.5	(2)354 0.4
1970	128	101309		(35)33368 32.9	(28)26080 25.8	(38)30724 30.3	(25)10780 10.6	(1)349 0.4
1979	128	102956		(35)34726 33.7	(29)26342 25.6	(38)30326 29.5	(25)11275 10.9	(1)287 0.3
1988	122	102495		(31)37744 36.8	(27)24069 23.5	(38)30284 29.5	(25)10228 10.0	(1)170 0.2
1994	122	120966		(31)49500 40.9	(27)30459 25.2	(38)34216 28.3	(25)6576 5.4	(1)215 0.2
2000	128	112857	(1)*461** 0.5	(34)44278 39.3	(29)30321 26.7	(38)32297 28.6	(25)5310 4.7	(1)190 0.2

(1)* - գյուղական բնակավայրերի թիվը բարձրության գոտում
461** համարիչում գյուղական բնակչության թիվը. հայտարարում:

0.5 նույնը լուկուով

2001 թ. մարզում ծննդիության ցուցանիշը 1992 թ-ի համեմատությամբ նվազել է 2.7 անգամ: Այդ նույն ժամանակ բնական աճը մարզում նվազել է ավելի քան 9 անգամ: Դասկանալի է, որ Ծիրակի մարզում բնակչության վերարտադրության ներկայիս առկա նիտումների պահպանումը կամ հետագա զարգացումն ամենին էլ չի բխում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման շահերից: Դատկապես փոքր և միջին մեծության գյուղական բնակավայրերում տեղի է ունենում բնակչության ծերացում, դժվարանում է դպրոց, մանկապարտեզ, բուժմետ և սոցիալական սպասարկման այլ օբյեկտներ պահելը:

Աղյուսակ 12

Ծիրակի մարզի բնակչության վերարտադրությունը
(1 000 մարդու հաշվով)

Տարեթվեր	Ծննդիրություն	Սահացություն	Բնական աճ
1992	21.4	6.9	14.5
1993	17.0	7.2	9.8
1994	15.5	6.1	9.4
միջինը 1992-1994 թթ	17.9	6.8	11.1
1995	12.3	6.5	5.8
1999	9.5	6.6	2.9
2000	8.5	6.4	2.1
2001	7.8	6.2	1.6

Մարզի բնակչության վերարտադրության ցուցանիշները 1999-2001 թթ. ըստ առանձին տարածաշրջանների և Գյումրի քաղաքի տրված են թիվ 13 աղյուսակում:

Աղյուսակ 13

Ծիրակի մարզի բնակչության վերարտադրության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 1999-2001 թթ. (1000 մարդու հաշվով)
(Ակգրնադրյուրներ՝ 18 և 24)

հ/հ	Տարածքի անվանումը	Ծնունդ			Մահ			Բնական աճ		
		1999	2000	2001	1999	2000	2001	1999	2000	2001
1	Գյումրի	8.6	7.9	7.0	6.8	6.6	6.4	1.8	1.3	0.6
2	Ախուրյան	9.8	7.7	9.3	7.1	6.4	6.8	2.1	1.3	2.5
3	Արրիկ	10.7	10.5	8.8	6.0	5.5	5.8	4.7	5.0	3.0
4	Աճի	11.0	9.5	8.7	6.3	6.0	6.2	4.7	3.5	2.5
5.	Անասիա	7.9	5.1	8.5	4.6	4.3	5.3	3.3	0.8	3.2
6.	Աշոցք	13.0	13.0	18.3	6.0	7.3	9.2	7.0	5.7	9.1
	Ընդամենը	9.5	8.5	7.8	6.6	6.4	6.2	2.9	2.1	1.6

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների Ծիրակի մարզում բնակչության մեխանիկական շարժը (միգրացիան) ունի հետևյալ պատկերը: 1997 և 1998 թթ. մարզում միգրացիայի ծավալը կազմել է համապատասխանաբար 2882 և 2610 մարդ: Ըստ որում և 1997 թ., և 1998 թ. միգրացիայի սալդոն եղել է բացասական (1997 թ. եկողներ՝ 1 048 մարդ, մեկնողներ՝ 1 798 մարդ, 1998 թ. եկողներ՝ 988 մարդ, մեկնողներ՝ 1 622 մարդ): Նկատենք նաև, որ 1990-ական թվականների առաջին կեսի համեմատությամբ (նորից ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների) մարզում տեղի է

ունեցել միգրացիայի ծավալի նվազում: 1992, 1993 և 1994 թթ. մարզում միգրացիայի ծավալը կազմել է համապատասխանաբար 5846, 5212 և 4 485 մարդ: Ընդ որում, այդ երեք տարիներին էլ միգրացիայի սալդոն եղել է բացասական (1992 թ. 669, 1993 թ. 1744, 1994 թ. 1839 մարդ): և ունեցել աճման միտում: Յետևաբար, եթե հիմք ընդունենք պաշտոնական վիճակագրության տվյալները, պետք է արձանագրենք, որ 1990-ական թվականների վերջին մարզում նվազել են և՝ միգրացիայի ծավալը, և՝ միգրացիայի բացասական սալդոն: Բայց հարկ ենք համարում նշել նաև, որ պաշտոնական վիճակագրությունը միգրացիայի վերաբերյալ արձանագրում է նիստ 77 ՆԳ Նախարարության տարածքային անձնագրային ծառայությունների տվյալները: Սակայն բոլորին էլ հայտնի է, որ շատ քաղաքացիներ հանրապետությունից մեկնում են, մշտական կամ ժամանակավոր, առանց անձնագրային բաժիններից դուրս գրվելու: Յետևաբար, այնքան էլ ծիշտ չէ այն ենթադրությունը, թե մարզում միգրացիայի ծավալը կամ էլ սալդոն նվազել են:

Հայտնի է, որ բնակչության սեռատարիքային կառուցվածքի վերաբերյալ արժանահավատ տվյալներ են ստացվում միայն մարդահանարների միջոցով: Ուստի, ծեռքի տակ չունենալով վիճակագրական թարմ տվյալներ, նպատակահարմար ենք համարում ներկայացնել Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքն ըստ 1989 թ. մարդահանարի տվյալների, որը հնարավորություն կտա այնուհետև այդ տվյալները համեմատելի դարձնել 2001 թ. հոկտեմբերին անցկացված մարդահանարի տվյալների հետ և անել համապատասխան հետևողաբար տվյալներուն:

Աղյուսակ 14

Շիրակի մարզի մշտական բնակչության բաշխումն ըստ սեռի
(1989 թ մարդահանարի տվյալներով)

Քաղաքներ և տարածաշրջաններ	Մշտական բնակչությունը		1000 բնակչին ընկանում է	
	տղամարդ	կին	տղամարդ	կին
ք.Գյումրի	87781	90470	492	508
ք Արթիկ	11884	12890	480	520
ք.Սարալիկ	3174	3371	485	515
Ախուրյանի	21355	19808	519	481
Անսախայի	5827	5721	505	495
Ամիկի	6398	6461	498	502
Աշոռքի	5515	5258	512	486
Արթիկի	14914	14971	499	501
քտա Պեմզաշեն	1698	1684	502	498
քտա Անիպեմզա	223	240	482	518
Դեղամենը նազում	158769	160874	497	503

Սույուսակ 15

Հիրակի մարզի մշտական բնակչության տարիքային կազմը (1989 թ.)
(1989 թ. մարդահանարի տվյալներով)

Քաղաքներ և տարածա- շրջաններ	Բնակչու- թյան թիվը	այդ թվում բաժն տարիքային խմբերի					Աշխատունակ տարիքում
		մինչև 14	15-24	25-49	50-64	65-ից բարձր	
ք.Գյումրի	178251	49760	29808	64157	26112	8414	104364
ք.Արքիկ	24774	7600	3922	8963	3284	1005	14326
ք.Սարալիկ	6545	2289	1050	2318	651	237	3560
քտա Պենգաշեն	3362	1057	597	1080	478	150	1858
քտա Անիպենգա	463	164	67	148	52	32	240
Ախուրյանի	41163	11676	7513	13310	6570	2094	23925
Անասիայի	11548	3582	2553	3216	1789	408	6517
Անիի	12859	4085	2446	3776	1890	662	6993
Աշոցքի	10773	3314	2086	3320	1574	479	6158
Արքիկի	29885	9168	5226	9259	4644	1588	16494
Ընդամենը	319623	92695	55268	109547	47044	15069	184435
Հիրակի մարզում							

Ազգային կազմի տեսակետից Հիրակը ներկայում նայաս-
տանի հանրապետության առավել միաստար մարզերից մեկն է:
1989 թ. տվյալների համաձայն մարզի քաղաքային բնակչության
ազգային կազմում հայերը կազմել են բնակչության գրեթե 98%-ը,
իսկ գյուղական վարչական շրջաններում մոտ 92%: Դասկանալի է,
որ այսօրվա դրությանք այդ ցուցանիշներն ավելի բարձր կլիմեն:
Մարզի բնակչության ազգային կազմի ներկայիս պատկերը պարզ
կլիմի 2001 թ. հոկտեմբերին անցկացված մարդահանարի արդ-
յունքների ամփոփումից հետո: Միաժամանակ, կարող ենք ընդ-
գծել, որ ի տարբերություն հանրապետության մի քանի այլ մարզե-
րի (օրինակ՝ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի և այլն) Հիրակում
ազգային փոքրամասնությունները եզրիները (եզրի քրդերը),
հովտները, ասորիները և այլոք, համեմատաբար փոքր տոկոս են
կազմում և չկան ազգային փոքրամասնություններով բնակեցված
առանձին տարածքներ կամ բնակավայրեր: Ազգային փոքրամաս-
նությունները Հիրակում ցրված են մարզի տարբեր բնակավայրե-
րում և առավել շատ ապրում են Գյումրիում:

Դայաստանի հանրապետության նման Հիրակի մարզը ևս
առանձնանում է բնակչության խիստ անհավասարաշափ տեղա-
բաշխմամբ: Չնայած մարզը բնակչության խոռոչյանք (143 մարդ/կմ²)
գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը, սակայն դա

ամենակին չի արտահայտում Ծիրակի տարածքի իրական բնակեցվածության և տարածքային ռեսուրսների օգտագործման աստիճանը: Բանի որ մարզի բնակչության մոտ 68%-ը բաժին է ընկնում Գյումրի, Արթիկ և Սարալիկ քաղաքներին և միայն Գյումրիում ապրում է մարզի ամբողջ բնակչության գրեթե 59%-ը: Վերջինս իր շրջակա բնակավայրերի հետ միասին (Ախուրյանի տարածաշրջանը) գրաղեցնում է մարզի տարածքի մոտ 23%-ը, սակայն այստեղ կենտրոնացված է Ծիրակի բնակչության ավելի քան 71%-ը: Այստեղ բնակչության խտությունը կազմում է 418, իսկ առանց Գյումրի քաղաքի 84 մարդ/կմ²: Մարզի բնակչության բաշխումը (2001 թ. հունվարի 1-ի դրությամբ) ըստ քաղաքային բնակավայրերի և առանձին տարածաշրջանների տրված է թիվ 16 աղյուսակում:

Աղյուսակ 16

Ծիրակի մարզի մշտական բնակչության թվաքանակը (հազ. մարդ) (1.01.2001 թ.) ✓

Քաղաքներ և տարածաշրջաններ	Բնակչության թիվը			Զքաղեցրած տարածքը (կմ ²)	Գյուղական բնակչության խտությունը (մարդ/կմ ²)
	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական		
ք. Գյումրի	210.9	210.9		50	
Ախուրյանի	4.7		47.7	568	84
Ամասիայի	8.6		8.6	608	14
Աշոցքի	12.2		12.2	547	22
Ամինի	24.1	7.9	16.2	423	38
ք. Սարալիկ	7.9	7.9			
Արթիկի	58.6	24.1	34.5	477	72
ք. Արթիկ	24.1	24.1		6	
Ծիրակի մարզ	362.1	242.9	119.2	2679	46

Ծիրակի մարզում գյուղական բնակչության խտությունը (44 մարդ/կմ²) մոտավորապես հավասար է հանրապետությունում գյուղական բնակչության միջին խտությանը: Սակայն տարածաշրջանների միջև այդ ցուցանիշը ունի նկատելիորեն մեծ տարբերություն (աղյուսակ 17): Մարզի գյուղական բնակչության 41.5%-ը բաժին է ընկնում միայն Ախուրյանի տարածաշրջանին, իսկ Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններին միասին 70.0%-ը: Դրան հակառակ Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, որոնց բաժին է ընկնում Ծիրակի մարզի տարածքի 43%-ը, ապրում է մարզի գյուղական բնակչության ընդամենը 16.6%-ը (աղյուսակ 17):

Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությանը՝ 882 մարդ, Ծիրակը 1.4 անգամ գիշում է ՀՀ միջին ցուցանիշը, այն դեպքում, եթե Ծիրակի մարզի ամբողջ տարածքում գյուղատնտեսա-

կան հողահանդակների տեսակարար կշիռը (63%) հանրապետության միջին ցուցանիշից բարձր է 1.3 անգամ: Դա նշանակում է, որ մարզի գյուղատնտեսական հողահանդակներն արդյունավետ չեն օգտագործվում: Քանի որ բազմաթիվ այլ գործոնների թվում տարածքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը կախված է նաև բնակչության խտությունից, գյուղական բնակավայրերի նարդաշատությունից և խտությունից: Տարածքի բնակեցվածության աստիճանն իր անմիջական ազդեցությունն է թողոնում տարածքի յուրացման և նրանում առկա բնական այլ ռեսուրսների օգտագործման վրա:

Եթե Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի միջին նարդաքանակը մոտ է հանրապետության միջին ցուցանիշին (նույնիսկ մի փոքր գերազանցելով), ապա Անասիայի և Աշոցքի տարածաշրջաններում գյուղերի միջին նարդաշատությունը Շիրակի մարզի համապատասխան ցուցանիշից պակաս է մոտ 2.3 անգամ, իսկ ՀՀ գյուղերի միջին նարդաքանակից՝ 4.0-ից 2.9 անգամ: Մարզի առավել խոշոր և հայտնի գյուղերից են Ախուրյանը, Ազատանը, Անասիան, Աշոցքը, Փանիկը, Սառնաղբյուրը, Ուկեհասկը, Սարմաշենը, Անուշավանը, Ջոռոնը, Մեծ Մանթաշը, Փոքր Մանթաշը և այլն:

Ընդ որում, այդ երկու տարածաշրջաններում 1000-ից ավելի բնակիչ ունեն ընդամենը մեկական բնակավայր (նախկին շրջկենտրոնները), գյուղական բնակավայրերի գրեթե 80%-ը ունեն մինչև 500 բնակիչ (աղյուսակ 18): Այս երկու տարածաշրջաններում 44 գյուղական համայնքներից 17-ը (38.6%) ունեն մինչև 200 բնակիչ: Եթե այս ամենին ավելացնենք նաև այն հանգանանքը, որ Անասիայի և Աշոցքի տարածաշրջաններում 1 շնչին ընկնում է համապատասխանաբար 5 և 2.3 հա գյուղատնտեսական հողատարածք, որը հանրապետության միջինից բարձր է 4.4-2.0 անգամ, ապա էլ ավելի ակնհայտ կդառնա նշված շրջանների տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը:

Մարզի բնակչության քաշումը ըստ բարձրության գոտիների ունի հետևյալ պատկերը: Բնակչության հիմնական մասը՝ գրեթե 70%-ը, տեղաբաշխված է մինչև 1600 մ բարձրության գոտում: Այստեղ են գտնվում Գյումրի քաղաքը և 35 գյուղական բնակավայր: Դաշտոր՝ 1600-1800, 1800-2000 և 200-2200 մ բարձրության գոտիներին բաժին է ընկնում մարզի բնակչության համապատասխանաբար 18.7, 9.3 և 1.8%-ը: Մարզում 2200 մ-ից բարձր կա ընդամենը մեկ բնակավայր, ոյա Աշոցքի տարածաշրջանի Մարագյուղ բնակավայրն է:

Շիրակի մարզի գյուղական տարաբնակեցումը բնութագրող մի քանի ցուցանիշներ ըստ նախկին վարչական շրջանների տրված են թիվ 17, 18, 19 աղյուսակներում:

Եիրակի մարզի գյուղական տարաբնակեցումը բնութագրող մի քանի ցուցանիշներ ըստ նախկին վարչական շրջանների

Վարչական շրջաններ	Տարածքի մակերեսը մնալու պահանջմանը պահանջմանը (%)	Աղյուսակ 17										
		Աղյուսակ 17					Աղյուսակ 17					
Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	Աղյուսակ 17	
Ախուրյանի	22.6	75	46803	41.5	35	81	108	6.0	8.1	4.2	0.92	1337
Անասիայի	23.9	67	7996	7.1	26	13	20	4.3	6.4	4.8	5.1	308
Աճիի	16.8	64	15479	13.7	19	36	56	4.4	6.9	5.2	1.8	815
Աշոցքի	17.9	53	1077	9.5	25	24	45	5.5	10.3	4.7	2.3	431
Առթիկի	18.8	54	31809	28.2	23	67	123	4.8	8.9	4.7	0.8	1383
Ընդամենը Հարզում	100.0	63	112857	100.0	128	44	70	5.0	8.0	4.5	1.4	882

Բացի բնակչության խտությունից և բնակավայրերի մարդաշաւությունից տարածքի բնակեցվածությունը բնութագրող կարևոր ցուցանիշ են հանարվում նաև գյուղական բնակավայրերի խտությունը և բնակավայրերի միջև եղած միջին հեռավորությունը: Գյուղական բնակավայրերի խտությամբ Եիրակի մարզը հանրապետությունում գիշում է միայն Արմավիրի մարզին: Եիրակում յուրաքանչյուր 100 կմ²-ին բաժին է ընկնում 5 գյուղական բնակավայր (Արմավիրի մարզում՝ 7.5, հանրապետության միջինը՝ 3.2 բնակավայր/ 100 կմ²):

Չնայած ըստ առանձին տարածաշրջանների գյուղական բնակավայրերի միջին մարդաշատության մեծ տարբերություններին Եիրակում գյուղական բնակավայրերը բաշխված են քիչ թե շատ հավասարաչափ:

Շիռակի մարզի գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարդաշաբաթան խթնդիր (2000 թ.)

Աղյուսակ 18 65

Տարածաշրջաններ	Գյուղական բնակավայրերի խթավորումն ըստ մարդաշաբաթան										Ընդամենը
	մինչև 50	51-100	101-200	201-500	501-1000	1001-3000	3001-5000	5000-ից ավելի	Ընդամենը	Ընդամենը	
Ախուրյանի	1 -	45 -	- 3	195 246	4 5	1301 764	9 8	6596 3098	16 2	23932 1368	- 1
Անասիսի	- -	- -	- -	- -	- 2	905 991	7 10	4840 3417	6 5	6570 3241	1 1
Աշոքի	1 -	32 -	2 -	162 -	6 -	991 2	10 2	598 4264	6 15	2927 26947	- -
Արդիսի	- -	- -	- -	- -	- -	8319 1950	29 26	20309 62896	39 1	3164 14734	12 116
Եղանձն մարզում	2 77	5 408	12 12	1950 1950	26 26	8319 20309	29 39	62896 3164	1 12	112857 116	112857

Շիռակի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2000 թ.)

Տարածաշրջան	Բարձրության գոտիները (մ, ծովի մասմարդկանց)										Ընդամենը
	1 ^o	2 ^o	1	2	1	2	1	2	1	2	
Ախուրյանի	- -	- -	16 -	31754 -	13 5	12357 2737	6 7	2692 3827	- 14	- 1432	- -
Անասիսի	- -	- -	13 -	7328 -	2 -	2495 -	3 -	5195 14	- -	- -	35 26
Աշոքի	1 -	416 -	- -	- -	- -	- -	- -	- -	- -	- -	7998
Արդիսի	- -	- -	5 -	5196 -	9 -	12732 -	8 -	12977 7606	1 10	904 2974	1 1
Եղանձն մարզում	1 416	54 44278	29 30321	38 32297	25 25	5310 5310	1 1	190 190	- -	128 112857	- -

✓

Աղյուսակ 19

1^o-գյուղական բնակավայրերի թիվը նշված բարձրության գոտում
2^o- գյուղական բնակչության թիվը նշված բարձրության գոտում

Քաղաքային բնակավայրերը

Գյումրի: Գյումրիի տեղում ոչ վաղ երկրաբանական անցյալում գոյություն է ունեցել մի ընդարձակ լիճ: Արագածից ու Վրջոաղիծ (Ալաջա) հրաբխային զանգվածից իջած լավաների ստեղծած պատվարը փակել է Ախուրյանի ճանապարհը: Գետը Շիրակի դաշտի սահմաններում լիճ է գոյացրել: Դարյուր հազարավոր տարիների ընթացքում շրջապատի լեռներից ու Կարսի սարավանդից բերված տիղմն ու ավազը կուտակվել են լիճի հատակին՝ առաջացնելով նստվածքների հզոր շերտեր, վերջիններս հետագայում ծածկվել են հրաբխային արտավիժմվածքներով: Այս է պատճառը, որ այժմ Շիրակի դաշտի շատ հատվածներում լճային նստվածքների վրա սև և կարմիր տուֆի շերտեր կան, որոնք անհիշելի ժամանակներից օգտագործվում են որպես շինանյութ: Միաժամանակ շարունակվել է նաև Ախուրյան գետի քայլայիշ՝ երոզիոն գործունեությունը, որի հետևանքով այն կտրել է ոչ միայն լավային պատվարը, այլև խորացել է լճային նստվածքների մեջ և Գյումրիից արևմուտք առաջացրել է 100-120 մ խորությամբ ընդարձակ հովիտ: Փաստորեն Գյումրին գտնվում է Ախուրյանի բարձր դարավանդի վրա, որն ինքը՝ Շիրակի դաշտն է: Քաղաքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է մոտ 1550 մ: Այն զբաղեցնում է մոտ 90 քառ.կմ տարածք, ակոսվում է Չերքեզի, Զաջուռ գետի և այլ ձորերով:

Գյումրիի աշխարհագրական լայնությանն են համապատասխանում Ստումբուկ, Սալյոնիկ, Նեապոլ, Սյու-Յորը քաղաքները, որոնք ունեն հիմնականում մերձարևադարձային կլիմայական պայմաններ: Սակայն Գյումրիի կլիման չոր ցամաքային է: Շրջապատված լինելով լեռնային համակարգերով՝ այստեղ ձնուանը օդի նվազագույն ջերմաստիճանը կարող է հասնել մինչև -41° -ի, հունվարյան միջին ջերմաստիճանը -10° է: Զմեռային ամիսներին շրջապատի լեռներից Արագածից, Կարսի սարավանդից ու Աշոցքի բարձրլեռնային գոգավորությունից գիշերային ժամերին սառը օդը կուտակվում է Շիրակի դաշտում, այդ թվում նաև Գյումրիում, առաջանում է ցածր անպամածություն ու մառախուտ: Ցերեկային ժամերին գոգավորության հատակում նառախուղը չի ցրվում, մինչդեռ լեռնալանջերը տաքանում են, պարզ եղանակ և առաջանում, ու ջերմաստիճանը բարձրանում է: Այսինքն դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (հնվերսիա), որի պատճառով ավելի բարձրադիր Զաջուռում կամ Արթիկում ջերմաստիճանն ավելի բարձր է լինում, քան ավելի ցածրադիր Գյումրիում:

Ամուանը Գյումրիում տաք է: Յուլիսյան միջին ջերմաստիճանը $+19^{\circ}$ է, առավելագույնը՝ մոտ 36° : Տարվա ընթացքում մեծ է արևոտ օրերի թիվը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է մոտ $+6^{\circ}$, մթնոլորտային տեղումների տարեկան միջին ջանակը՝ մոտ 480 մն: Մասնագետների գնահատմամբ Գյումրիի կլիման առողջարար և կազդյուրիչ է:

Քաղաքի տարածքն այնքան էլ հարուստ չէ ջրային ռեսուրսներով, չնայած այստեղ հաշվում է մոտ 50 աղբյուր, սակայն խնելու համար անհրաժեշտ ջրի հիմնական նասը բերվում է Աշոցքի տարածաշրջանից: Քաղաքի մոտակայքով հոսում է հանրապետության ջրային խոշոր զարգերակներից մեկը՝ Արաքսի ծախափնյա վտակ Ախուրյանը:

Գյումրիի շրջակայքում հայտնաբերված են տարբեր գույնի տուֆի, բազալտի, ավագի ու կավի, դիատոմիտի և այլ ռեսուրսների բավականին պաշարներ: Առանձնապես անգնահատելի արժեք են ներկայացնում քաղաքի շրջակայքում տարածված սևահողային արգավանդ դաշտերը, որոնք այստեղ մշակվել են տակավին վաղ ժամանակներից:

Գյումրին ունի նպաստավոր տրանսպորտաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրք և Շիրակի մարզի, և հանրապետության մնացած տարածքների նկատմամբ: Պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար զարգացել, հարստացել և բազմակողմանի են դարձել քաղաքի աշխարհագրական դիրքի բաղադրիչները և այն բնութարող ցուցանիշները:

Նախկին Կումայրի գյուղական բնակավայրն իր աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ արդեն 19-րդ դարի 30-40-ական թվականներին դառնում է ռազմական նշանակության կենտրոն և գրուակայան: Կառուցվում է իր ժամանակի համար կարևոր նշանակություն ունեցող Ալեքսանդրապոլի բերդը: 19-րդ դարի վերջին Կարսի մարզը Ռուսաստանին միանալու և հատկապես Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Երևան և Ալեքսանդրապոլ-Կարս երկարուղագծերի շահագործմամբ էլ ավելի է բարելավվում Գյումրիի տնտեսաաշխարհագրական դիրքը, և ավելի ցայտուն է դառնում նրա կենտրոնական դիրքը հարևան տարածքների նկատմամբ:

Որպես բնակավայր՝ Գյումրին ունի բազմադարյան պատմություն: Գյումրիի տեղում երկրագործական մեծ բնակավայր է եղել դեռևս Ա.Ս. II-ի հազարամյակներում: Այդ բնակավայրը հայկական մատենագրության մեջ հիշատակվում է 8-րդ դարից Կումայրի անունով, որը ժողովուրդը հնչյունափոխելով դարձել է Գյումրի: Մինչև 19-րդ դարը Կումայրի-Գյումրին առանց նշանակալից զար-

գացման և փոփոխությունների մնում էր որպես կարևոր և ամրացված բնակավայր:

Քաղաքի գարզացումը և առաջադիմությունը սերտորեն կապված է Արևելյան Դայաստանը Ռուսաստանին միանալու հետ: Գյումրին և նրա շրջակայքը Ռուսաստանին միացվեցին 1804 թ.: 1829-30 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևատյան Դայաստանի տարրեր շրջաններից (իհմնականում Էրզրումի, Բայազետի և Կարսի) այստեղ գաղթած վերաբնակիչների հաշվին ավելացավ քաղաքի բնակչությունը: Քաղաքն ավելի ամրապնդվեց և հզրացավ Կումայիր գյուղից արևմուտք 1837 թ իհմնադրված բերդաբարձրով, որն ի պատճի Ալեքսանդրիա կայսրութու կոչվեց Ալեքսանդրապոլ (ժողովրդական անվանումով՝ Ալեքպոլ): 1840 թ.-ից Ալեքսանդրապոլն արդեն համարվում էր քաղաք, որը 1850 թ. դառնում է նորաստեղծ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի կենտրոնը:

Արդեն 19-րդ դարի 70-80-ական թվականներին Գյումրին ոչ միայն սահմանային բերդաքաղաք էր, այլ դարձել էր նաև առևտորի և արհեստագործության կենտրոն: Այնուհետև քաղաքի հետագա զարգացմանը մեծապես նպաստեցին նաև 1898-99 թթ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, 1899 թ. Ալեքսանդրապոլ-Կարս և 1902 թ. Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղագծերի կառուցումը, որոնց շնորհիվ այն դարձավ կարևորագույն երկաթուղային հանգույց: Բացի այդ, այստեղ էին հատվում մի քանի խճուղային ճանապարհներ, որոնք ևս նպաստում էին քաղաքի դերի բարձրացմանը:

Սկսած 19-րդ դարի կեսերից՝ Գյումրին (Ալեքսանդրապոլը) հայտնի արհեստավորական կենտրոն էր: Արհեստավորների թիվն այն ժամանակ անցնում էր 3000-ից (15, II հատոր, էջ 572): Առանձնապես զարգացած էին որմնադրությունը, քարտաշությունը, դարբնությունը, ատաղձագործությունը, պղնձագործությունը, թիթեղագործությունը, անազագօծությունը և այլ արհեստներ: Քաղաքում մեկը մյուսի հետևից աստիճանաբար կառուցվեցին գարեջրի, զովացուցիչ ջրերի, ալյաղաց, կրի, աղոյւսի, կաշվի վերամշակման, կոշկեղենի, կարի, մեխանիկական, օճառի, ճարպերի, մոմի և այլ արտադրական ծեռնարկություններ, որոնց արտադրանքը վաճառվում էր նաև Երևանի նահանգի և Կարսի մարզի տարածքներում: Եթե 1905 թ. քաղաքի արդյունաբերական արտադրանքը կազմում էր ռուսական ոսկով 90 000 ռուբլի, ապա 1910 թ. այն հասավ 504 հազ. ռուբլու (15, II հատոր, էջ 572): Արհեստագործության և տնայնագործության վերը նշված նյուինի զարգացումը ևս պատում էր նաև Ալեքսանդրապոլի ներքին ու արտաքին առևտորի զարգացմանը: Ներքին շուկայում լայն պահանջարկ ունեին արհես-

տավրական ապրանքները և գյուղատնտեսական մթերքները, որոնք լրացվում էին նաև Երևանից ու Երևանի, Եջմիածնի ու Սուրբ մալուի գավառներից։ Կարսի մարզից և Ռուսաստանից բերված ապրանքներով։ Տարեցտարի ավելանում էր քաղաքի ներքին ապրանքաշրջանառությունը։ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ այն կազմում էր տարեկան ավելի քան 5 մլն ռուբլի։ Քաղաքում կային հարյուրավոր խանութներ և կրապակներ։ Ալեքսանդրապոլը ռուս-թուրքական առևտուրական կարևոր հանգույցներից էր։ Քաղաքի հարավային կողմում գտնվող մաքսատունը հսկում և կարգավորում էր այդ առևտուրը։

Այսպիսով, 19-րդ դարի ընթացքում արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման, արիեստագործական և առևտուրական կապերի ընդարձակման շնորհիվ Ալեքսանդրապոլը 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբներին դարձել էր ոչ միայն Արևելյան Դայաստանի, այլ նաև Անդրկովկասի տնտեսական ու առևտուրական կարևոր կենտրոններից մեկը։

Տնտեսական կյանքին զուգահեռ Ալեքսանդրապոլում զարգանում էին նաև քաղաքային կյանքի մյուս բնագավառները։ Շուտով քաղաքում գործարկվում են Սանոյանի, Ղասաբյանի, Մալխասյանի, Միքայելյանների և Ափինյանի տպարանները, որոնք հետագայում տպագրում էին թերթեր, օրացույցեր, հանդեսներ և գրքեր։ Ափինյանի խմբագրությամբ հրատարակվում է «Շիրակ» հայ կանանց օրացույցը։ 1912 թվականին լույս է տեսնում «Արագած», 1913 թվականին՝ «Գավառի ծայնը», 1919 թվականին «Գյուղացիական միություն» շաբաթաթերթերը, 1919 թվականին «Ալեքսանդրապոլի լրաբեր» գրական քաղաքական-հասարակական օրաթերթը (10, էջ 21)։

Քաղաքի արդյունաբերող, առևտուրական դասը և հոգևորականությունը ձեռնամուխ են լինում Եկեղեցիների կառուցման գործին։ 19-րդ դարի կառուցմաներից առանձնապես հայտնի են թվով 5 Եկեղեցիներ, որոնցից 4-ը հայկական էր, իսկ 1-ը՝ ռուսական։ Դրանց զարդը, սակայն, կազմում էր ս. Փրկիչ կամ Անենափրկիչ Եկեղեցին, որը կառուցվել էր 1859-1873 թթ.։ Այն նման է Ամիի կարողիկե սքանչելի տաճարին և հայտնի է իր քանդակներով։ Այնուհետև կառուցվեցին Յոթվերքը կամ Աստվածածինը, Սուրբ Նշանը կամ Սև Եկեղեցին, գեղացոց Եկեղեցին, կաթոլիկների, հույնների և ռուսների Եկեղեցիները։ Ալեքսանդրապոլի բնակչության առօրյա կյանքը և սերը Եկեղեցիներ կառուցելու գործում պատկերավոր կերպով ներկայացրել է հայ ժողովողի նշանավոր աշուղբանաստեղծը՝ գուսան Զիվանին։

Մի նոր քաղաք տեսա ժամի սիրահար,
Բնակիչները հայ, մոտ քսան հազար,
Իրենք սնունդ չունեն ապրելու համար
Դիմաց վանք են շինել, խելքի աշեցեք:

Առաջադիմությունը նկատելի էր նաև Ալեքսանդրապոլի դպրոցական կյանքում: 19-րդ դարի վերջին քաղաքն ուներ 10 դպրոց ու վարժարան, որոնցից առավել աչքի էին ընկնուն տղաների և օրիորդաց դպրոցները: Երևանի գավառական դպրոցի օրինակով Ալեքսանդրապոլուն ևս կար նույնատիպ դպրոց-վարժարան, որտեղ, հայերենից բացի, սովորում էին նաև լատիներեն, հունարեն և ռուսերեն: Քաղաքում 19-րդ դ. երկրորդ կեսից գործում էր առևտրական դպրոցը, կային մի շարք նախակրթարաններ և մասնավոր վարժարաններ: Սակայն պետք է նշել, որ, այնուամենայնիվ, բնակչության գգալի մասը անգրագետ էր:



Տեսարան Ալեքսանդրապոլից

Իր ժամանակին Գյումրի-Ալեքսանդրապոլը Երևանի համեմատությամբ, ընդհանուր առնամբ, մի փոքր ավելի «քարեկարգ» քաղաքի տպավորություն էր թողնում: Այստեղ անցյալից պահպանված հյուղեր շատ քիչ կային, փողոցները ծգվում էին ուղիղ և հատվում ուղղանկյան տակ, տները, ճիշտ է, մեկ-երկուհարկանի էին, գաճաճ, բայց կառուցված էին սև տուֆից և հարմարավետ էին, իրենց քիվերի, դռների ու լուսամուտների շրջանակների վրա ունեին բավական նուրբ քանդակներ: Բնակելի տներն ու մյուս շենքերը կառուցվում էին որոշակի հատակագծով, որը գալիս էր դեռևս 1828-30 թվականներից, երբ Կարսից, Էրզրումից ու Բայազետից այստեղ վերաբնակվածներն իրենց բազմաթիվ տները կա-

ոռւցեցին իին բերդի մոտակայքում փոփած ընդարձակ հարթությունում Ներկայումս և Գյումրիում պահպանվում են 18-19-րդ դարերի ժողովրդական ճարտարապետության հայտնի նմուշներ բնակելի տներ, խանութներ, բաղնիքներ և այլն:

Ալեքսանդրապոլի ամենամեծ կառույցը բերդ-ամրոցն էր, որի ոիմնավոր վերակառուցումն սկսվել էր 1834 թ.-ից: Նոր բերդը կառուցվեց սև ու կարմրավուն տուֆից, ընդարձակ էր ու հարմարավետ. օժանդակ շինությունների հետ միասին ի վիճակի էր իր մեջ տեղավորել 16000 մարդ: Քաղաքի երեք կողմերում՝ Պոլիգոնում, Սևերսկում և Կազաչի պոստում, գետեղված էին գրանցուները. Դրանք իրենց նշանակությունն ու դերը կորցրին 19-րդ դարի 80-ական թվականներից, երբ Կարսի մարզի միացման հետևանքով Ալեքսանդրապոլը դադարեց սահմանային քաղաք լինելուց:

Չնայած որ 19-րդ դարի ընթացքում Ալեքսանդրապոլը տնտեսական նշանակալից զարգացում է ունեցել, այնուհաներծ քաղաքը զուրկ էր կոմունալ տարրական պայմաններից: Թույլ էր զարգացած նաև քաղաքային տրամսպորտը, որն այն ժամանակ բաղկացած էր մի քանի կառքերից:

Ալեքսանդրապոլի տնտեսական և մշակութային զարգացմանը համապատասխան տեղի էր ունենում նաև քաղաքի բնակչության թվաքանակի ավելացում: Եթե 1831 թ. քաղաքն ուներ 3444 բնակիչ (մոտ 3.5 անգամ պակաս, քան Երևանը), ապա 1873 թ. 19976, 1886 թ. 24230, 1897 թ. 30616, 1908 թ. 32901, 1914 թ. 51316 (38, էջ 55) 1.7 անգամ գերազանցելով նահանգի կենտրոն Երևանի բնակչության թվին (1914 թ. Երևանն ուներ 29766 բնակիչ): Այն ազգային տեսակենտիկ գրեթե միատարր քաղաք էր. բնակչության 96%-ից ավելին հայեր էին:

Առաջին համաշխարհային պատերազմի և ազգամիջյան կոիվների տարիներին Ալեքսանդրապոլի և նրա գավառի տնտեսական կյանքը քայլայվեց: 1918-1921 թթ. թուրքական արշավանք-ների և ներքին հակամարտությունների հետևանքով Ալեքսանդրապոլի բնակչությունը շատ ծանր հարվածներ ստացավ: Թուրքական արյունաբուր բանակը, ներխուժելով Շիրակ, անխնա կոտորում էր քաղաքի և մերձակա գյուղերի բնակիչներին, հափշտակում բնակչության ունեցվածքը: Ինչպես Արևանտյան, այնպես էլ Արևելյան Դայաստանում այդ մահաբեր տարիներին տասնյակ հազարավոր հայ երեխաներ որբացան: Նրանց փրկության գործը ժամանակի կարևորագույն խնդիրներից էր: Սովոր ու հիվանդությունները խլում էին հազարավոր երեխաների կյանք: Ակասա 1915 թ. Ալեքսանդրապոլում անապաստան երեխաների համար կազմակերպվում են որբանցներ, սակայն տեղական իշխանությունները հնարավորություն

չունեին մեծ թվով որբերի սննդով ու հագուստով ապահովելու: Անդրկովկասի տարրեր քաղաքներում և բնակավայրերում, այդ թվում նաև Ալեքսանդրապոլում ստեղծված որբանոցները հովանավորվում էին զանազան բարեգործական կոմիտեների ու ընկերությունների կողմից: Ալեքսանդրապոլի Պոլիգոն, Կազաչի պոստ և Սևերսկի թաղամասերում կազմակերպվել էին ամերիկյան երեք խոշոր որբանոցներ, որտեղ հանրակրթական առարկաների հետ միասին ուսուցանում էին նաև արհեստներ նպատակ ունենալով լավագույններին հետազոտում տանել Ամերիկա, և դա նրանց հաջողվեց. Այս որբանոցները գոյատևեցին մինչև 1927-29 թթ.:

Մի խոսքով, այսպիսին էր Գյումրիի (Ալեքսանդրապոլի) տնտեսական ու հասարակական կյանքը մինչև Դայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

Դայաստանում խորհրդային կարգերի հաստատմանք հանրապետության բոլոր շրջաններում և բնակավայրերում քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման համար համեմատաբար շարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին: 1924 թ. հունվարի 27-ին Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինական: 1920 թ.-ից մինչև 1930 թ. սկզբներն այն գավառի կենտրոնն էր: Իբրև գավառի կենտրոն այստեղ էին կենտրոնացված գավառական (հնչպես և շրջանային) կուսակցական ու պետական մարմինները: Այնուհետև, երբ հանրապետությունում իրականացվեց (1929-1930 թթ.) վարչատարածքային ռեֆորմ, գավառներն իբրև վարչական միավորներ վերացվեցին, և Լենինականը (Գյումրին) մնաց հանանուն շրջանի կենտրոն մինչև 1937 թ. դեկտեմբերի 31-ը: Դրանից հետո Լենինականի վարչական շրջանը որպես այդպիսին վերացվեց, և նրա տեղում կազմավորվեցին երկու նոր վարչական միավորներ՝ Դուզբենդի (այժմ Ախուրյանի) և Սղինի (այժմ Ասիի) շրջանները: Լենինականը (Գյումրին) որպես բնակավայր մնաց Ախուրյանի շրջանի տարածքում մինչև 60-ական թվականների վերջը, որից հետո այն վարչականորեն անջատեցին Ախուրյանի շրջանից, և դարձավ առանձին միավոր հանրապետական Ենթակայության քաղաք:

1920-1925 թթ. հիմնականում վերականգնվեց Լենինականի (Գյումրիի) տնտեսությունը, ուրվագծվեցին քաղաքի արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները: Արդեն տնտեսության վերականգնման տարիներին Գյումրին դարձավ հանրապետության տեքստիլ արդյունաբերության կենտրոնը. Երբ 1924 թ. շահագործման հանձնվեց քաղաքի տեքստիլ ֆաբրիկան: Պետականորեն պլանավորվեց Գյումրին դարձնել Դայաստանի տեքստիլ արդյունաբերության հիմնական կենտրոն: Հանրապետությունում մշակվող բամբակի հումքի բազայի հիման վրա:



Տեսարան Գյումրի քաղաքից

Քաղաքի տնտեսության ծևավորման և արդյունաբերական նոր ձեռնարկությունների ստեղծման գործընթացը որոշակիորեն խարարվեց 1926 թ. հոկտեմբերի 22-ի Գյումրիի երկրաշարժի պատճառով, որը զգալի վնասներ հասցրեց ոչ միայն բուն քաղաքին, այլ նաև շրջակա գյուղերին: Աղետի պատճառով ավերվեցին մեծ թվով հիմնարկներ, դպրոցական և բնակելի շենքեր: Սակայն ձեռնարկված միջոցառումների և հանրապետության բնակչության նյութական ու աշխատանքային գործուն օգնության, ինչպես նաև ԽՄԴՀ-ի բազմաթիվ խոշոր քաղաքների նվիրատվությունների շնորհիվ երկրաշարժի պատճառած վնասները համեմատաբար կարծ ժամկետում վերացվեցին:

Գյումրիի արդյունաբերության հետագա զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեցավ 1925 թ. շահագործման հանձնված Շիրակի ջրանցքի վրա 1928 թ. կառուցված Լենինականի 3ԵԿ-ը: 20-ական թվականների վերջերին շահագործման հանձնվեցին նաև գուլպայի ու տրիկոտաժի ֆաբրիկաները և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Արդեն 30-ական թվականների վերջերին Գյումրին Խորհրդային Հայաստանի տեքստիլ արդյունաբերության ամենախոշոր կենտրոնն էր:

Քաղաքի արդյունաբերության զարգացման համար կարևոր էր նաև որակյալ կադրերի պատրաստման խնդիրը: 1929 թ. ստեղծվեց առաջին ֆաբրիկան Պատրիքուսը, իսկ 1930 թ. տեքստիլ տեխնիկումը, որոնք դարձան կադրերի պատրաստման դպրոցներ:

Սուածին և երկրորդ հնգամյակի տարիներին Գյումրիում ստեղծվեցին շինանյութերի և տեղարդ կոմբինատները, հացի, կա-

թի, հեծանիվի, հրակայուն աղյուսի և մեխանիկական գործարանները, հրուշակեղենի և կահույքի ֆաբրիկաները, սայլաշինական և ավտոնորոգման արհեստանոցները: Ընդլայնվեցին մինչ այդ գոյություն ունեցող լիմոնադի, գարեջրի, տոնմատի, ապակու և այլ գործարանների կարողությունները: 1925-1932 թթ. ընթացքում կազմակերպվեցին 16 արհեստագործական արտելներ: 1937 թ. քաղաքում գործարկվեց մսի պահաժոնների հանրապետության ամենամեծ գործարանը, որը միաժամանակ ԽՍՀՄ նման կարգի խոշոր ծեղնարկություններից էր:

Դայրենական պատերազմի տարիներին Գյումրիի արդյունաբերական ծեռնարկություններն իրենց աշխատանքը վերակառուցեցին ելեկով ռազմաճակատի պահանջներից: Օրինակ, մեխանիկական գործարանն սկսեց արտադրել զենքի մասեր, նոնակեներ, Չկալովի անվան կարի ֆաբրիկան անցավ ռազմական հանդերձանքի արտադրության, մսի-պահաժոնների կոմբինատը երկրին ու ռազմաճակատին մատակարարում էր հազարավոր տոննաներով միս, պահաժոններ: Անդքերկարուղու Գյումրիի հանգույցը կատարում էր զինվորական էշելոնների փոխադրումները:

Գյումրիի արդյունաբերության զարգացումն ավելի արագացավ հետպատերազմյան տարիներին: Եթե մինչ այդ քաղաքը հիմնականում զարգանում էր թեթև և մասսամբ սննդի արդյունաբերության ուղղությամբ, ապա հետպատերազմյան տարիներին սկսեցին քաղաքում ստեղծվել ծանր արդյունաբերության, մասնավորապես մեքենաշինական ծեռնարկություններ: Դետպատերազմյան տարիներին գործարկվեցին դարբնոցամանիչային, հղկող ունիվերսալ հաստոցների, սարքաշինական, գործիքաշինական, միկրոէլեկտրաշարժչների «Ստրոմաշինա», էլեկտրատեխնիկական, կենցաղային էլեկտրասարքավորումների ու սառնարանային կոմպլեքսուների, կոնդենսատորների, ածիկի-գարեջրի, երկաթբետոնների վագուցվածքների, աղյուսի և այլ գործարաններ, ալրարաց կոմբինատը, ինչպես նաև հաստոցաշինական գործարանին կից ծովարանը: Արմատապես վերակառուցվեցին շոգեքարշերի և վագոնների վերանորոգման դեպոները, և գործարկվեց էլեկտրաքարշերի ու էլեկտրավագոնների վերանորոգման դեպոն: Հարք մտան մահճակալների, ապակու, հացի, լիմոնադի գործարանները, «Շիրակ» արդկոմինատը, կահույքի, գովազանասկեղենի («Արշալույս»), կոշիկի, կարի, հրուշակեղենի և այլ ֆաբրիկաներ: 1980-ական թվականների կեսերին Գյումրիում հաշվվում էր ավելի քան 100 արդյունաբերական ծեռնարկություններ, որոնց մոտ կեսը՝ խոշոր:

Քաղաքի արդյունաբերության համախառն արտադրանքում առանձին ճյուղերի տեսակարար կշիռը 1965 և 1985 թթ. ուներ հետևյալ պատկերը.

	1965 թ.	1985 թ.
Թեթև արդյունաբերություն	62	55.7
Սերենաշինություն	14.5	27.3
Սմնիկ արդյունաբերություն	14	12.3
Շինանյութերի արդյունաբերություն	4	2.4
Այլ ճյուղեր	5.5	2.3

Գյումրիի արդյունաբերական ներուժի շնորհիվ հետպատերազմյան տարիներից հետո աստիճանաբար ծևավորվեց ու զարգացավ Գյումրիի արդյունաբերական հանգույցը, որը բացի բուն Գյումրիից ընդգրկում էր նաև Արթիկը, Մարալիկը, Պենզաշենը, Անիպենզան և հարևան շրջանների տասնյակ գյուղական բնակավայրերը: Այն իր հզորությամբ ու հասունության աստիճանով, արդյունաբերության զարգացման քանակական ցուցանիշներով և հանգուցաստեղծ գործոնների մակարդակով ու բովանդակությամբ, ներքին տնտեսաարտադրական կապերի խորությամբ ու բազմազանությամբ երկրորդն էր Հայկական ԽՍՀ-ում Երևանի արդյունաբերական հանգույցից հետո:

Գյումրին կենտրոնական բաշխիչ դիրք ուներ Էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման գործում: Այն բարձր լարման էլեկտրահաղորդման գծերով միացած է Դրագումանին ու Երևանին, իսկ խողովակաշարով՝ հանրապետություն մուտք գործող մագիստրալային գազամուղին:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը և հանրապետությունում տնտեսական ճգնաժամի խորացումը, Գյումրիի շուրջը մինչև 20-25 կմ շառավղով ծառավորվել և զարգանում էր արդյունաբերական տարբեր ծեռնարկություններին սպասարկող բնակչության ճոճանակային միգրացիա: Վերջինն նպաստում էր բուն քաղաքի արտադրական համալիրի զարգացմանը, և կարևոր նշանակություն ուներ շրջակա գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման համար, մասնավորապես՝ վերջիններիս ազատ աշխատուժը օգտագործելու առումով:

Գյումրիի արդյունաբերական համալիրի զարգացմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև քաղաքի դերի բարձրացում՝ որպես Երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների հանգույց: Այն ավտոճանապարհներով կապված է հանրապետության մայրաքաղաքի, Վանաձորի և Ախալքալաքի հետ: Այդ տարիներին Էլեկտրիֆիկացվեցին Սանկտ-Պետերբուրգից և Մոսկվայից Գյումրի հա-

Նոր երկաթուղիները: Քաղաքն ունեցավ օդանավակայան, որը հնարավորություն ունի կազ հաստատել արտերկրի տարրեր քաղաքների հետ: Միաժամանակ ծևավորվում և հարստանում էր Գյումրիի ներքին քաղաքային տրամսպորտը: 1932 թ.-ից քաղաքում սկսեցին գործել ավտոբուսային երթուղիներ, իսկ 1934-35 թթ տաճախները: Դեռագա տարիների ընթացքում (մինչև 90-ական թվականները) հարստացավ ու մեծացավ քաղաքի տրամսպորտային պարկը, որը սպասարկում էր ինչպես միջքաղաքային և շրջանային, այնպես էլ ներքաղաքային երթուղիները: 1962 թ. Գյումրիում մուտք գործեց ներքաղաքային մասսայական տրամսպորտի ծերից մեկը տրոլեյբուսը:

Ինչպես նախախորհրդային տարիներին, այնպես էլ Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին, մինչև 1988 թ. աղետալի երկրշարժը, Գյումրիում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական հսկայածավալ առաջընթացը փոխադարձաբար ուղեկցվում էր նաև բնակչության թվաքանակի անընդհատ ավելացմամբ: Կերպինս տեղի է ունեցել ինչպես քաղաքի բնակչության բնական շարժի, այնպես էլ շրջակա գյուղական վարչական շրջաններից և Շիրակին սահմանակից հարևան Վրաստանի հայաշատ Զավակսից դեպի Գյումրի բնակչության միգրացիայով: 1919-1988 թթ. ընթացքում քաղաքի բնակչության թիվն ավելացել է 4.5 անգամ: Ըստ տարեթվերի քաղաքի բնակչության թվաքանակի շարժմերացն ունի հետևյալ պատկերը. 1919 թ.՝ 51000, 1922 թ.՝ 44656, 1926 թ.՝ 42313, 1939 թ.՝ 67729, 1959 թ.՝ 108446, 1970 թ.՝ 164966, 1979 թ.՝ 205922, 1988 թ.՝ 230000, 1989 թ.՝ 178251:

Խորհրդային իշխանության տարիներին Գյումրիի սոցիալ-տնտեսական առաջընթացի ամենակարևոր կողմերից մեկն էլ քաղաքաշինության, քաղաքի կառուցապատման և բարեկարգման բնագավառում ծերք բերած նվաճումներն են: Եթե առաջին 3-4 տասնամյակների ընթացքում այն չուներ հեռանկարային գլխավոր հատակագիծ, և կառուցումները կատարվում էին առօրյա գործադրվող հատակագծերի հիման վրա, ապա 1961 թ. սկսած քաղաքը զարգանում էր հեռանկարային գլխավոր հատակագծով: Քաղաքին առանձնակի շքեղություն և տեսք էին տալիս Սստոյի, Երկարուղայինների, Մայիսյան ապստամբության, Չարենցի, նախկին Հեմինի և Սարբսի հրապարակները, գեղեցիկ կառուցապատված մի շարք նայրուղիները (պողոտաները) (Շիրակացու, Տերյանի, Երևանյան, Արագածի, Գորկու և այլն), պատմաճարտարապետական հուշարձանները:

Մինչև 60-ական թվականները Գյումրիում կառուցում էին հիմնականում 3. 4 և 5 հարկանի շենքեր՝ նկատի ունենալով տա-

բածքի սեյսմիկ ակտիվությունը: Սակայն հետագայում խախտվեց քաղաքաշինական այդ նորմը, և քաղաքում սկսեցին կառուցել ավելի բարձրահարկ շենքեր, ընդհուպ մինչև 9-12 հարկանի, որոնք 1988 թ. աղետալի երկրաշարժի ժամանակ գրեթե հիմնովին քանդվեցին: Գյումրիի ծայրամասերում ստեղծվեցին բնակելի նոր բաղանասեր (Անտառավան, Նորավան և այլն): Տարեցտարի բարելավվում էր քաղաքի բնակչության ապահովվածությունը բնակարանային պայմաններով: Եթե 1960 թ. քաղաքի մեկ շնչին բաժին էր ընկույն 7 1 քառ.մ բնակտարածություն, ապա 1980-ական թվականներին այն անցավ 10 քառ.մ-ից: Երկրաշարժից առաջ, 1988 թ. Գյումրիի բնակչությունը կազմում էր 2 մլն 600 հազ. քառ.մ (6): Պետական ու մասնավոր տների 85%-ից ավելին ունեին կոմունալ-կենցաղային անհրաժեշտ հարմարություններ, օգտվում էին բնական այրվող գազից:

Քաղաքի կառուցապատճան և հեռանկարային զարգացման առումով կարևոր դեր ունեն նաև կանաչ տարածքները, գրոսայգիներն ու պուրակները, որոնց ընդհանուր մակերեսը 1980-ական թվականներին անցնում էր 550 հա-ից:

Նորի կառուցապատճան և զարգացման հետ միաժամանակ քաղաքաշինական առումով կարևոր խնդիր է նաև անցյալի պատճառարտարապետական և մշակութային արժեքների պահպանումը: Այս նպատակի համար 1980 թ. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Գյումրիի կենտրոնական ամենահին մասը հայտարարվեց «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան: Այստեղ վերանորոգվեցին արժեքավոր շենքերը, վերականգնվեցին ճարտարապետական ու ազգագրական արժեք ներկայացնող տներն ու փողոցները: Զիրողյանների տունը, օրինակ, դարձավ ազգագրական թանգարան:

Գյումրիի տնտեսության անբաժան մասն էին կազմում կենցաղսպասարկման և հասարակական սննդի տասնյակ հիմնարկները՝ բաղնիքներ, լվացքատներ, հագուստի քիմիական մաքրման կետեր, վարսավիրանոցներ, կենցաղային տարբեր սարքավորումների վերանորոգման տաղավարներ, արյունաբերական ու տնտեսական ապրանքների խանութներ, ճաշարաններ, խորտկարաններ, սրճարաններ, ռեստորաններ: Միայն մանրածախ առևտորի օբյեկտների թիվը 1980-ական թվականներին քաղաքում անցնում էր 400-ից: Զարգացած էր նաև քաղաքի առողջապահական սպասարկման համակարգը: Այստեղ գործում էր 13 հիվանդանոց 1780 մահճակալային տեղերով:

Գյումրին մեր համբաւառության ուսումնագիտական և մշակութային երկրորդ խոշոր կենտրոնն է Երևանից հետո: Անցած

տասնամյակների ընթացքում այստեղ հիմնվել են հանրակրթական ու միջնակարգ-մասնագիտական դպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական հիմնարկներ, գրադարաններ, մշակույթի օջախներ և ակումբներ, կինոթատրոններ, երաժշտական և նկարչական դպրոցներ, ուսումնարաններ, մասնագիտական-տեխնիկական ուսումնարաններ, հրատարակվել են թերթեր:

Մինչև 1988-ի երկրաշարժը քաղաքում գործում էր 43 հանրակրթական դպրոց, երաժշտական մեկ ուսումնարան, երեք դպրոց և մեկ նկարչական դպրոց: Տասնյակ մասնագիտությունների գծով որակյալ մասնագետներ էին պատրաստում 5 տեխնիկումներն ու 14 մասնագիտական-տեխնիկական ուսումնարանները: Քաղաքի բարձրագույն դպրոցներն են Ս. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի, ԵրՊՏի, ԵրՊՀ, ԵրԹԿԻ, ԵրԳՊԱ Գյումրու մասնաճյուղերը: Գիտահետազոտական հիմնարկների թվում առանձնանում է ԳԱԱ գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտը:

Երկրաշարժից առաջ քաղաքում գործում էին կուլտուր-լուսավորչական հիմնարկներ: Թատերական արվեստի զարգացման գործում մեծ դեր էր կատարում պետական դրամատիկական թատրոնը, որի խաղացանկում հայկականից բացի մշտապես կարևոր տեղ էին գրավում ռուսական և արևմտաեվրոպական դասականները: Գործում էին նաև տիկնիկային թատրոնը, երաժշտական, երգի ու պարի տարբեր համույթներ, ֆիլհարմոնիան և ռադիոկայանը: Բնակչության կենցաղն ու մշակույթը պրոպագանիզմում բնագավառում կարևոր դեր էր կատարում գավառագիտական թանգարանը՝ իր հարուստ ու բազմազան ցուցանմուշներով: Գյումրիում է գտնվում նաև Ավ. Խաչակիսյանի անվան տուն-թանգարանը:

Գյումրին հանրաճանաչ է նաև որպես սպորտային քաղաք: Այստեղ լավ ավանդույթներ ունեն ֆուտբոլը, թեթև ատլետիկան, նարմնամարզությունը, ընթացանարտը և հատկապես ծանրամարտը, որի փառքը 1970-1980-ական թվականներին բարձրացրին գյումրեցիներ, աշխարհի բազմակի և օլիմպիական խաղերի չեմպիոն Յուրի Վարդանյանը, Վարդան և Խորայել Միլիտոսյանները:

Արթիկ: Արթիկն ընկած է Արագած լեռան հյուսիսարևմտյան ստորոտին, ոչ բարձր լեռնաճյուղերով պատած մեղմաթեք սարավանդի վրա, որը ծովի մակարդակից ունի 1750 մ բարձրություն: Զբաղեցնում է մոտ 6 քառ.կմ տարածք: Դեռավորությունը Գյումրիից 20 կմ է՝ դեպի հարավ, իսկ Երևանից՝ 105 կմ՝ դեպի հյուսիս-

արևմուտք: Ավտոճանապարհներով կապված է Գյումրի-Երևան և Երևան-Սպիտակ մայրուղիների հետ: Ունի երկաթուղային կայարան, երկաթուղով կապված է Գյումրիի, Մարալիկի և Պեմզաշենի հետ:

Ունի բարեխառն ցամաքային կլիմա: Օդի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -30°, իսկ առավելագույնը հասել 34°-ի: Չմեռը հաճախ բավական խիստ է լինում, ամառը սովորաբար զով է: Մբնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը մոտ 520 մմ է: Արթիկի շրջակայքն անտառազուրկ է, իսկ բուս քաղաքում կան մրգատու և դեկորատիվ ծառեր: Քաղաքի շրջակայքում կան սառնորակ աղբյուրներ: Սակայն Արթիկին մեծ հոչակ են բերել վարդագույն տուֆի հարուստ պաշարները: Քաղաքի շրջակայքում են գտնվում նաև Պեմզաշենի և Տուֆաշենի տուֆի հանքավայրերը: Արթիկից 5 կմ հեռավորության վրա է գտնվում Պեմզաշենի պենզայի հարուստ հանքավայրը, ինչպես նաև իրաբիսային խարամի հարուստ պաշարները: Քաղաքի շրջակայքում կան նաև իրաբիսային ծագման այլ շինանյութեր, նաև նաև վորապես բազալտ:

Արթիկը հայ մատենագրության մեջ հիշատակվող տեղանուններից է: Լմբատավանքի (7-րդ դ.) միջնադարյան մի արծանագրության մեջ այն հիշատակված է Արդիկ ծևով: Հանդիպում է նաև Արդիք ծևը, իսկ նոր ժամանակներում կոչվել է նաև Մեծ Արթիկ և Արթիկուֆ: Կովկասի տեղանունների ստուգաբանությանք գրադարձող 4. Ֆ. Գանն Արթիկը համարում է դժվար ստուգաբանվող անուն, այնուամենայնիվ նա ենթադրում է, որ Արթիկն առաջացել է հայերեն «այր» և պարսկերեն «թիկ» (բարձունք, կատար) բառերից:

Քաղաքի շրջակայքում հայտնաբերվել են Ա.թ. 3-րդ հազարամյակին վերաբերող նյութական մշակույթի մնացորդներ, իսկ քաղաքից 3-4 կմ հեռավորության վրա ավելի հին ժամանակների հին և նոր քարեղարյան ժամանակների մշակույթի հետքեր: Կատարված ուսումնասիրությունները և նյութական մշակույթի հայտնաբերված նմուշները հաստատում են, որ Արթիկ գյուտը գյուտքուն է ունեցել դեռևս 5-րդ դարից:

Այդ ժամանակներում կիսաշրջանաձև մի լեռնապարի տափարակ տարածության վրա հիմնվում է առաջին ամրոց Եկեղեցին: Շուտով Արագածոտն գավառից զգալի թվով մարդիկ այստեղ են գալիս և մշտական բնակություն հաստատում Եկեղեցու շրջակայքում: Սակայն պարսկական, թաթար-մոնղոլական և թուրք-սելջուկների արշավանքների հետևանքով գյուղը հիմնովին կործանվում է, իսկ բնակչիների գերակշռող մասը սրի քաշվում: Նրաշքով

ազատվածները գետնափոր տներ են կառուցում հիշատակված գյուղի արևմտյան լեռնալանջերից մեկի վրա և այդ բնակավայրն անվանում են Լամբար. Բայց կարճ ժամանակից հետո այս գյուղին էլ վիճակվում է նույն տիտուր բախտը:

Արթիկի տարածքում տարբեր ժամանակներում (V, VII, XIII, XIX դդ) կատարված եկեղեցական շինարարությունը վկայում է, որ այն եղել է Շիրակի հայտնի գյուղերից և հաճախ համարվել է ավան:



Տեսարան Արթիկ քաղաքից

Արևելյան Հայաստանի մնացած բնակավայրերի նման Արթիկում ևս տնտեսական զարգացման և բնակչության կյանքի հանար ընչ թե շատ բարենպաստ նախադրյալներ են ստեղծվել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: Արդեն 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին այստեղ բավական աշխուժացել եր տնտեսական կյանքը: Նույնիսկ կար տարրական ուսումնարան՝ 113 աշակերտով: Սակայն 1918 թ. բուրքական ավազակային զորքերի հարձակումներից և թալանից գերծ չի մնացել նաև Արթիկը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ժամանակ այստեղ կյանքն անկում եր ապրում: Խորհրդային կարգերի հաստատմաբ քաղաքական և տնտեսական բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին ինչպես ամբողջ հանրա-

պետության, այնպես էլ նրա առանձին բնակավայրերի զարգացման համար:

1921-1930 թթ. ընթացքում Արթիկը մտնում էր Ալեքսանդրապոլի (Լենինականի-Գյումրու) գավառի մեջ որպես սովորական զյուղական բնակավայր: Խոկ 1930 թ. հանրապետությունում իրականացված վարչատարածքային բաժանմանը Արթիկը դառնում է նույնանուն վարչական շրջանի կենտրոնը: Վարչական նշանակության բարձրացումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական որոշակի առաջընթացին հաճապատասխան ԴիՍԴ Գերագույն խորհրդի նախագահության հոկտեմբերի 20-ի հրամանագրով Արթիկը բանվորական ավանից դառնում է շրջանային ենթակայության քաղաք: Խոկ 1945 թ. հանրապետկան ենթակայության քաղաք:

Արթիկի բնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի տվյալներ կան սկսած 1831 թ.-ից: Խոկ, ընդհանուր առնամբ, այն 19-րդ դարի երկրորդ կեսին Դայաստանի մարդաշատ բնակավայրերից էր: 1831-2001 թթ. ընթացքում Արթիկի բնակչության թվի շարժընթացն ունի հետևյալ պատկերը. 1831 թ. 647, 1873 թ. 2359, 1897 թ. 2950, 1914 թ. 3501, 1926 թ. 3168, 1959 թ. 9071, 1970 թ. 13323, 1979 թ. 16343, 1989 թ. 24774, 1995 թ. 23600 և 2001 թ. 24100 բնակիչ: Արթիկի բնակչությունը գրեթե միատարր է, նրա նախնիների հիմնական մասը ներգաղթել են 1829-30 թթ. Երգրումից և Կարսից (15, I հատոր, էջ 439):

Արագընթաց զարգացում է ունեցել Արթիկի տնտեսական կյանքը: Մի քանի տասնամյակների ընթացքում այն սովորական բանվորական ավանից դարձել է հանրապետության արդյունաբերական նշանավոր կենտրոններից մեկը: Քաղաքի արդյունաբերությունն առանձնապես մեծ վերելք է ապրել հետպատերազմյան տարիներին: Արթիկի արդյունաբերության հայտնի ծեռնարկություններից է «Արթիկստուֆ» կոմբինատը, որի մերենայացված քարհանքը Դայաստանի շինանյութերի արդյունաբերության առաջնեկներից է (1927 թ.): Այնուհետև քաղաքում մեկը մյուսի հետևից շահագործման են հանձնվել տուֆարլուկների, երկաթբետոնների կոնստրուկցիաների, էկեմորավակուումային վառարանների, կոմպրեսորների, ապակու կաղապարների, մեխանիկական, պանրի-յուղի, զովացուցիչ ջրերի գործարանները, բամբակյա գործվածքների, կարի և տրիկոտաժի ֆաբրիկաները: 1941 թ. գործարկվել է քաղաքի կենցաղ-սպասարկման կոմբինատը, 1953 թ.՝ գորգագործական ֆաբրիկան: Կերպինս մասնաճյուղեր ուներ շրջանի Նոր Կյանք, Պարնի, Սպանդարյան, ինչպես նաև Անիի տարածաշրջանի Դնաբերդ գյուղերում: 1974 թ. շահագործման է հանձնվել Գյումրիի տեքստիլ կոմբինատի մասնաճյուղը:

Ներկայումս իրենց արտադրանքի ծավալով և նշանակությամբ Արթիկի արդյունաբերական ծեռնարկությունների մեջ առավել հայտնի են «Արթիկուֆ» միավորումը, տուֆարլուկների, վակուումային էլեկտրավագոարանների և ապակեմեքենաների գործարանները, վերջին տարիներին կառուցված ալրադաց ծեռնարկությունը, շինարարական իրերի կոմբինատը, գորգեղենի ֆաբրիկան. յուղ-պանրի գործարանը:

Արթիկը, թե՛ մեր հանրապետությունում, և թե՛ նրա սահմաններից դուրս, նախ և առաջ հայտնի է դարձել իր հրաշալի վարդագույն տուֆերով: Դրանցով կառուցված են այնպիսի հանրահայտ շինություններ, ինչպիսիք են Ղնեպիի, Կրեմենչուգի, Կիկի, Սամարայի, Կախովկայի, Վոլգոգրադի, Բրատսկի, Սինգեչառուրի, Ոյինի, Գյումուշի, Դրազդանի, Արզնու, Քանաքեռի և բազմաթիվ այլ ջրային էլեկտրակայաններ ու շինություններ: Այն զարդարում է նաև մեր հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերը, երկարուղային կայարանները: Ցավոք, ներկայումս վիճակը, մեղմ ասած, անմիտքար է:

Անցած տասնամյակների ընթացքում նկատելի առաջընթաց է ապրել նաև Արթիկի սոցիալական և մշակութային կյանքը: Քաղաքի արևմտյան մասում, գրեթե 5 հա տարածության վրա հիմնվել է զբոսայգի, որն այժմ գտնվում է անմիտքար վիճակում: Քաղաքը կառուցապատվում և զարգանում է 1976 թ. հաստատված գլխավոր հատակագծով:

Արթիկն ունի հանրակրթական 7 և երաժշտական դպրոց, 4 մանկապարտեզ, ինդուստրիալ-տեխնոլոգիական և մանկավարժական քոլեջ, գեղարվեստի դպրոց, ՊՏՌ-ն, վարժարան, գիշերօրիկ դպրոց, 2 մարզադպրոց, երեք մասսայական գրադարան, մշակութի 2 տուն, ժողովրդական թատրոն, հիվանդանոց և սոցիալական ու սպասարկման ոլորտի այլ օբյեկտներ:

Արթիկի շրջակայքը հարուստ է հայկական նշակույթի հուշարձաններով: Այստեղ հայտնաբերվել են հնագույն ժամանակների դամբարաններ, կավանոթներ, զենքերի ու զարդերի հնագույն նմուշներ որոնք վերաբերում են 6.թ. 14-9-րդ դարերին: Արթիկում պահպանվել են 5-րդ և 7-րդ դարերի երկու եկեղեցիներ: Դրանցից ավելի մեծը ս. Գևորգը (ըստ Ղ. Ալիշանի ս. Լուսավորիչ) խաչածն կիսաբոլոր թներով, անսյուն շինություն է: Կառուցված է տուֆից և իր ճարտարապետական տարրերով բնորոշ է 7-րդ դարին, ի դեպ, թթ թորոնանյանը համարում է 6-րդ դարի կառույց: Մյուս եկեղեցին՝ Մարինե կամ ս. Աստվածածին անունով (ըստ Եփրիկյանի ս. Դարրություն) գտնվում է մեծ եկեղեցուց հյուսիս-արևելք, միջին մեծության, տուֆաշեն, եռախորան, պայտաձև աղեղով, կողմնակի թևե-

րով ու անգմբեթ կամարածածկ եկեղեցի է: Ըստ Թորումանյանի այն 5-րդ դարի կառույց է, իսկ ուրիշները վերագրում են 5-7-րդ դարերին:

Արքիկից 2կմ հարավ բլրի վրա, գտնվում է Լմբատավանքը, իսկ քաղաքից 1 կմ հարավ-արևելք, ծորամիջում կա ուշ շրջանի եկեղեցի:

Արքիկը հարուստ է նաև միջնադարյան ճարտարապետության նմուշներով տուֆաշեն հսկայական ջրատար խողովակներով, ջրաղացներով, զմբեթածածկ բնակելի տների ավերակներով:

Արքիկի համար բնապահպանական լուրջ հիմնախնդիր է հանարվում հանրվարչության գրեթե 700 հա զբաղեցրած տարածքում (որը մոտավորապես հավասար է քաղաքի զբաղեցրած տարածքին), որի գործող մասը կազմում է մոտ 20%-ը, հսկայածավալ արտադրական թափոնների առկայությունը:

Մարալիկ. Մարալիկ քաղաքը գտնվում է Երևանից 95 կմ հյուսիս-արևմուտք. Արագածի արևմտյան ստորոտին, համանուն բլրապատ հարթավայրում, Երևան-Գյումրի ավտոճանապարհի հարևանությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից 1740 մ է: Կլիման բարեխառն ցամաքային է համեմատաբար ցուրտ ձմեռներով և գով ու տաք ամառներով: Տարեկան տեղումները մոտ 500 մմ են: Մոտակայքում կան վարդագույն և գորշ տուֆերի, ավագի ու կավի հանքեր: Քաղաքի համար խստու ցուրջ բերվում է 70 կմ հեռավորությունից՝ Աշոցքի տարածաշրջանից (Կրասարից):



Տեսարան Մարալիկ քաղաքից

Մարալիկն ունի նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք, որը պայմանավորված է նախ նրա տրանսպորտաաշխարհագրական հարմար դիրքով և մարզկենտրոն Գյումրիից ունեցած ոչ մեծ (20 կմ) հեռավորությամբ: Քաղաքի դիրքին առավելություն է բերում նաև երկաթուղագծի առկայությունը (Մարալիկը երկաթու-

դային կայարան է Մարալիկ-Պենզաշեն-Արթիկ-Գյումրի երկաթուղու վրա):

Մինչև 1962 թ. Մարալիկը համարվում էր գյուղական բնակավայր: Մարալիկ է կոչվել 1935 թ., մոտակա Մարալ լեռան անունով: Մինչ այդ կոչվում էր Մոլլա Գյորջա: 1962-1995 թթ. որպես բնակավայր Մարալիկը դասվում էր քաղաքատիպ ավանների շարքը: 1995 թ. դեկտեմբերից 77 վարչատարածքային բաժանման մասին ընդունված օրենքով Մարալիկը դարձավ քաղաքային բնակավայր:

Մարալիկի ներկայիս բնակչության նախնիներն այստեղ են ներգաղթել 1828-29 թթ. Կարսի Ղզլախչախ գյուղից, Խոնուսի, Բասենի Ալաշկերտի, Մուշի գավառներից: Վերջին 170 տարվա ընթացքում Մարալիկի բնակչության թվաքանակն ավելացել է ավելի քան 21 անգամ. 1831 թ.՝ 371, 1873 թ.՝ 931, 1886 թ.՝ 1176, 1897 թ.՝ 1302, 1914 թ.՝ 1624, 1919 թ.՝ 2390, 1922 թ.՝ 1618, 1926 թ.՝ 1646, 1939 թ.՝ 1882, 1959 թ.՝ 2177, 1979 թ.՝ 4229, 1988 թ.՝ 6545, 1996 թ.՝ 7700, 2000 թ.՝ 7719 բնակիչ (38, եջ 58, 19 և 77 վիճակագրական ծառայության տվյալներ):

Քաղաքի բնակչության ազգային կազմում հայերի բաժինն անցնում է 98%-ից: 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ այստեղ ապրում էին 132 այլազգիներ (Եգիդիներ 35, ողուներ՝ 23, ուկրաինացիներ 14, ասորիներ 6, աղորեցանցիներ՝ 3 մարդ և այլն): Ներկայումս այլազգիների թիվը չի անցնում 25 մարդուց (մոլովացի՝ 8, ռուս՝ 5, եղջի՝ 4 մարդ և այլն):

Մարալիկի տնտեսության կառուցվածքում տեղ ունեն և արդյունաբերության, և գյուղատնտեսության ճյուղերը: Մինչև հանրապետությունում հողի սեփականաշնորհումը այստեղ կար կոլտնտեսություն՝ հացահատիկային և կերային մշակաբույսերի ու անասնապահական մասնագիտացմանը: Արդյունաբերական ձեռնարկություններից ներկայումս գործում է բամբակամանվածքային ֆաբրիկան: Գիսավորող պանրագործարանը, լուսատեխնիկական և էլեկտրասարքավորումների գործարանները և «Անիպենզա» շինանյութի կոմբինատը լուծարվել են: Բամբակամանվածքային ֆաբրիկան 77 թերէ արդյունաբերության խոշորագույն ձեռնարկություններից է, սակայն այն աշխատում է իր հզորության 10-15%-ի չափով:

Այստեղ գործում են երկու հանրակրթական միջնակարգ, երաժշտական յոթնամյա և մարզական դպրոցներ, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, կապի հանգույց, հիմանդանոց և պոլիկլինիկա, ավտոտրանսպորտային և ճանապարհաշինական ձեռնարկություններ:

Սկսած 1928 թ.-ից տարբեր անուններով («Սահմանապահ կոլխոզնիկ»՝ 1928-1953 թթ., «Աղյուս կոլտնտեսական» 1954-61 թթ., «Լուսավոր ուղի» 1962 թ., «Շիրակ» 1962-65 թթ., «Անի» 1969 թ.-ից) Սարալիկում լույս էր տեսնում շրջանային թերթ, որը 1991 թ փակվել է:

Սարալիկում պահպանվել է 1903 թ. կառուցված Ս. Աստվածածին փայտածածկ եկեղեցին, որին կից 1911 թ.-ից գործել է դպրոց Քաղաքից հարավ բլուրի վրա. կա մատուռ, որը եղել է մշտական ուխտատեղի: Ժողովրդի կողմից այն անվանվել է Ս. Ստեփանոս վանք և հորինվել է ավանդություն վանքին մատադի եկող եղմիկների և նրանց անունով գյուղը Սարալիկ կոչելու մասին:

Սարալիկի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն իիմնախնդիրներից են խմելու և ոռոգման ջրի հարցերը: Գրեթե 1 մլն դոլար է ծախսվել քաղաքին դրսից ջուր հասցնելու հանար. սակայն ներքին ցանցի անմիտիքար վիճակի պատճառով բնակչությունը չի կարողանում օգտվել այդ ջրից: Շարքից դուրս է եկել նաև 350 հա ոռոգման տարածքների բաշխութ գծերը, որի հետևանքով զգալիորեն տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Երկրաշարժից հետո դեռևս անօթևան է մնացել տասներեք ընտանիք: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 1991-92 թթ. լատիշների կողմից կառուցված կիսավարտ շենքերը չեն շահագործվում (կա այդպիսի 8-9 շենք): Վեարային է դարձել քաղաքի միջնակարգ դպրոցը:

Քաղաքում նախկինում գործող ութ շինարարական կազմակերպություններից և 5 արդյունաբերական ծեռնարկություններից գործում է միայն մեկը՝ բանբականանվածքային ֆաբրիկան, այն էլ ոչ լրիվ հզորությամբ: Այս է պատճառը, որ արտագնացությունը հասել է անախաղեապ չափերի (գրեթե 1000 մարդ):

Քաղաքի բնակչության զգալի մասի համար գյուատևան հիմնական միջոց է գյուղատնտեսությունը:

Քաղաքապետարանում տարվում են աշխատանքներ տարբեր ծրագրեր իրականացնելու և նշված հիմնախնդիրները մեղմացնելու համար:

Գյուղական բնակավայրերը

Ազատան: Ազատանն Ախուրյանի տարածաշրջանի բնակչության թվաքանակով ամենախոշոր գյուղն է, իսկ Շիրակի մարզում երկրորդն է Ախուրյանից հետո:

Ազատանն ընկած է մարզկենտրոն Գյումրիից 5 կմ հարավ, Կարկաչան գետակի աջ ափին. Գյումրի-Աշտարակ-Երևան ավտոմայրուղու աջ կողմում գտնվող հարթության վրա: Շրջապատված է սևահողային արգավանդ դաշտերով: Բնակավայրի միջին բարձրությունը ծովի մակարդակից մոտ 1500 մ է: «Ազատան» է անվանվել ՅևՍՅ Գերագույն խորհրդի 1945 թ. 7 12. հյամանագրով, իսկ մինչ այդ տարեկ ժամանակներում կրել է Գալրեմա, Խլի Ղարաքիլիսա և Փոքր Ղարաքիլիսա անունները:

Ազատանի կլիման բարեխառն է, ամառը՝ տաք, ձմեռը ցուրտ է, առաջանում է կայուն ծնածածկույթ: Թափվող մքնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է մոտ 480 մմ: Գյուղի շրջակայքում կան ավագի և բազալտի պաշարներ:

Ազատանն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում Շիրակի մարզի ամենախոշոր գյուղական բնակավայրն էր: 1831 թ. այն ուներ 1450 հայ բնակիչ: Ենտագա ժամանակաշրջանում բնակչության թվաքանակի շարժմանց ունի հետևյալ պատկերը՝ 1873 թ.՝ 2276, 1886 թ.՝ 3019, 1908 թ.՝ 3704, 1914 թ.՝ 4722, 1916 թ.՝ 3485, 1919 թ.՝ 6744, 1922 թ.՝ 2943, 1926 թ.՝ 2481, 1931 թ.՝ 2842, 1959 թ.՝ 3082, 1979 թ.՝ 3890, 1988 թ.՝ 4014, 1996 թ.՝ 5041, 2000 թ.՝ 5034 բնակիչ: Ազատանի այժմյան բնակչության նախնիներն այստեղ են ներգաղթել 1829-1830 թթ. Կարսից, Ալաշկերտից և Արևատյան Հայաստանի այլ շրջաններից:

Ազատանի բնակչության տնտեսական գործունեության կառուցվածքում կարևոր տեղ ունեն հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի մշակությունը: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և անասնապահությամբ: Մինչև Սպիտակի երկրաշարժը Ազատանը շաքարի ճակնդեղի մշակությամբ և համախառն բերքի քանակով հայտնի բնակավայրերից մեկն էր: Ոռոգման համար օգտագործվում է Շիրակի ջրանցքի ջուրը:

Ազատանն ունի միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, հիվանդանոց, մանկապարտեզ, անասնաբուժարան, կենցաղսպասարկման տաղավար և բնակչության սպասարկման այլ օբյեկտներ:

Ազատանի մոտակայքում ուսւ-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ 1826 թ., տեղի է ունեցել ճակատամարտ: Շրջակայրում նկատվում են հնագույն ժամանակների նյութական մշակույթի մնացորդներ: Գյուղում կանգնած են 19-րդ դարի երկրորդ կեսին կառուցված լուսավորչական և կաթոլիկ երկու եկեղեցիները: Գյուղում կառուցված է Հայրենական պատերազմում գոհվածների հուշարձան կորող:

Ախուրյան Ախուրյանը Շիրակի մարզում բնակչության թվաքանակով ամենախոշոր գյուղն է: Այն նաև ՀՀ խոշորագույն գյուղերից մեկն է:

Գյուղն «Ախուրյան» անունը կրում է 1945 թ.-ից, իսկ մինչ այդ կոչվել է Դուզքենդ, Մեծ Դուզքենդ և Դուզքյանդ: 1937 թ. դեկտեմբերից մինչև 1995 թ. վերջը Ախուրյանը համանուն վարչական շրջանի նենտրոնն էր:

Ախուրյանն ընկած է Գյումրիի երկաթուղային կայարանից 4 կմ արևելք ծովի մակարդակից 1536 մ միջին բարձրությամբ հարթության վրա: Դեռավորությունը երևանից 126 կմ է: Կլիման բարեխառն է, անոանը՝ տաք, ձմռանը համեմատաբար ցուրտ, տեղումները սակավ են 400-450 մմ, հաճախակի լինում են երաշտներ: Ուղղագույն է Շիրակի ջրանցքի ջրերով: Մեծ արժեք են ներկայացնում արգավանդ սևահողերը: Խմելու ջուրը հանվում է տեղի արտեզյան ջրհորներից:

Ախուրյանի ներկայիս բնակչությունը նախնիներն այստեղ են ներգաղթել 1828-1829 թթ. Արևմտյան Դայաստանի Բասենի, Կարսի, Սեբաստիայի, Ալաշկերտի շրջաններից: 1831 թ. ցարական իշխանությունների կողմից Արևելյան Դայաստանում անցկացված առաջին աշխարհագրի տվյալներով Ախուրյանն ուներ 456 բնակիչ, որը մինչև դարի վերջն ավելացել է ավելի քան 3.5 անգամ և 1897 թ. նարդահամարի ժամանակ կազմել է 1635 մարդ: Գյուղի բնակչության թվաքանակի շարժընթացը 20-րդ դարի ընթացքում ունի հետևյալ պատկերը: 1926 թ. 2447, 1939 թ. 2320, 1959 թ. 2790, 1970 թ. 3812, 1979 թ. 6364, 1988 թ. 9079, 1996 թ. 10049, 2000 թ. 9700 բնակիչ: Այսինքն մոտ 100 տարվա ընթացքում (1897-2000 թթ.) Ախուրյանի բնակչության թիվն ավելացել է շուրջ 6 անգամ:



Տեսարան Ախուրյանից


Անցած տասնամյակների ընթացքում Ախուրյանը սոցիալ-տնտեսական նշանակալից առաջընթաց է ապրել: 20-րդ դարի 90-ական թվականներին սկզբներին գյուղում գործում էին կարի ֆաբ-

րիկան. Երկաթբետոնե կոնստրուկցիաների, «ԴայԳլխօրշին»-ի փորձարարական մեխանիկական և կաթի գործարանները, հացի կոնքինատը: Ունի երկու միջնակարգ, մեկ երաժշտական և մեկ գեղարվեստի դպրոց, գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի մասնաճյուղ, մշակույթի տուն ու պալատ, երկու գրադարան, կապի երկու բաժանմունք, ավտոմատ հեռախոսակայան, կենցաղի տուն, կինոթատրոն, հիվանդանոց և պոլիկլինիկա սանեպիդկայան ու դեղատուն:

Ախուրյանի բնակչության զբաղմունքի հիմնական ուղղություններն են դաշտավարությունը, անասնաբուծությունը, բանջարաբոստանային մշակաբույսերի և կարտոֆիլի մշակությունը, թռչնաբուծությունը և մեղվաբուծությունը: Վերջին տասնամյակներին արմատավորվել են նաև այգեգործության ճյուղերից խնձորի և տանձի մշակությունը: Մինչև Սպիտակի երկրաշարժը Ախուրյանը հայտնի էր նաև շաքարի ճակնդեղի մշակությամբ:

Ամասիա: Ամասիան Շիրակի մարզի հյուսիսարևմտյան մասում ընկած Ամասիայի նախկին վարչական շրջանի կենտրոնն էր: Նախկինում կոչվել է նաև Դամասիա անունով: Մինչև 1936 թ. անվանվել է Աղբարա: 1951-1956 թթ. պաշտոնապես կոչվել է Ղուկասյան (գրականության մեջ նշվում է նաև Ներքին Ղուկասյան անվանումը):

Ամասիան գտնվում է Ախուրյան գետի բարձրադիր աջ ափին Դյումրի երկաթուղային կայարանից 28 կմ հյուսիս, իսկ Երևանից՝ 148 կմ հեռավորության վրա, Աշոցքի սարահարթի հարավարևելյան մասում մեղմաթեք հարթության վրա: Միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է մոտ 1865 մ: Կլիման բարեխառն ցանցային է: Դաճախակի լինում են խստաշունչ ծնեղոներ: Անոանը զով է և տաք: Մբռոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է մոտ 500 մմ: Խմելու սառնորակ ջուրը վերցվում է Ղազանչի-Գյումրի ջրատարից:



Տեսարան Ամասիայից

Անասիայի բնակչության նախնիները ներգաղթել են 1829 թ. Բասենից, Կարսից և այլ տեղերից: Առկա վիճակագրական տեղեկատուներում Անասիայի բնակչության թվաքանակի վերաբերյալ անենահին տվյալը վերաբերում է 1886 թ.-ին: Նշված տարում գյուղն ունեցել է 274 բնակիչ: Դետագ ժամանակաշրջանում Անասիայի բնակչության թվաքանակի շարժնթացն ուն հետևյալ պատկերը 1908 թ. 502, 1914 թ. 564, 1922 թ. 167, 1926 թ. 357, 1931 թ. 645, 1959 թ. 1542, 1970 թ. 2773, 1979 թ. 3329, 1988 թ. 3693, 1996 թ. 2982, 2000 թ. 2520 բնակիչ:

Մինչև 1991 թ. Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականաշնորհումը, Անասիայում գործում էր կաթնաանասնապահական խորհրդային տնտեսությունը: Ներկայումս բացի անասնապահությունից, բնակչությունը զբաղվում է նաև հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ:

Վերջին տասնամյակների ընթացքում մեր հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական ճգնաժամն առավել կործանարար եղավ ծայրանասային և բարձրլեռնային շրջանների ու բնակավայրերի համար: Այս ինաստով բացառություն չեն կազմուն նաև Անասիայի տարածաշրջանի բարձրադիր գոտու բոլոր բնակավայրերը, այդ թվում նաև նախկին շրջկենտրոնը՝ Անասիան: Այստեղ մինչև տնտեսական ճգնաժամը գործում էր Գյումրիի թիվ 2 կարի արտադրական միավորման մասնաճյուղը, գլխավորող պանրայուղագործարանը, կոնդենսատորների գործարանը և տպարանը: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մարզական և գեղարվեստի դպրոցներ, մանկապարտեզ, մշակույթի տուն (այժմ քանդված վիճակում է), գրադարան, կապի բաժանմունք, հիվանդանոց (15 նահնակալով): Մինչև Երկրաշարժը գործում էր թիվ 88 պրոֆտեխնիկական ուսումնարանը, որը 2001 թ. լուծարվել է և միավորվել գյուղի միջնակարգ դպրոցի հետ:

Անասիան որպես բնակատեղի գոյություն ունի վաղնջական ժամանակներից: Գյուղից հյուսիս-արևմուտք գտնվում են տեղացիների կողմից «Չարին Դարա» կոչված բերդի ավերակները: 1893 թ. իր ճանապարհորդությունների ընթացքում Անասիա է այցելել «Հայաստան» Երկիատորանոց գրքի հայտնի հեղինակ անգլիացի Լինչը:

Աշոցք: Աշոցքը գտնվում է համանուն սարահարթում, Գյումրի-Ախալքալաք խճուղու վրա՝ Գյումրի Երկարուղային կայարանից 42կմ հյուսիս: Դեռավորությունների ընթացքում Անասիա է այցելել «Հայաստան» Երկիատորանոց գրքի հայտնի հեղինակ անգլիացի Լինչը:

Աշոցքը Շիրակի մարզի խստաշունչ կլիմայական պայմաններ ունեցող բնակավայրերից է: Դունվարյան միջին ջերմաստի-

ճանք -10° է, իուլիսյան միջինը՝ $+15^{\circ}$: Տեղումների տարեկան քանակը միջին հաշվով կազմում է 550-600 մմ, ծնածածկույթի շերտը հասնում է 0.5-0.6 մ-ի: Գյուղի շրջակայքը հարուստ է հորդաբուխ սառնորակ աղբյուրներով: Կան նաև ստորերկրյա ջրերի պաշարներ. Շրջակայքն ունի մարգագետնատափաստանային փարթամ բուսականություն: Բնորոշ են հացազգիները՝ սիզախոտը, դաշտավուկը, շուրախոտը: Շրջապատում կան նաև ճահճուտներ և տորֆի պաշարներ:

Առկա վիճակագրական տեղեկատումներում Աշոցք գյուղի բնակչության վերաբերյալ ամենահին տվյալը հիշատակվում է 1873 թ.՝ 438 բնակիչ: Դետագա ժամանակաշրջանում Աշոցքի բնակչության թվաքանակի շարժմնթացն ունի հետևյալ պատկերը՝ 1886 թ.՝ 602, 1908 թ.՝ 910, 1914 թ.՝ 1009, 1919 թ.՝ 1670, 1922 թ.՝ 618, 1926 թ.՝ 764, 1931 թ.՝ 916, 1959 թ.՝ 1429, 1970 թ.՝ 1693, 1979 թ.՝ 2069, 1988 թ.՝ 2501, 1996 թ.՝ 4029, 2000 թ.՝ 2927 հայ բնակիչ:

Մինչև 1938 թ. Աշոցքը անվանվում էր Ղզըլղոչ, 1938-1956 թթ. կրել է Վերին Ղուկասյան անունը, 1956-1991 թթ.՝ Ղուկասյան, որից հետո վերանվանվել է Աշոցք: Մինչև 1995 թ. վերջն Աշոցքը համարվում էր Ղուկասյանի վարչական շրջանի կենտրոնը: Վարչական ֆունկցիա ունենալը եականորեն նպաստում էր Աշոցքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Գյուղն ունի միջնակարգ և երաժշտական դպրոցներ, մշակույթի տուն, ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, հյուրանոց, կենցաղսպասարկման կոնքինատ, առևտութիւն և սպասարկման այլ ծառայություններ, պոլիկլինիկա. սանհիտարահամաճարակային կայան և այլն: Ցավոք, վերջին 10 տարիների ընթացքում նկատելի որեն վատքարացել է Աշոցքի սոցիալ-տնտեսական վիճակը, որը հանգեցրել է նաև բնակչության թվաքանակի նվազմանը:

1988 թ. Սպիտակի Երկրաշարժից հետո հոտակայի օժանդակությամբ Աշոցքում կառուցվել է ժամանակակից սարքավորումներով հագեցված հիվանդանոց, որտեղ բացի Աշոցքի տարածաշրջանի բնակչությունից, բուժվում է նաև հարևան Վրաստանի հիմնականում հայաբնակ Նինոծմինդայի (նախկինում Բոգդանովկայի) շրջանի բնակչությունը:

Մինչև հոդի սեփականաշնորհումն Աշոցքում գործում էր անասնապահական պետական տնտեսությունը: Ներկայում բնակչության տնտեսական գործունեության մեջ գերակշռում են անասնապահությունը և հացահատիկային տնտեսությունը: Մինչև 90-ական թվականներն այստեղ գործում էր ժողովրդական սպառման առարկաների գործարանը:

Աշոցքի հարավարևելյան մասում կան հին բնակավայրերի մնացորդներ և գերեզմաններ: Գյուղում կա եկեղեցի:

Դ. Ալիշանի ենթադրությամբ՝ միջին դարերում այստեղ է գտնվել Բագրատումինների և Պահլավունինների անառանցք:

Մինչև 1992 թ. Աշոցքում լույս էր տեսնում «Գարուն» շրջանային թերթը:

Սեծ Մանթաշ: Սեծ Մանթաշ գյուղը գտնվում է Արթիկի տարածաշրջանի արևելյան մասում, Արթիկ քաղաքից 15 կմ հյուսիսարևելք՝ Մանթաշ գետակի հովտում: Շրջապատված է բերրի սևահողային դաշտերով: Ընկած է ծովի մակարդակից 1970 մ բարձրության վրա: Տրանսպորտաաշխարհագրական առումով դիրքը նպաստավոր է: Սեծ Մանթաշով է անցնում Ապարան-Ալագյագ-Սեծ Մանթաշ-Արթիկ ավտոմոբիլային ճանապարհը: Գյուղից մոտ 3 կմ հարավ՝ Մանթաշ գետակի վրա, կառուցված է (1967 թ.) Մանթաշի ջրամբարը, որն ունի 8.2 մ³ տարողություն: Սեծ Մանթաշին մոտ ընկած բնակավայրերից են՝ Արթիկի տարածաշրջանից Փոքր Մանթաշը (1 կմ արևմուտք) և Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանի Խորաշեն, Գեղադիր ու Ղնաբերդ գյուղերը:

Սեծ Մանթաշի կլիման ցամաքային է, ծմերը ցուրտ է և տևական, ամառը զույգ և տաք: Մընոլորտային տեղումների տարեկան միջին ջանակը տատանվում է 500-600 մմ-ի սահմաններում: Գյուղի տարածքում կան հանքային աղբյուրներ: Խմելու համար օգտագործվում է նաև Մանթաշ գետակի ջուրը:

Գյուղը Սեծ Մանթաշ է վերանվանվել 1935 թ.-ին: Մինչ այդ կոչվել է Սեծ Արխվալի (Արախվալի Սեծ, Արխվալի Առաջին և այլն):

Սեծ Մանթաշի ներկայիս բնակիչների մի մասի նախնիներն այստեղ են ներգաղթել Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանների բնակավայրերից 1831 թ.: Առավել մեծ թիվ են կազմել Բասենի Խորասան և Խոնուսի Չափուրմա գյուղերից ներգաղթածները: Ներգաղթի հենց առաջին տարում 1831 թ. Սեծ Մանթաշն ունեցել է 208 հայ բնակիչ: Քետագա տասնամյակների ընթացքում գյուղի բնակչության թվաքանակի շարժնթացն ունեցել է հետևյալ պատկերը՝ 1873 թ. 710, 1886 թ. 1013, 1908 թ. 1483, 1114 թ. 1698, 1919 թ. 1520, 1922 թ. 1702, 1926 թ. 1882, 1931 թ. 2074, 1939 թ. 1754, 1959 թ. 1651, 1970 թ. 1834, 1979 թ. 1759, 1988 թ. 1792, 1996 թ. 2348, 2000 թ. 2454 բնակիչ:

Մինչև Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականաշնորհումը, Սեծ Մանթաշում գործում էր կաթնաանասնապահական նասնագիտացման պետական տնտեսությունը: Ներկայումս, բացի անասնապահությունից զբաղվում են նաև հացահատիկի և կերային մշակաբույսերի մշակությամբ:

Գյուղի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1855 թ.: Ունի նաև մշակույթի տուն, գրադարան, հեռախոսացանց, կենցաղսպասարկման ծառայություններ և այլ օբյեկտներ:

Սեծ Մանթաշի Ս. Աստվածածին Եկեղեցին վերաշինվել է 1884 թ.. Ներկայիս Սեծ Մանթաշ գյուղը հիմնվել է հին գյուղի տեղում: Այժմ գյուղի շրջակայքում պահպանվել են հին գյուղի Եկեղեցու մնացորդները, գերեզմանոցները և միջնադարյան երկու մենաստան: Դայտնի է, որ 1837 թ. այստեղ Սեծ Մանթաշում քննվել ու պրոպագանդվել է Թոնդրակյանների գաղափարախոսությունը քարոզող «Բանալի ճշնարսության» ձեռագիր աշխատանքը, որն այժմ գտնվում է Մատենադարանում:

Ուկեհասկ. Ուկեհասկը Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի երրորդ խոչոր գյուղն է՝ Ախուրյանից և Ազատանից հետո: Գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի արևմտյան նասում, նախկին շրջկենտրոն Ախուրյանից հարավ-արևմուտք, Ախուրիկ գետակի ափին: Դեռավորությունը Գյումրիից մոտ 8 կմ է, իսկ Ախուրյանից 15 կմ: Ընկած է Շիրակի արգավանդ դաշտի առավել ցածրադիր մասում՝ ծովի մակարդակից 1510 մ բարձրության վրա: Գյուղից ուղիղ արևմուտք մոտ 3 կմ հեռավորության վրա, անցնում է Դայաստանի Դանրապետության և Թուրքիայի պետական սահմանը, իսկ դեպի հարավ սկսվում է Ախուրյանի ջրամբարը: Գյուղը խճուղային ճանապարհով կապված է մարզկենտրոն Գյումրիի և Անասիայի հետ:

Ուկեհասկի կլիման բարեխառն ցամաքային է, ամռանը տաք է, ձմռանը՝ ցուրտ: Տեղումներն անբավարար են (400-450 մմ): Կան սև տուֆի պաշարներ:

Նախկինում Ուկեհասկը մտնում էր Կարսի մարզի Կարսի օկրուգի Շորագյալի տեղամասի կազմում, իսկ 1931-1995 թվականի վերջը՝ Ախուրյանի վարչական շրջանի մեջ: Մինչև 1946 թ. կոչվել է Մոլլա Մուսու և Մուսական անուններով, որից հետո վերանվանվել է Ուկեհասկ:

Գյուղի բնակչության թվաքանակի վերաբերյալ առաջին տվյալը վերաբերում է 1886 թ.-ին՝ 462 բնակիչ: Իսկ բնակչության թվաքանակի առավել արագ աճ տեղի է ունեցել խորհրդային իշխանության տարիներին. 1922 թ. 737, 1926 թ. 1203, 1931 թ. 1645, 1939 թ. 1923, 1959 թ. 2093, 1970 թ. 2327, 1979 թ. 2326, 1988 թ. 2320, 1989 թ. 2558, 1996 թ. 2614 և 2000 թ.՝ 2636 հայ բնակիչ:

Մինչև 1992 թ. գյուղում գործում էր կոլտնտեսություն, որն զբաղվում էր հացահատիկի ու շաքարի ճակնդեղի մշակությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Ուկեհասկում էր

գտնվում Ախուրյանի շրջանի միջկոլտնտեսային մեղվաբուծական տնտեսությունը և Գյումրիի կարի ֆաբրիկայի մասնաճյուղը:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, ակումբ-գրադարան, հեռախոսակայան, կենցաղսպասարկման տաղավար և այլ օբյեկտներ: Կա ջրհան կայան, որը կառուցված է Ախուրյան գետի վրա:

Ուսկեակավից մոտ 1 կմ հյուսիս-արևելք պահպանվել են կիկլոպյան ամրոց, բնակատեղի և դամբարաններ, որոնք վերաբերում են 6.թ. III-II հազարամյակներին:

Պեմզաշեն: Պեմզաշենը գտնվում է Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանում: Ընկած է Արագած լեռան հյուսիսարևմտյան ստորոտին ծովի մակարդակից 1800 մ բարձրությամբ հարթավայրում, որի արևելյան կողմը պատված է բլրամբերով: Ունի նպաստավոր դիրք տրանսպորտային ուղիների նկատմամբ: Այստեղով է անցնում Արթիկ-Երևան ավտոճանապարհը: Պեմզաշենը նաև երկարուղային կայարան է Գյումրի-Արթիկ-Պեմզաշեն-Սարալիկ երկարուղագծի վրա: Նպաստավոր դիրք ունի նաև նաև մարզկենտրոն Գյումրիի և մարզի քաղաքային բնակավայրեր Արթիկի ու Սարալիկի նկատմամբ: Յեռավորությունը Արթիկից մոտ 6 կմ է:

Պեմզաշենի կլիման բարեխառն ցանաքային է: Զեռը ցուրտ է, կայուն ճնածածկությով, ամառը տաք է ու գով: Մընոլորտային տեղումների տարեկան միջին քանակը մոտ 500 մմ է: Պեմզաշենի շրջակայքը հարուստ է հրաբխային խարամի, պենզայի, վարդագույն և կարմիր տուֆի պաշարներով: Բնակավայրի համար խմելու ջուրը բերվում է մոտ 1.5 կմ հեռավորությունից:

Բնակավայրը Պեմզաշեն է անվանվել 1940 թ. նարտի 3-ից: Մինչ այդ կորել է Կարմիրենոյ և Սահմուղջուղա անվանումները (գրականության մեջ նշվում են նաև «Սահմուղջուղա» անվանման մի շարք այլ տարրերակներ Սահմուղջուկս, Սահմուղջուկ, Սահմուղջուղա, Սահմուղջուղու և այլն): Պեմզաշենը ՀԽՍՀ Գերազույն խորհրդի նախագահության հրամանագրով քաղաքատիպ ավան է դարձել 1958 թ. և այդ կարգավիճակով մնացել մինչև 1995 թ. վերջը: ՀՀ վարչատարածքային բաժանման 1996 թ. սխեմայով Պեմզաշենն ունի գյուղական հանայնքի կարգավիճակ:

Ներկայումս Պեմզաշենն Արթիկի տարածաշրջանի բնակչության թվով ամենախոշոր գյուղական բնակավայրն է: 2000 թ. հունվարի 1-ի ընթացիկ հաշվառման տվյալների համաձայն՝ գյուղն ուներ 2913 բնակիչ: Նրա բնակչության թվաքանակի փոփոխությունները սկսած 1831 թ.-ից մինչև մեր օրերն ունի հետևյալ պատկերը 1831 թ.՝ 191, 1873 թ.՝ 1019, 1886 թ.՝ 1354, 1897 թ.՝ 1496, 1908 թ.՝ 1767, 1914 թ.՝ 1920, 1916 թ.՝ 1549, 1919 թ.՝ 2582, 1922 թ.՝ 1374,

1926 թ. 1331, 1939 թ. 1757, 1959 թ. 3599, 1979 թ. 2587, 1988 թ. 3382, 1996 թ. 3400 և 2000 թ. 2913 բնակիչ: Վերջին տարիների ընթացքում Պեմզաշենի բնակչության թվաքանակի նվազումը պայմանավորված է հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով և բնակչության միգրացիայով: Բնակչության ազգային կազմի առունուվ՝ Պեմզաշենը շուրջ 100%-անոց միատարր բնակավայր է (1989 թ. մարդահանարի տվյալներով հայերի տեսակարար կշիռն այստեղ կազմել է 99.8%, այլազգիների թիվը՝ ընդամենը 8 մարդ): Ներկայիս բնակիչների նախնիների մի մասն այստեղ են եկել Արևմտյան Հայաստանից՝ Բասենից, Ալաշկերտից, Էրզրումից, Մուշից և այլ տեղերից:

Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին Պեմզաշենում գործող անասնապահական պետական տնտեսությունը զբաղվում էր նաև հացահատիկի և կերային մշակաբույերի մշակությամբ: Արդյունաբերության ճյուղերից զարգացած էր շինանյութերի տուֆի, պենզայի և խարամի արդյունահանումը: Գործում էին նաև հիդրոկարբոնատների ծեռնարկությունը և կարի ֆաբրիկան, որն իր մասնաբույերն ուներ Փանիկ, Անուշավան, Գուսանագյուղ և Սառնաղբյուր գյուղերում:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, կենցաղսպասարկման տաղավարներ, գրադարան, ավտոմատ հեռախոսակայան, մանկապարտեզ, տեղամասային հիվանդանոց և այլ օբյեկտներ:

Պեմզաշենում և նրա շրջակայքում կան շատ հուշարձաններ: Պահպանվել են 5-րդ դարի բազիլիկ եկեղեցու հիմնապատերը, 6-րդ դարի թաղածածկ միանավ եկեղեցին և նույն դարի Խաչածն գմբեթավոր եկեղեցին: Լեռնակերտի ճանապարհին, Պեմզաշենից հարավ-արևելք գտնվում է Մակարավանքի Ս. Սիոն եկեղեցին (1001 թ.), որից քիչ հեռու, ձորի մեջ Ս. Աստվածածին միանավ, թաղածածկ եկեղեցին և (17-րդ դար): Պեմզաշենի տարածքում է գտնվում նաև Առաքելոց վանքի եկեղեցին (11-րդ դար), որն ունի Ս. Սիոնի ճարտարապետությունը: Վաճրից արևմուտք Վահրամ Պահլավունու եղբայր Արլիարիի մահարձանն է (1036 թ.): Գյուղի հարավարևելյան կողմում պահպանվել են հին գերեզմանատունը՝ XIII-XIV դդ. խաչքարերով, իսկ նոյն կողմում բլրի գագաթին՝ միջնադարյան ամրոցի պարիսպների հետքերը:

Սառնաղբյուր: Սառնաղբյուր գյուղն ընկած է Արագած լեռան արևանտյան լանջին, Մարալիկ քաղաքից 7 կմ հարավ-արևելք՝ Չկան գետակի ծորում՝ ծովի մակարդակից 1925 մ բարձրության վրա:

Նախկինում Սառնադբյուրը մտնում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառի, հետագայում՝ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի, իսկ 1931-1995 թ. վերջը՝ Անիի գյուղական վարչական շրջանի մեջ: Պատմական այդ ժամանակաշրջանում գյուղը կրել է տարբեր անուններ՝ Գյողիքենդի, Կրմզգրիլիսա, Ղրմզգրիլիսա, Սոգոյութըլու և Ռոտուտ: Սառնադբյուր է վերանվանվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. փետրվարի 3-ի հրամանագրով:

Գյուղն ունի գեղատեսիլ դիրք: Կլիման բարեխառն ցանացային է: Ամառը չորային է, ձմեռը՝ ցուրտ, հունվարյան միջին ջերմաստիճանը՝ -7.8° է, հուլիսյան միջինը՝ $+15.8^{\circ}$, տարեկան միջինը՝ $+4.4^{\circ}$: Առավելագույն բարձր ջերմաստիճանը դիտվել է $+30^{\circ}$, իսկ նվազագույնը՝ -33° : Խմելու ցուրը սառնորակ է:

Գյուղի տարածքում և շրջակայքում կան տուֆի և ավազի հարուստ պաշարներ: Տարածված են լեռնային սևահողերը, որոնք պարարտացնան և ոռոգման դեպքում ապահովում են կայուն և բարձր բերք:

Սառնադբյուրը Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի բնակչության թվաքանակով ամենախոշոր գյուղն էր: Վերջին 170 տարվա ընթացքում գյուղի բնակչության թիվն ավելացել է ավելի քան 12 անգամ: Ժամանակագրական առումով գյուղի բնակչության թվի շարժընթացն ունի այսպիսի պատկեր: 1831 թ.՝ 262, 1873 թ.՝ 1608, 1886 թ.՝ 1987, 1897 թ.՝ 2385, 1908 թ.՝ 2879, 1914 թ.՝ 3365, 1916 թ.՝ 2928, 1919 թ.՝ 2809, 1922 թ.՝ 2439, 1926 թ.՝ 2523, 1931 թ.՝ 2842, 1939 թ.՝ 2851, 1959 թ.՝ 2012, 1970 թ.՝ 2394, 1979 թ.՝ 2460, 1988 թ.՝ 2500, 1989 թ.՝ 2928, 1996 թ.՝ 3071, 2000 թ.՝ 3164 հայ բնակիչ: Ներկայիս սառնադբյուրցիների մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Կարսի, Բասենի, Վանի և Մուշի շրջանների գյուղերից 1828-1829 թթ:

Գյուղի բնակչության զբաղմունքի հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Սեփական կարիքների համար աճեցնում են նաև կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ և այլն: Մինչև 1991 թ. այստեղ գործում էր Գյումրիի կարի ֆաբրիկայի արտադրանասը: Աշխատունակ բնակչության մի զգալի մասը զբաղվում է տուֆի արդյունահանմամբ և իրացմամբ: Գյուղում կար նաև խոշոր անասնապահական համալիր: Ցավոք, արդյունաբերական և գյուղատնտեսական նշված ծեռնարկությունները ներկայումս կամ չեն գործում, կամ էլ ավերակ են: Այս է պատճառը, որ բազմաթիվ ընտանիքներ վերջին մի քանի տարիներին գաղթել են (հիմնա-

կանում՝ Ռուսաստան), իսկ մի գգալի մասն էլ մեկնում է արտագնա աշխատանքի:

Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1912 թ.. Գյուղն ունի նաև մշակույթի տուն, իիվանդանոց, գրադարան, կապի բաժանմունք, կենցաղի տուն, մանկապարտեզ, բուժմանկարձական կայան և այլ օբյեկտներ:

Սառնաղբյուրը հարուստ է տարրեր դարաշրջանների պատմաճարտարապետական հուշարձաններով: Գյուղի կենտրոնում կանգուն է սրբատաշ, կարմրավուն տուֆով կառուցված ս. Թաղնոս եռանավ, բազիլիկ եկեղեցին (որը կառուցվել է 1883 թ. և այժմ գործում է), 5-6 դդ. կառուցված ս. Հակոբ եկեղեցին, որը հիմնովին վերակառուցվել է 8-9 դդ., այժմ աշխատանքներ են տարվում եկեղեցու շրջակայքը բարեկարգելու ուղղությամբ: Երրորդը 1205 թ. կառուցված ս. Կարապետ եկեղեցին է: Սառնաղբյուրի մոտ են գտնվում նաև Հոգեվարքի համալիրը (5-13 դդ.) և Գրիգոր Լուսավորչի ուխտատեղին: Վերջինս մեծ քարայր է՝ հորդաբուխ աղբյուրներով, ժայռերին խաչքանդակներով, և, հավանաբար, սկզբնապես նշել է ջրի պաշտամունքի վայր: Այս ավանդույթը պահպանվում է նաև այժմ:

Գյուղի շրջակայքում կան նաև մեկուկես տասնյակից ավելի բերդաշենքեր, գյուղատեղիներ, գերեզմաններ և մենաքարեր: Մոտ 6 կմ արևելք, բարձունքի վրա ս. Ղազար եկեղեցու (5-6 դդ) ավերակներն են:

Փաճիկ: Փաճիկը ոչ միայն Արթիկի տարածաշրջանի, այլ նաև Շիրակի մարզի հայտնի գյուղերից է: Այն գտնվում է մարզի հարավարևելյան մասում՝ Արթիկ քաղաքից 7 կմ հյուսիս՝ ծովի մակարդակից միջին հաշվով 1685 մ բարձրություն ունեցող հարթության վրա: Գյուղի հողային ընդհանուր ֆոնդը կազմում է 862 հա, իսկ բուն բնակավայրն զբաղեցնում է 80 հա: Յեռավորությունը Գյումրիից 25 կմ է:

Փաճիկն ունի նպաստավոր աշխարհագրական դիրք: Երկարուղով այն կապված է Գյումրիի և Արթիկի հետ: Դիրքը նպաստավոր է նաև հարեւան բնակավայրերի նկատմամբ:

Կլիման բարեխառն ցամաքային է: Բնորոշ են վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտահարությունները: Մթնոլորտային տեղումների ռարեկան միջին քանակը 450-500 մմ է: Դաճախակի երաշտ է լինում:

Փաճիկի շրջակայքում հանքային ռեսուրսները սակավ են: Կան տեղական նշանակության բազալտի պաշարներ: Գյուղի համար անգնահատելի դեր ունեն արգավանդ հողատարածքները:

Տնտեսական և կենցաղային առումով որոշակի նշանակություն ունեն նաև գյուղից ոչ հեռու հոսող Կարկաչան և Չոր գետակները:

1812 թ. Ալաշկերտի Խասատուր գյուղից մի խումբ հայեր, դավանանքով կաթոլիկ, գաղթում են Շիրակի գավառ, բնակություն հաստատում ավերակ Քյավթաղու գյուղում: Այդ ժամանակ էլ հիմնադրվում է ներկայիս Փանիկը: Բնակչությունը գյուղն անվանում են Չվարճածոր, այնուհետև 1924 թ. այն վերանվանվում է Փանիկ՝ ի պատիվ բոլշևիկ Արշալուս Փանյանի:

Սկզբնապես գյուղի համար հրամայական անհրաժեշտություն էր ջրաղաց և ձիթհանք ունենալը, որոնց կառուցմանը ծեռնամուխ են եղել բնակչություն:

1843 թ. Փանիկում կառուցվել է եկեղեցի, որը կանգուն է մինչև օրս: Ավելի ուշ 1859 թ., հիմնվել է գյուղի դպրոցը, որն առաջին ուսումնական տարում ուներ 38 աշակերտ: Դասավանդում էին կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, լեզուներ հայերեն, ուստերեն, լատիներեն:

1880 թ. Ալեքսանդրապոլի գավառի Քյավթաղու գյուղը դառնում է պրիստավորական կենտրոն:

1901 թ. գյուղում բացվել և որոշ ժամանակ գործել է երկդաս պետական ուսուական դպրոց: Փանիկի համար մեծ իրադարձություն էր դեռևս 1906 թ. գյուղում հիվանդանոցի բացումը՝ Պողոս Վարդապետ Նահապետյանի նախաձեռնությամբ:

Ինչպես Հայաստանի Հանրապետության բազմաթիվ այլ բնակավայրեր, այնպես էլ Փանիկը 20-րդ դարի առաջին քառորդին, մասնավորապես 1914-1921 թթ., կրել է դաժան փորձություններ: Նյութական հսկայական վնասների հետ միասին գյուղն ունեցել է նաև զավակ թվով մարդկանց կողուստ:

1914-20 թթ.-ին Փանիկը եղել է Շիրակի գավառի հեղափոխական շարժման կենտրոն: 1918 թ. այստեղ կազմակերպվել է առաջին կոմերիտական բժիշկ: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Փանիկը եղել է գավառային, իսկ 1920-24 թթ.-ին՝ շրջանային կենտրոն:

Փանիկը հիմնադրման ժամանակ ունեցել է 195 բնակիչ (22 ծուխ): Նետագա տասնամյակների ընթացքում գյուղի բնակչության թվի շարժներացն ունի հետևյալ պատկերը. 1831 թ.՝ 176, 1873 թ.՝ 665, 1886 թ.՝ 968, 1897 թ.՝ 1235, 1908 թ.՝ 1497, 1914 թ.՝ 1690, 1916 թ.՝ 1520, 1919 թ.՝ 2130, 1922 թ.՝ 1603, 1926 թ.՝ 1685, 1939 թ.՝ 1707, 1959 թ.՝ 1838, 1979 թ.՝ 2377, 1988 թ.՝ 2417, 1996 թ.՝ 2958, 2000 թ.՝ 2771, 2001 թ.՝ 2629 բնակիչ: 2001 թ. գյուղի բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք (52%): Ընդունում, մինչև 15 տարեկան բնակչության ընդհանուր թվաքանակում

գերակշռում են տղաները՝ 54.6%, 16-60 տարեկան բնակչության խմբում կանայք և տղանարդիկ գորեք հավասար են, իսկ 60-ից բարձր տարիքային խմբում կանայք երկու անգամ գերազանցում են տղանարդկանց:

Վերջին տարիներին Փանիկում նվազել է ծնելիության ցուցանիշը: 1995 թ. գյուղում ծնունդը կազմել է 68 երեխա, 2000 թ.՝ 49:

Մինչև 77-ում հողի սեփականաշնորհումը Փանիկում գործում էր կարնաանասնապահական պետական տնտեսությունը, որն զբաղվում էր նաև հացահատիկի, կերային մշակաբույսերի, շաքարի ճակնդեղի մշակությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում ներկայում գործող արդյունաբերական ծեռնարկությունները չկան: Իսկ մինչև 1990-ական թվականները գործում էին Արթիկի կոնյենսատորների գործարանի արտադրամասը՝ 50 աշխատատեղով և Պենգաշենի կարի արտադրական միավորնան մասնաճյուղը՝ 200 աշխատատեղով:

Փանիկը հարևան գյուղական բնակավայրերի համեմատությամբ առավել լավ է ապահովված սոցիալական և սպասարկման ոլորտի օբյեկտներով: Գյուղն ունի մշակույթի տուն, գրադարան, կապի բաժնեմունք, հեռախոսակայան, կենցաղի տուն, մանկապարտեզ, հիվանդանոց և դեղատուն: Սկսած 2000 թ.-ից գյուղում լույս է տեսնում «Փանիկ» ամսագիրը, որը, կարելի է ասել, «Փանիկի ուսանողական միություն» կազմակերպության օրգանն է: Գյուղի մշակութային կյանքի անբաժան մասն են կազմում կարողիկական հավատքի հետ կապված եկեղեցական որոշ տոներ և ծիսակատարություններ: Գյուղական կոլորիտի անբաժան մասն է կազմում Տիրամոր եկեղեցին, որտեղ ամեն կիրակի նատուցվում է սպատարագ:

Գյուղի մշակութային կյանքի օղակներից են նաև երաժշտական դպրոցը, որն ունի դաշնանուրի, փողային գործիքների, լարային ժողովրդական նվագարանների և երգչախմբի բաժիններ:

Ներկայումս Փանիկի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից են բնակչության զբաղվածության հարցը (տարեկան հարյուրավոր նարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի) և գյուղը ոռոգման ջրով ապահովելը, որը եականորեն կրաքարացնի մշակվող կուլտուրաների բերքատվությունը և բնակչության եկամուտները:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Րայաստանի Հանրապետության, այդ թվում նաև Շիրակի մարզի ներկայիս տնտեսության հիմքերը դրվել են 19-րդ դարի երկրորդ կեսից: Չնայած դանդաղ, սակայն հաստատականորեն կապիտալիստական գարգացման ոլորտի մեջ էին ներգրավվում և գյուղատնտեսությունը, և արդյունաբերությունը: Մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը Շիրակում գործում էին մի քանի արդյունաբերական նանր ձեռնարկություններ և արհեստագործական արտադրամասեր: Դրանցից քիչ թե շատ աչքի էին ընկնում գարեջրի, օճառի, կաշվի-կոշկեղենի, աղյուսի և հացի գործարանները: Գյումրիում և նրա շրջակա մի շարք գյուղական բնակավայրերում տնայնագործական եղանակով աշխատում էին մի քանի տասնյակի հասնող ալրադացներ, ծիրանքի, գորգագործական, գյուղատնտեսական գործիքների վերանորոգման և սպառման ապրանքներ արտադրող մի շարք արհեստանոցներ: Գյումրիի բազմաթիվ մանր արհեստանոցներում արտադրում էին գյուղատնտեսական տարրեր գործիքներ (արոր, լուծ, սայլասարք, գերանդի, փողի և այլն) և կենցաղային անհրաժշտության տարրեր առարկաներ (սեղան, նստարան, մահճակալ, վառարան, տաշտ, դույլ, պահարան և այլն):

19-րդ դարի վերջին Շիրակ հասավ երկաթուղին: Գյումրին վերածվեց կարևոր տրանսպորտային հանգույցի՝ Թիֆլիսի, Կարսի և Երևանի միջև: Նշանակալից գարգացում ունեցան նաև Շիրակի մարզի գյուղատնտեսությունը և մշակութային կյանքը: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած մի քանի տարիները կործանարար եղան ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ նրա մասը կազմող Շիրակի արտադրողական ուժերի համար: Կազմալուծվեց ամբողջ Արևելյան Հայաստանի տնտեսությունը: Երևանը, Էջմիածինը, Գյումրին և շատ այլ բնակավայրեր լցված էին ընչազուրկ ու սովոր գաղթականներով: Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում բնակչության ընդհանուր թիվը, որը գաղթականների հաշվին հասել էր շուրջ 1270 հազ., 1920 թ. վերջին նվազեց մինչև 720հազ.: Չորս անգամ կրծատվել էին ցանքատարածությունները, առավել մեծ չափերով պակասել էր գյուղատնտեսական արտադրության ծավալը: Շիրակում եղած ձեռնարկությունների մեծ մասը փակվեց: Արդյունաբերական հա-

նախառն արտադրանքի ծավալը 73 ներկայիս տարածքում 1913 թ. համեմատությամբ կրճատվեց 12 անգամ: Դադարեցին գործելուց երկարուղիները:

Դայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ քաղաքական ու տնտեսական քիչ թե շատ բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին երկուում խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի համար:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկսած 1920-ական թվականների առաջին տարիներից՝ Շիրակուն աստիճանաբար ստեղծվեցին արդյունաբերական նոր ձեռնարկություններ: 1922 թ. Ուսևաստանի Դաշնության Խվանովոյի մարզի տեքստիլագործների օգնությամբ Ալեքսանդրապոլում կառուցվեց տեքստիլ կոմբինատը: Այնուհետև մեկը մյուսի հետևից սկսեցին կառուցվել նոր գործարաններ և ֆաբրիկաներ: Դետպատերազմյան տասնամյակների ընթացքում Շիրակը դարձավ խորհրդային Դայաստանի տեքստիլ գործվածքների, շինանյութերի, մեքենաշինության, սարքաշինության, սննդի և լայն սպառման ապրանքների արտադրության զարգացած շրջաններից մեկը: Մինչև Սպիտակի երկրաշարժը Շիրակի մարզն իր տնտեսական զարգացման մակարդակով և արտադրական ներուժով Դայաստանի Դանրապետությունում գրաղեցնում էր երկրորդ տեղը՝ Երևանից հետո:

Շիրակի մարզի արդյունաբերական ծերնարկություններում թողարկվում էին հաստոցներ, փոքր տիպի էլեկտրաշարժիչներ, դարբանցային մանլիչներ, քար կտրող ու վերամշակող ագրեգատներ, մագնիսային ուժեղացուցիչներ, կոնդենսատորներ, կենցաղային սառնարանների կոնպրեսորներ, գալվանոմետրներ, հեծանիվներ, էլեկտրավակուումային վառարաններ, ավտոպահեստանաեր, ջրամխոցներ, երկաթե մահճականներ, երկաթբետոն կոնստրուկցիաներ, պենզաբրուկներ, տուֆ քար և տուֆաբրուկներ, պենզա, կիր, բամբակյա գործվածքներ, տրիկոտաժեղեն, գոլպեղեն, պատրաստի հագուստ, կոշիկ, երշիկեղեն, մսի պահածոներ, պանիր և յուղ, գարեջուր, օճառ, ածիկ, զովացուցիչ ջրեր, ինչպես նաև լայն սպառման, տեղական նշանակության այլ բազմատեսակ ապրանքներ:

Մինչև 60-ական թվականները Շիրակի արդյունաբերության կառուցվածքում առավել մեծ դեր ունեին տեքստիլ, սննդի, շինարարական նյութերի և լայն սպառման առարկաների արտադրությունը: Դետպատան տասնամյակներին մարզի տարածքում դրանց հետ միասին հատուկ ուշադրություն դարձվեց նաև ծանր արդյունաբերության ճյուղերի զարգացմանը: Այդ ժամանակաշրջանում

Ծիրակում գործարկվել են էլեկտրաճշգրիտ գործիքների, սարքաշինական, էլեկտրատեխնիկական, դարբնոցամանլիչային, էլեկտրակենցաղային իրերի, հաստոցաշինական, էլեկտրամագնիսային, էլեկտրավագկուումային վառարանների, հիդրոհաղորդակների, ապակու տարայի կաղապարնան, դիզելային ավտոմեքենանների վերանորոգման գործարանները:

Ծիրակի մարզին երկար ժամանակ էլեկտրաէներգիա էր տալիս մարզում գործող միակ էներգետիկ հզորությունը՝ Լեռնեկը: Վերջինս էլեկտրաէներգիա էր մատակարարում Գյումրիի արդյունաբերական ձեռնարկություններին, Արթիկուլֆի, Անհավենգայի, Պեմզաշենի հանքերին, Զաքուրի կողի գործարանին և մերձակա շրջաններին. Այժմ այն բարձրավոր էլեկտրահաղորդման գծերով կապված է հանրապետության միասնական էներգետիկ համակարգին: 1973 թ. շահագործման հանձնվեց Գյումրիի 220 Կվտ լարվածության տրանսֆորմատորային ենթակայանը, որը էներգիա էր հաղորդում Գյումրիի և մերձակա շրջանների արդյունաբերական և տրանսպորտային ձեռնարկություններին, գյուղատնտեսությանն ու կոմունալ տնտեսությանը:

Չնայած մերենաշինությունը և սարքաշինությունը Ծիրակի մարզում առավել ուշ ծևավորված արդյունաբերական ճյուղերից էին, այդուհանդերձ մինչև 90-ական թվականները սարքաշինական, մեթենաշինական և էլեկտրաճշգրիտ գործիքների արտադրանքի տեսակներն սպառվում էին ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև նրա սահմաններից դուրս (Բուլղարիայում, Ռումինիայում, Մոնղոլիայում, Չունգարիայում և այլն): Այս ճյուղի հիմնական ձեռնարկությունները միկրոէլեկտրաշարժիչների, դարբնոցամանլիչային սարքերի, սարքաշինական, մետաղահատ հղկող հաստոցաշինական, «Ստրոմնաշինա», զալվանոմետրերի, էլեկտրակենցաղային իրերի, կենցաղային սառնարանային կոմպրեսորների, մեխանիկական, հեծանիվի, կոնդենսատորների և էլեկտրատեխնիկական գործարանները տեղաբաշխված էին Գյումրիում: Սարգի արտադրական ձեռնարկությունների մեջ եական դեր ունեին նաև Գյումրիի էլեկտրագարշերի և վագրների վերանորոգման դեպոները, որոնք իրենց հզորությամբ Անդրկովկասում գիշում էին միայն Թբիլիսիի դեպոներին: Սարգի մեթենաշինական ձեռնարկություններից էր նաև 1961 թ. գործարկված Սարալիկի էլեկտրամագնիսային ուժեղացուցիչների գործարանը, որը հետագայում վերակառուցվեց և թողարկում էր տարբեր տեսակի լուսատուներ և էլեկտրատեխնիկական սարքեր:

Ծիրակի արդյունաբերական հաճալիրում առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում թերև արդյունաբերությունը, որին բաժին էր ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի գորեք կե-

սը: Ոչ միայն Շիրակի մարզի, այլ մեր հանրապետության տեքստիլ արդյունաբերության խոշորագույն ծեռնարկություններից մեկն էր Գյումրիի տեքստիլ կոմբինատոր, որը հիմնովին ավերվեց Երևա- շարժի ժամանակ և այժմ վերականգնվում է: 80-ական թվականնե- րին այստեղ աշխատում էր գրեթե 7000 բանվոր: Գործարկման առաջին մի քանի տարիներին կոմբինատոն աշխատում էր Բաքվի տեքստիլ գործարանի մանվածքային բազայի հիման վրա: 1927 թ. գործարկվեց մանվածքային ֆաբրիկան, որը սեփական ման- վածքով ապահովվեց գործվածքային ֆաբրիկային: 1924-1985 թթ. ընթացքում կոմբինատի արտադրական կարողությունն ավելացել է ավելի քան 250 անգամ: Բացի տեքստիլ կոմբինատից, Շիրակի մարզի թերթ արդյունաբերության նշանավոր ծեռնարկություններից էին նաև Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկան (իր տե- սակի մեջ Դայաստանի Դանրապետությունում խոշորագույններից մեկը). Գյումրիի մանվածքային ու գուլպա-տրիկոտաժեղենի ֆաբ- րիկաները և Գյումրիի կարի արտադրական միավորումն իր մի քա- նի մասնաճյուղերով:

Սարգի արդյունաբերության երրորդ կարևորագույն ճյուղը սննդի արդյունաբերությունն է: Խորհրդային տարիներին մարզի տարածքում ստեղծվել են հիմնականում տեղական գյուղատնտե- սական հումքի վերամշակման և մասամբ նաև ներմուծովի հումքով աշխատող սննդարդյունաբերական ծեռնարկություններ: ճյուղի հայտնի ծեռնարկությունը Գյումրիի մսի կոմբինատոն է, որը ոչ մի- այն Դայաստանի Դանրապետության, այլ նաև նախկին ԽՍՀՄ-ի նմանատիպ խոշոր կոմբինատոններից մեկն էր: Սննդարդյունաբերա- կան հայտնի ծեռնարկություն էր նաև Գյումրիի գարեջրի գործա- րանը, որը սկսել է արտադրանք տալ դեռ 19-րդ դարի 90-ական թվականներից: Այն ամբողջովին հիմնված էր Շիրակի մարզում և հարևան շրջաններում նշակվող գարու բազայի վրա: Գործարա- նում արտադրվում էին բավական համբավ ունեցող «ժիգովլակի» և «Բարխատնի» գարեջրերը:

Շիրակի մարզի սննդարդյունաբերության մեջ աչքի ընկնող տեղ էին գրադեցնում նաև Գյումրիի և Արթիկի լիմոնադի գործա- րանները. Գյումրիի հրուշակեղենի և կարամելի ծեռնարկություն- ները, Գյումրիի, Աշոցքի, Անասիայի, Արթիկի, Մարալիկի և Ախուր- յանի տարածաշրջանի Սուսայելյանի կարի գործարանները: Մար- զի մասշտաբով սննդարդյունաբերական կարևոր ծեռնարկություն- ներ էին Գյումրիի ալրադաց կոմբինատոր և Մարալիկի ալրադացը:

Մարզի արդյունաբերության մեջ կարևոր տեղ է գրավում նաև բնական շինանյութերի հանույթը: Շիրակը մեր հանրապետության վարդագույն տուֆի ամենահարուստ շրջանն է: Առավել հարուստ

Են Արթիկի, Ամիի և Ախուրյանի տարածաշրջանների հանքավայրերը: Մինչև Սպիտակի երկրաշարժը Շիրակի մարզը տալիս էր մեր հանրապետության շինանյութերի արդյունաբերության համախառն արտադրանքի մոտ 62%-ը: Ենուոյ առավել հայտնի ծեռնարկություններից է Արթիկի տուֆի արդյունահանան խոշոր ծեռնարկությունը: Այստեղ գործում են երկու տասնյակից ավելի խոշոր հանքեր կամ տուֆագործարաններ՝ տեղանասեր: Մինչև 90-ական թվականները՝ երկրում տնտեսական զգնաժամի սկսվելը, այստեղ տարեկան կտրվում էր 440-450 հազ.մ³ տուֆ քար, այն դեպքում, երբ 1930 թ. այն կազմել է ընդամենը 11հազ.մ³:

Շիրակի մարզի շինանյութերի արդյունաբերության համար կարևոր նշանակություն ունեն նաև Անիպեմզայի և Ամի կայարանի տուֆերը, որոնք հայտնի են եղել դեռ շատ վաղ ժամանակներից, Պենզաշենի, Վահրամաբերդի և Մարմաշենի տուֆերը, Անիպեմզայի և Պենզաշենի պենզանները, Զաջուոյի կրաքարը, Ամիի, Արթիկի, Ախուրյանի, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում լայն տարածում ունեցող բազալտի և անդեզիտաբազալտի հսկայական պաշարները:

Շիրակի մարզը, մասնավորապես Գյումրի քաղաքը, մինչև երկրաշարժը խոշոր արդյունաբերական տարածաշրջան էր: Այստեղ արդյունաբերական հանալիքի ծեռնարկությունների կողմից թողարկված ապրանքային արտադրանքի ծավալը կազմել է հանրապետությունում թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալի մոտ 12%-ը: Միայն Գյումրի քաղաքում գործել են 38 արդյունաբերական ծեռնարկություններ, որտեղ աշխատում էր 37000 մարդ: Նշված ծեռնարկությունների կողմից տարեկան թողարկվում էր մոտ 600 մլն ռուբլու արտադրանք:

Երկրաշարժի հասցրած ծանր հարվածների հետևանքով ոչնչացվեցին արդյունաբերական ծեռնարկությունների հիմնական արտադրական ֆոնների շուրջ 70%-ը, կտրուկ ընկան արտադրական հզորությունները: Արտադրական հզորությունների անկումը և արտադրության տեմպերի նվազումը շարունակվեցին կապված տնտեսական շրջափակման, եներգետիկ զգնաժամի, Խորհրդային Սիության վիլուգմանը տնտեսական կապերի վերացնան և նոր շուրջական հարաբերությունների անցնան հետ: Նշված գործոնների ազդեցության տակ կտրուկ նվազեց նաև արդյունաբերության ոլորտում աշխատողների թիվը: Եթե մինչև երկրաշարժը մարզի արդյունաբերական հանալիքում աշխատել են շուրջ 50 000 մարդ, ապա այժմ այն չի անցնում 8500-ից (ըստ Շիրակի մարզպետարանի տվյալների):

Սարգի արդյունաբերական համալիրի վերականգնման ծրագրերը խորհրդային Սիուլքան փլուզման պատճառով չիրականացան: Իսկ հետագա տարիներին մարզի արդյունաբերական համալիրի վերականգնման համար նպատակային ծրագրեր չեն կազմվել: 1992 թ. շահագործնան է հանձնվել կոչիկի «Լենկոշ» ֆաբրիկայի արտադրական նոր մասնաշենքը՝ հագեցած ժամանակակից մեքենասարքավորումներով, 1990-1992 թթ. կառուցվել և շահագործնան են հանձնվել «Դայամերիկյան տնաշինական համալիրը», Արկիկի «Տնաշինական» կոմբինատը, կահույքի ֆաբրիկայի Ախուրյանի արտադրական մասնաշենքը, գուլպեղենի արտադրական միավորնան Դացիկի «Վերածնունդ» ֆաբրիկան: Դրանցից այսօր գործում են միայն Դայամերիկյան տնաշինական համալիրը և կահույքի ֆաբրիկան:

2002 թ. դրությամբ Շիրակի մարզում գրանցված տնտեսվարող սուբյեկտներից մոտ 390-ը արտադրական բնույթի են, սակայն դրանցից շուրջ 220-ը գրեթե չեն գործում: Նշված տնտեսվարող սուբյեկտներից 76-ը նախկին պետական համակարգի ծեռնարկություններ են: Դրանց կեսից ավելին գտնվում են Գյումրիում (39), 15-ը՝ Արթիկի, 9-ը՝ Ախուրյանի, 6-ը՝ Անիի, 3-ը՝ Սշոցքի և 4-ը՝ Ամասիայի տարածաշրջաններում: Ըստ արդյունաբերության ճյուղերի դրանցից 19-ը թերև արդյունաբերական են, 24-ը՝ մեքենաշինական և սարքաշինական, 14-ը՝ սննդարդյունաբերական, 13-ը՝ շինանյութերի արդյունաբերության և 6-ը՝ այլ ճյուղերի:

Ներկայում մարզի մեքենաշինության, սարքաշինության և էլեկտրատեխնիկական արդյունաբերության ծեռնարկություններում թողարկում են քար կտրող և մշակող մեքենաներ, մամլիչներ, մետաղահատ մկրատներ, ունիվերսալ հղկող հաստոցներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի մշակման հաստոցներ, ապակյա տարաների թողարկման համար կաղապարներ, վակուումային էլեկտրավառարաններ, կոնդենսատորներ, փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, արդյունաբերությունների ապրանքներ, ծգրիտ չափման սարքեր, սումինեսցենտրային լամպեր, գյուղատնտեսական գործիքներ, գյուղեքենաների պահեստամասներ, մանկական հեծանիվներ, սահնակներ և այլն:

Թերև արդյունաբերական ծեռնարկություններում թողարկվում է բամբակյա մանվածք, գործվածք (անմշակ և նախշազարո), ծեռօրով գործված գորգեր, գուլպեղեն, կոշկեղեն, կարի և տրիկոտաժե արտադրանք: «Տեքստիլ-կարի», «Մանվածքային ֆաբրիկա» և «Սարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկա» բաժնետիրական ընկերությունների արտադրանքը հումք է հանդիսանում մարզի և հանրապետության մի շարք ծեռնարկությունների համար:

Հինանյութերի արդյունաբերության ծեռնարկություններն իրենց ծանրակշիռ ներդրումն ունեն մարզում իրականացվող կապիտալ շինարարության ոլորտում: Նրանց կողմից թողարկվում է շինարարական տուֆ, տուֆաբրոկներ, պեմզաբրոկներ, երկաք-բետոնե և փայտյա շինարարական կոնստրուկցիաներ, բազալտ, ավագ, ասֆալտ, բազալտի խիճ, կահույք, մանրահատակ, ինչպես նաև լայն տեսականու երեսպատման սալիկներ:

Սարգի սննդարդյունաբերության ճյուղի ծեռնարկություններում թողարկվում է մսամթերք, կարնամթերք, հաց, այսուր, մակարոներն, պանիր, կարագ, հրուշակեղեն, պաղպաղակ, գարեջուր, ածիկ, մսի և ձկան պահածոներ, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ:

Իրացման շուկաների սահմանափակ լինելու, արտաքին շուկայում ոչ մոցումակ և միջազգային ստանդարտներին չհամապատասխանող արտադրանք թողարկելու հետևանքով մարզի տարածքում գործող ծեռնարկությունների արտադրական հզրությունները հիմնականում օգտագործվում են 5-10%-ով: Սարգի արդյունաբերական ծեռնարկություններից 29-ը 2001 թ. ընդհանրապես արտադրանք չեն թողարկել:

Գյուղատնտեսությունը

Հիրակի մարզի արտադրական համալիրում մինչև Սպիտակի երկրաշարժը կարևոր դեր ուներ նաև գյուղատնտեսությունը: Հանրապետությունում մարզն աչքի ընկնող տեղ էր գրավում գյուղատնտեսական բնական ռեսուրսներով (վարելահողերով) և կերային հանդակներով), գյուղատնտեսական աշխատանքների մերենայացման մակարդակով, գյուղտեխնիկայով և մասնագիտական կայդերի ապահովածությամբ: Մարզը տախիս էր հանրապետությունում արտադրվող շաքարի ճակնդեղի գործեր 75 և հացահատիկի՝ 35%-ը (26, էջ 404): Հանրապետությունում մարզն զգալի դեր ուներ մսի և կարի արտադրության բնագավառներում: Զբաղվում էին նաև կարտոֆիլագործությամբ և բանջարաբուծությամբ:

Սարգի ընդհանուր տարածքի ավելի քան 63%-ը կազմում են գյուղատնտեսական հողահանդակները:

Հիրակի մարզի գյուղատնտեսական հողահանդակների կառուցվածքը (հա) 2001 թ.

Վարելահողեր	86 044	50.9%
Բազմանյա տնկարկներ	500	0.3%
Խոտհարքներ	17 000	10.1%
Արոտներ և այլն	- 65 450	38.7%
Ընդամենը	168 994	100%

Մարզում վարելահողերի, բազմամյա տնկարկների և մասմբ նաև խոտհարքների արդյունավետ օգտագործնանը նպաստում են ոռոգման հնարավորությունները: Շիրակի դաշտում, որտեղ ռելիեֆային պայմաններն առավել նպաստավոր են, անցկացված է ոռոգման բավականին հզոր համակարգ: Այն բաղկացած է տարբեր մեծության ինք ջրամբարներից՝ 679 մետր մ³ ընդհանուր ծավալով, 163.9 կմ երկարության մայր ջրանցքներից, 300 կմ երկարությամբ միջբնակավայրային ջրանցքներից, ինչպես նաև ներհանյանքային ջրատարներից և ոռոգման ցանցերից (22, էջ 12): Մարզում ոռոգվող հողատարածքները ներկայում կազմում են մոտ 22.3 հազ. հա: Ոռոգման նպատակով օգտագործվող ջրի մինչև 50%-ը կորչում է ջրանցքների, ջրատարների ու ոռոգման ցանցերի անսարքության և կազմակերպական աշխատանքների ցածր մակարդակի պատճառով: Ոռոգման նախկինում ստեղծված ներտնտեսային համակարգը, որը հարմարեցված էր պետական և կոլեկտիվ խոշոր տնտեսություններին, ներկայում հարմար չէ հազարներով հաշվվող մանր գյուղացիական տնտեսությունների կարիքները հոգալու համար: Մարզի ցանքատարածությունները, բազմամյա տնկիներն ու բանջարանոցները ոռոգվում են Շիրակի, Ախուրյանի ջրանցքների, Կառնուտի, Մանքաչի, Սառնաղբյուրի, Վարդաքարի, Ախուրյանի ջրամբարների և ջրհան կայանների միջոցով:

Շիրակի մարզի ագրոկլինայական ռեսուրսների ընծեռած հնարավորությունների և բնակչության ու շուկայի պահանջներին համապատասխան այստեղ առավել զարգացում են ստացել հացահատիկի, բանջարեղենի, կարտոֆիլի, կերային մշակաբույսերի մշակությունը և անասնապահությունը: Վերջինս հենվում է բարձրադիր գոտու փարթան արտավայրերի ու բնական խոտհարքների, ինչպես նաև դաշտավարությունից ստացվող անասնակերի վրա:

Վերջին 10-12 տարիներին արմատական փոփոխություններ տեղի ունեցան մեր հանրապետության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այդ փոփոխություններն առանձնահատուկ դրսևորում ունեցան հատկապես գյուղատնտեսության մեջ: Դողի հապեցաւ սեփականաշնորհումը, կոլտնտեսությունների, խորհրդային տնտեսությունների, միջտնտեսային և այլ պետական տնտեսությունների լուծարումը, անցումը շուկայական հարաբերությունների, սկզբնական շրջանում հանգեցրին Շիրակի մարզի գյուղատնտեսության արտադրական ցուցանիշների կտրուկ նվազմանը: Զգալիորեն կրճատվեցին ցանքատարածությունները, ցանքաշրջանառությունից հանվեցին շաքարի ճակնդեղը և կտավատը: Խիստ

կրնատվել են կերային մշակաբույսերի ցանքատարածությունները: Դրանց փոխարեն ավելացել են հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի ցանքատարածությունները: Նկատելիորեն պակասել է մշակվող կուլտուրաների բերքատվությունը և համախառն բերքը:

Մարզում տարեցտարի վատացել է վարելահողերի օգտագործման ցուցանիշը: Յուրաքանչյուր տարի օգտագործումից դուրս է մնում գրեթե 10 հազ.հա հողատարածություն: ճգնաժամի առաջին տարիներին եական կորուստներ կրեց նաև մարզի անասնապահությունը: 1991-96 թթ. ընթացքում խոշոր եղջերավոր անսունների գլխաքանակը կրնատվեց 28 հազարով, խոզերինը՝ 19 հազարով, ոչխարներինը՝ 132 հազարով: Ամբողջովին վերացավ մարզի թոշունների մայրական կազմը (ըստ մարզպետարանի տվյալների):

Չնայած վերջին երկու-երեք տարիներին նկատվում է մարզի գյուղատնտեսության արտադրական ցուցանիշների կայունացման որոշ միտում, առանձին դեպքերում նաև որոշ աճ, սակայն դեռևս իրենց ազդեցությունն ունեն անցումային շրջանի տնտեսության բացասական երևույթները:

Ավանդաբար Շիրակում գյուղատնտեսության առաջատար ճյուղը եղել է բուսաբուծությունը և, մասնավորապես, հացահատիկային տնտեսությունը: Վերջինիս բաժին է ընկնում մարզի ցանքատարածությունների գրեթե 69%-ը: Մարզում մշակվող հացահատիկային հիմնական մշակաբույսն աշխանացան ցորենն է, որի մշակությանը առավել հայտնի են Ախուրյանի, Անիի և Արթիկի տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունները: Մարզի առավել բարձրադիր՝ Անասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, Անիի ու Արթիկի տարածաշրջանների 1800-2000 մ բարձրության գոտիներում մշակում են գարնանացան ցորեն ու գարի:

Մինչև 1990-ական թվականները Շիրակի մարզի ցանքադիր (1400-1600 մ) գոտու տնտեսություններում ստացվում էր ցորենի բավականին բարձր բերք՝ միջինը 25-30 ց/հա: Սերմնաբուծական նշանակություն ունեցող առանձին տնտեսություններում այն հասնում էր 35-40 ց/հ (10, էջ 112): Ցավոր, այդ ցուցանիշները ներկայումս նկատելիորեն ցածր են հանրապետությունում առկա ընդհանուր տնտեսական ճգնաժամի պատճառով (աղ. 20):

Մինչև 77-ում հողի սեփականաշնորհիւմը, Շիրակի մարզի կոլտնտեսություններում և պետական տնտեսություններում մշակում էին եգիպտացորեն: Այստեղ այն արմատավորվել է 1953 թ.-ից: 1980-ական թվականներին եգիպտացորենի ցանքատարածությունները մարզի ներկայիս տարածքում կազմել են մինչև 2850 հա: Դարձ է նշել, որ այս մշակաբույսն ուներ հիմնականում կերային

նշանակություն. նրա կանաչ գանգվածն օգտագործվում էր որպես հյութալի անասնակեր կամ սիլոսացու:

Աղյուսակ 20

**Ծիրակի մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և բերքատվության ցուցանիշները
2000-2001 թթ. (ըստ մարզպետարանի տվյալների)**

հ/հ	Մշակաբույսի անվանումը	2000թ.			2001թ.		
		Տարածք (հա)	Միջին բերքատ. (գ)	Համախառ ս բերք (հ)	Տարածք (հա)	Միջին բերքատ. (գ)	Համախառ ս բերք (հ)
1	Դաշտահատիկ	36020	10.2	36 825	37769	21.3	80 300
2	Կարտոֆիլ	2841	78.3	18 567	2518	98.6	24 830
3	Բանջարեղեն	1169	133	11 230	1337	157	21 000
4	Պտուղ	195	32	631	195	34.8	680
5	Կուտակվել է խոտ (տ)	9150	26.8	24 495	137785	39.2	54 000
	Ընդամենը	51 621		91 748	55 604		180 870

Ծիրակի մշակելի հողատարածությունների կառուցվածքուն գրադերած տարածքով երկրորդը կարտոֆիլի ցանքատարածություններն են (5.5%): Պարենային նշանակության այս կուտուրայի մշակությանք Ծիրակի մարզում առավել հայտնի են Ախուրյանի, Անիի և Արթիկի տարածաշրջանների տնտեսությունները: Դաշվարկները ցույց են տալիս, որ ցանքատարածությունների ներկայիս մակերեսի պահպանան դեպքում, եթե ապահովվի 180-200 գ/հա նիշին բերքատվություն, որը միանգամայն իրագործելի է Ծիրակի արգավանդ սևահողային տարածքներում, մարզը հնարավորություն ունի կարտոֆիլի բերքով ապահովել ոչ միայն Ծիրակի ամբողջ բնակչությանը, այլ նաև արտահանել հանրապետության այլ մարզեր:

Ինչպես արդեն նշել ենք, մինչև 1988 թ. աղետալի երկրաշարժը Ծիրակի բռնաբուծության կառուցվածքուն ուրույն տեղ ուներ շաքարի ճակնդեղի մշակությունը: Եթե 1920-ական թվականներին այս մշակաբույսը Ծիրակի մարզի ներկայիս տարածքում գրադերում էր ոչ ավելի, քան 13-15 հա, ապա 1980-ական թվականներին այն հասավ ավելի քան 2600 հա-ի: Ցանքատարածությունների գույքը 70%-ը բաժին էր ընկնում Ախուրյանի տարածաշրջանին (10, էջ 115):

Երկրաշարժից հետո Սպիտակի շաքարի գործարանը չվերականգնվեց, որն այն ժամանակ թույլ տրված սխալներից պետք է հանարել, այդ պատճառով էլ և՝ Սպիտակի տարածաշրջանում, և՝ Շիրակի մարզի տարածաշրջաններում ցանքաշրջանառությունից հանվեց շաքարի ճակնդեղը։ Գյումրիի մերձակայքում շաքարի նոր գործարանի կառուցումից հետո կվերականգնվի նաև շաքարի ճակնդեղի մշակությունը մարզում։

Մարզի բուսաբուծության մեջ նկատելի տեղ և դեր ուներ նաև բանջարանոցային կուլտուրաների մշակությունը։ Ախուրյանի, Արթիկի և Անիի տարածաշրջանների հատկապես ցածրադիր գոտու տնտեսությունների ոռոգելի հողատարածություններում մշակում են կաղանք, սոխ, գազար, վարունգ, բազուկ, մաղաղանոս, համեմ, ռեհան, բարխուն և այլն։

Դեռ հին ժամանակներից Դայաստանում և մասնավորապես Շիրակում գրաղվել են նաև կտավատի մշակությամբ։ Արժեքավոր այս մշակաբույսը, որն աչքի է ընկնում օգտակար հատկություններ ունեցող յուղով, յոդի պարունակությամբ, իսկ ցողունից ստանում են թել և պատրաստում քաքանի գործվածքեղեն, անհասկանալի պատճառով հանվել է ցանքաշրջանառությունից։

Մինչերկրաշարժային տարիների համեմատությամբ մարզում զգալիորեն կրճատվել է կերային մշակաբույսերի ցանքատարածությունները, որն իր անմիջական ազդեցությունն է թողել անասնապահության մթերատվության, հատկապես կարնատվության ցուցանիշի վրա։ Մշակվող կերաբույսերի մեջ աչքի ընկնող տեղ էին գրավում կորնգանը, եղիպտոսարենը, երեքնուկը և առվույտը։ Ներկայուն մարզում անասնապահության հանար անհրաժեշտ կերային բազան ապահովվում է հիմնականում բնական կերահանդակներից։

Վերջին տարիների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շիրակում զյուղատնտեսության համախառն արտադրանքում բուսաբուծության և անասնապահության տեսակարար կշիռները գրեթե հավասար են՝ առանձին տարիներին դրանցից որևէ մեկի որոշ գերակշռությամբ։ Օրինակ, 2001 թ. բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է մոտ 10.5 մլրդ դրամ, 2000 թ. 6.62 մլրդ դրամի դիմաց։ Նույն՝ 2001 թ. անասնապահության համախառն արտադրանքը գրեթե հավասար է եղել բուսաբուծության համախառն արտադրանքին (ըստ Շիրակի մարզպետարանի տվյալների)։ 2002 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրին համապատասխան մարզում ակնկալվում է 27.23 մլրդ դրամի գյուղատնտեսական համախառն արտադրանք, որից շուրջ 13 մլրդ-ը՝ անասնապահությունից, 14.23 մլրդ-ը՝ բու-

սարութությունից: Սակայն հարկ է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ քանի դեռ ամբողջ հանրապետությունում, այդ թվում նաև Շիրակում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացումը դեռևս իրականացվում է հիմնականում եքստենսիվ ճանապարհով, ապա և՝ “բուսաբուծության, և՝ անասնապահության մեջ հանախառն արտադրանքի ցուցանիշը մեծապես կախված կլիմայի նաև բնակչինայական պայմաններից՝ տվյալ տարրվա ազրուկիմայական բնութագրից:

Մինչերկրաշարժային ժամանակաշրջանի համեմատությամբ՝ Շիրակի մարզում նկատելի է նվազել է ոչ միայն ցանքատարածությունների մակերեսը և մշակվող կուլտուրաների թերզատվությունը, այլ նաև անասնագլխաքանակը և դրանց մթերատվությունը՝ 1980-ական թվականների կեսերին նարզի ներկայիս տարածքում կար ավելի քան 87 հազ. խոշոր եղջերավոր անասուն, որից մոտ 24 հազ.՝ կով: Մասն եղջերավոր անասունների գլխաքանակը հասնում է մոտ 282 հազ.-ի: Բերված տվյալների և այլուսակ 21-ի ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1980-ական թվականների համեմատությամբ պակաս է մոտ 22 հազ.-ով (25%-ը). մասն եղջերավորներին՝ 230 հազ.-ով: Միակ դրական տեղաշարժը կովերի գլխաքանակի մոտ 10 հազ.-ով ավելացումն է, որը թերևս բացատրվում է ոչխարների գլխաքանակի գրեթե 5.5 անգամ նվազումով և կարնամթերքի արտադրությամբ սեփական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկա դրւրս գալու գյուղացիական տնտեսությունների ձգտմամբ:

Այլուսակ 21

**Շիրակի մարզի անասնագլխաքանակը 2000 և 2001 թթ.
(ըստ Շիրակի մարզպետարանի տվյալների)**

Կենդանիների տեսակները	Զափման միավորը	Քանակը	
		2000թ.	2001թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	64780	65162
այդ թվում՝ կովեր	գլուխ	34500	33826
Մասն եղջերավորներ	գլուխ	54870	51630
Խոզեր	գլուխ	5800	7096
Թոշումներ	թև	132000	147000

Ընդհանուր առնամբ անասնապահության զարգացման և պարենամթերքների արտադրության ծավալների մեծացման քիչ թե շատ նպաստավոր բնաախարհագրական նախադրյալներ ունեն Շիրակի բոլոր տարածաշրջանները, սակայն դրանք առավել նախ-

ընտրելի են Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, որտեղ անասունների ապահովածությունը բնական կերահանդակներով ավելի բարձր է: Սակայն այդ երկու տարածաշրջաններում էլ առկա են անասնապահության զարգացմանը խոչընդոտող այլ հանգանքներ: Դրանցում բնակչության համեմատաբար փոքր թվաքանակի և զյուղական բնակավայրերի փոքր լինելու պատճառով ցածր է տարածքի յուրացվածության աստիճանը, արդյունավետ չեն օգտագործվում բնական խոտհարքներն ու արոտավայրերը:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Շիրակի և ընդհանրապես Դայաստանի Դանրապետության համար ռազմավարական նշանակություն ունի մարզի տրանսպորտաաշխարհագրական նպաստավոր դիրքը: Դեռև 19-րդ դարի վերջերին Ռուսաստանը ծեռնամուկս եղավ ռազմավարական նշանակություն ունեցող երկաթուղիների և խճուղիների կառուցմանը: 1889 թ. Բաքուն երկաթգծով կապվում է Թբիլիսիի հետ, 1895 թ. սկսվում է Թբիլիսի-Դարաքիլիսա (Վանաձոր)-Կարս երկաթգծի շինարարությունը: Թբիլիսի-Կանաձոր երկաթգծի շինարարությունը ավարտվում է 1899 թ. հունվարին, իսկ Դարաքիլիսա-Ալեքսանդրապոլ (Գյումրի) ուղու շինարարությունը 1899 թ. դեկտեմբերին: Այսպիսով, 1899 թ. վերջերից Շիրակի հացառատ շրջանը երկարուղով կապվում է Անդրկովկասի և ապա Ռուսաստանի տարբեր շրջանների հետ: Այդ երկաթուղու գործարկումը եապես բարելավեց Շիրակի և Կարսի տարածաշրջանների տնտեսական վիճակը, նպաստեց ապրանքաշրջանառության ավելացմանը:

1899 թ. հունիսին սկսվեց Ալեքսանդրապոլ-Երևան երկարուղու շինարարությունը, և այն ավարտվեց 1901 թ., իսկ գնացքների նորմալ երթևեկությունը սկսվեց 1902 թ. դեկտեմբերին, որը նայաստեց Շիրակի տարածաշրջանի և Արարատյան դաշտի շրջանների տնտեսական կապերի ու ապրանքափոխանակության զարգացմանը: Շիրակից երկաթուղով Արարատյան դաշտ էր հասցվում գյուղատնտեսական տնայնագործական գործիքներ, հացահատիկ, գարեջուր, զովացուցիչ ջրեր, օճառ, մոն, տուֆ, գորգ, տնային գույք և այլն, իսկ այնտեղից ստանում էր միրգ, չամիչ, խաղող, սոխ, բրինձ, ծմերուկ, սեխ, բամբակ, աղ և այլն: Այսպիսով, դեռև 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին կառուցված Թբիլիսի-Դարաքիլիսա-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Կարս- Սարիղամիշ և Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղիների շինարարությունը հսկայական նշանակություն ունեցան Շիրակի տարածաշրջանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացման համար, Ալեքսանդրապոլը (Գյումրին) դարձավ կարևորագույն տրանսպորտային հանգույց:

Բաքու-Թբիլիսի-Ալեքսանդրապոլ-Կարս-Սարիղամիշ երկարությունը գործարկումը և խճուղային ճանապարհների շինարարությունը եապես բարձրացրին Գյումրի քաղաքի և Շիրակի տարածաշրջանի դերը Անդրկովկասում, իսկ ցարական Ռուսաստանի հանար այդ ուղին դարձավ ոչ միայն ռազմավարական նշանակության մի ուղեմաս, այլ դրա միջոցով արտահանվում էր գյուղատնտեսական հումք, աղ, պղնձի ֆարրիկատ և այլն: Իսկ Շիրակը ներմուծում էր փայտ, նավք, քարածուխ, տեքստիլ գործվածքներ, մետաղյա իրեր, երկաթեղեն, շաքար, լուցկի, թուղթ և գյուղատնտեսական գործիքներ:

Դայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ոչ միայն վերակառուցվեցին վերը նշված երկարուղիները, այլ նաև ավելացան նորերը: 1930 թ. կառուցվեցին 30 կմ երկարությամբ Գյումրի-Արթիկ-Դեմքաշեն և 7 կմ երկարությամբ Անի կայարան-Անիպենզա երկարգները: Այս նոր գծերը Շիրակի շինանյութերով հարուստ շրջանները կապեցին ոչ միայն մեր հանրապետության երկարուղային հանգույցների և այլ շրջանների հետ, այլ նաև ԽՍՀՄ-ի արդյունաբերական, շինարարական կենտրոնների հետ:

Շիրակը դեռ պատմական հեռավոր անցյալում ճանապարհային կապ է ունեցել հարյան երկրների հետ: Դայտնի ճանապարհներից էին Ապարան-Շիրակ (Կումայրի), Կումայրի-Կարս-Տրապիզոն, Կումայրի-Ախսալքալաք, Կարս-Կարին և այլն: Նշված ճանապարհների միավորնան ու հանդիպման հիմնական կետը հանդիսացել է Արտաշատը:

Դասկանալի է, որ բնակլիմայական անբարենպաստ պայմանների, մթնոլորտային տեղումների, ծյան, երկարատև ծմբան պայմաններում խճուղային ճանապարհները երկար ժամանակ չեին գործում և զգալի դժվարություններ էին առաջացնում հատկապես Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի համար:

Մինչև Դայաստանի խորհրդայնացումը Շիրակի մարզի գլխավոր խճուղային ճանապարհն էր Ալեքսանդրապոլ-Մոլլագյոքա (Մարալիկ)-Մաստարա-Թալիխն-Սարդարապատ-Եջմիածին-Երևան ուղին: Ալեքսանդրապոլը կապված էր նաև Կողբի հետ, որտեղից աղ էր ստանում Կողբ-Սարդարապատ-Բուրդաշեն (Բագրավան)-Ղոշավանք (Դայկածոր)-Չրիլի-Աղին-Բայանդուր-Ալեքսանդրապոլ ճանապարհով: Այսուղից էլ Օթաքիլսա (Սայիսյան)-Քեթի-Շիշբափա (Սեպասար)-Ղզլղոզ (Աշոցք)-Ղազանչի-Բոգդանովկա-Ախսալքալաք-Ախսալցիսա-Բուրբայիս ճանապարհով աղը հարյուրավոր սայլերով փոխադրվում էր Վրաստան: Շիրակը գրաստային ճանապարհով կապված էր նաև Լոռու, Ապարանի, Կարսի և այլ շրջանների հետ:

Նախահեղափոխական տարիներին կառուցված խճուղային կարևոր ուղիներից էր Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ խճուղին (1880 թ.), որը կազմում էր Թիֆլիս-Երևան խճուղու մի հատվածը: 1886 թ. Ալեքսանդրապոլը Սպիտակի լեռնանցքով՝ Ապարանի և Աշտարակի վրայով կապվում է Երևանի հետ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո հիմնովին վերաշինվեցին քայլայված խճուղիները և կամուրջները: Անբողոքվին վերակառուցվեցին և ասֆալտապատվեցին Գյումրի-Մարալիկ-Թալին-Աշտարակ-Երևան, Գյումրի-Անի, Գյումրի-Բոգդանովկա-Ախալքալաք, Գյումրի-Անմասիա, Գյումրի-Արթիկ, Գյումրի-Ախուրյան-Կառնուտ, Գյումրի-Սպիտակ-Վանաձոր ճանապարհները: Կառուցվեցին Ախուրյան-Մուսայելյան, Մարալիկ-Մառնադբյուր, Գառնահովիտ-Ազատան, Գուսանազյուղ-Շիրակավան-Աղյուն-Անիկայարան, Մարալիկ-Քարաքերդ, Արթիկ-Մեծ Մանթաշ և շատ ուրիշ ճանապարհներ: Մարզի բոլոր գյուղական բնակավայրերն ավտոմոբիլային ճանապարհներով կապ ունեցան և Գյումրիի, և շրջանային կենտրոնների հետ: Արմատապես բարելավվեց ոչ միայն գյուղատնտեսական հովաքի և արդյունաբերական ապրանքների փոխադրման, այլ նաև բնակչության տրանսպորտային սպասարկման գործը:

Շիրակի տրանսպորտային ցանցի ծևավորումը և զարգացումը ընթացել է այնպես, որ թե՛ Երկարուղիները, և թե՛ ավտոմոբիլային ճանապարհները մարզի տարածքի նկատմամբ ունեն կենտրոնական, առանցքային դեր, որոնց էլ հենց հարում են նրա բոլոր մոտիկ ու հեռու մասերը: Երկարգիծը մարզի տարածքը հատում է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ բաժանելով այն մոտավորապես Երկու հավասար կեսի: Ավտոմոբիլային ճանապարհներից առանցքային դեր է կատարում Բավրա-Աղօքք-Գյումրի-Մարալիկ ճանապարհը, որը հատում է մարզը հյուսիսից հարավ՝ դարձյալ բաժանելով այն հավասար կեսերի: Կարևոր դեր ունի նաև Երկարուղուն գուգահեռ ավտոճանապարհը: Մարզի համար կարևորություն ունեցող տրանսպորտային ուղիները հանգուցվում են Գյումրիում և ապահովում մարզկենտրոնի տնտեսական և վարչական կազմակերպական գործառույթները:

Մարզի տրանսպորտային ծեռնարկությունների շարքում ուրույն դեր ունի «Շիրակ» միջազգային օդանավակայանը, որին բաժին է ընկնում ուղևորափոխադրումների մոտ 40%-ը: Ուղևորափոխադրումների մոտ 59%-ը բաժին է ընկնում ավտոմոբիլային տրանսպորտին: Բեռնափոխադրումների ոլորտում անհամենատքարձը է Երկարուղուն դերը՝ մոտ 99%:

Դեռերկրաշարժային ժամանակաշրջանի տնտեսական ծանր իրավիճակը իր ազդեցությունն է թողել նաև մարզի տրանսպոր-

տային հաճակարգի վրա: Ներկայումս անմիտիքար վիճակում են գտնվում ոչ միայն մարզային, միջամայնքային և ներհանայնքային ճանապարհները, այլ նաև հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհները: Անավարտ է մնացել դեռևս 1989 թ.-ից սկսած Գյումրին շրջանցող ավտոխճուղու 13 կմ-ոց հատվածը: Անհապաղ վերանորոգման կարիք ունեն Գյումրի-Աշոցք-Բավրա-Կրաստանի սահման, Գյումրի-Կարս միջպետական ճանապարհի Գյումրիից պետական սահման 10 կմ-ոց հատվածը, Գյումրի-Արմավիր ճանապարհի Երազգավորս-Սլյին հատվածը, Շիրակավան-Խասհակյան հատվածում գտնվող վթարային կամուրջը և միջիամայնքային ճանապարհների վրա գտնվող ևս 13 վթարային կամուրջներ, Արթիկի ջրամբարի պատվարի փլուզումից հետո քանդված Արթիկ-Գյումրի ճանապարհի 700 մ-ոց հատվածը և այլն: Դանալինան և նորացման կարիք ունեն պետական և մասնավոր տրանսպորտային ծեռնարկությունների մեջենայական շարժակազմները:

Սոցիալական ոլորտը

Յուրաքանչյուր երկրի, մարզի կամ բնակավայրի տնտեսության բաղկացուցիչ մասն է կազմում սոցիալական ոլորտը: Վերջինս ընդգրկում է այն ամենը, ինչ վերաբերում է մարդկանց համակեցության ընթացքում նրանց փոխհարաբերություններին, հանրության և միջյանց հետ հաղորդակցման ձևերին: Ժամանակակից գիտությունը «սոցիալական ոլորտ» հասկացության բովանդակության տակ հասկանում է այն ճյուղերի, ծեռնարկությունների ու կազմակերպությունների միագումարը, որոնք ուղղակիորեն կապված են մարդկանց ապրելակերպի, կենսամակարդակի ու քարեկեցության հետ (27, էջ 164): Վերջիններիս մակարդակը, ըստ եռյան, պայմանավորված է այդ ճյուղերի, ծեռնարկությունների ու կազմակերպությունների զարգացման մակարդակով:

Շիրակի մարզի ներկայիս սոցիալական իրավիճակը հիմնական գծերով նման լինելով մեր հանրապետությունում տիրող սոցիալական ընդհանուր պատկերին, նաև առանձնանում է որոշակի գծերով, որը պայմանավորված է երկրաշարժից մնացած հետևանքներով:

Ավերիչ երկրաշարժից հետո տուժեց մարզի առողջապահական համակարգի մոտ 70%-ը: Մինչև օրս բուժիմնարկները գործում են վթարային շենքերում և սանիտարահիգիենիկ նորմերին չհամապատասխանող հարմարեցված կառույցներում: Կաղրային ներուժը, թշշկական սարքավորումները, նյութատեխնիկական բազան կենտրոնացված են Գյումրի քաղաքի բուժիմնարկներում: Վերջիններիս ոչ ճիշտ տեղաբաշխման հետևանքով առաջացել է խոր անհամամասնություն գյուղական և քաղաքային առողջա-

պահության մակարդակներում: Ներկայումս մարզի առողջապահական հանակարգում գործում են թվով 47 պետական փակ բաժնետիրական ընկերություններ, որից 11-ը՝ հիվանդանոց, 12՝ պոլիկլինիկա (9-ը՝ Գյումրիում, մեկական՝ Ախուրյան, Արթիկ և Մարալիկ բնակավայրերում), 4 դիսպանսեր (մաշկա-վեներական, ուռուցքաբանական, հակաստութերկույզօպային, հոգեկան առողջության կենտրոն), 2 ծննդատուն, մեկ շտապ բուժօգնության կայան (յոթ ենթակայանով), մեկական արյան փոխներարկման կայան, վերականգնողական կենտրոն և ախտաբանա-անատոմիական լաբորատորիա: Վեց գյուղերում (Մեծ Սանքթաշ, Փանիկ, Մարմաշեն, Պենգաշեն, Աղյին, Սառնաղբյուր, Անի-Պենզա) կան առողջության կենտրոններ, իսկ Ազատան, Ախուրյիկ, Մարմաշեն, Չոռով գյուղերում՝ բժշկական ամբողջատորիաներ, Զաջուր, Մայիսյան և Ամասիա գյուղերն ունեն ընտանեկան բժշկության գրասենյակներ:

Ծիրակի մարզի առողջապահության ոլորտում աշխատողների թիվը տրված է ստորև բերված աղյուսակում (ըստ մարզպետարանի տվյալների):

Աղյուսակ 22

Անվանումը	1999թ.		2000թ.			2001թ.		
	բացառօրականի ընդունում	10000 քնականի հաշվով	բացարձակ թվով	10000 քնականի հաշվով	բացարձակ թվով	10000 քնականի հաշվով	բացարձակ թվով	10000 քնականի հաշվով
Բժիշկներ	630	17.4	597	16.5	-33	589	16.3	-8
Սիրին բուժանձնակազմ	2222	61.5	2041	58.3	-181	1860	51.6	-181
Կրտսեր բուժանձնակազմ	596	16.5	571	15.8	-25	429	11.9	-142
Այլ աշխատողներ	460		525		+65	462		-63
Ընդամենը	3908		3734		-174	3340		-391

Դամենատություն կատարելու համար նշենք, որ ՀՀ-ում
10000 բնակչին ընկնում է մոտ 32 քմիլկ և 60 բուժքուր:

Վերջին տասնամյակում մարդի առողջապահական դլրտում կուտակվել են մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Կառավարման ապակենտրոնացման հետևանքով տեղի է ունեցել բուժօգնության և սպասարկման որակի վերահսկման թուլացում, անցումը շուկայական հարաբերությունների հանգեցրել է առաջարկի և պահանջարկի ծևավորման խոր անհամաշափություն: Պետական բյուջեից տրանսպորտային գումարները չեն ապահովել անվճար բուժօգնու-

թյուն մարզի ամբողջ բնակչության համար: 2000 թ. մարզում մեկ բնակչի հաշվով առողջապահությանը հատկացվող փաստացի գումարը կազմել է 1376 դրամ՝ հիվանդանոցային բուժօգնության ծրագրով՝ 816 դրամ, անբուլատոր-պոլիկլինիկական պայմաններում՝ 371 դրամ, իսկ շտապ օգնության կանչերի համար՝ 189 դրամ:

Դայտնի է, որ մարդու առողջությունը կախված է այն բնական և սոցիալական միջավայրից, որում նա ապրում է: Ինչպես արդեն նշել ենք, Ը. Րակի մարզի բնաշխարհագրական պայմանները (բացառությամբ բարձր լեռնային շրջանների) համեմատաբար նպաստավոր են մարդու կյանքի և առողջության համար: Սակայն վերջին տասնամյակի ընթացքում ստեղծված սոցիալական ծանր պայմանները եւկան ազդեցություն են բողել մարզի բնակչության առողջության վրա: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզում բնակչության հիվանդացության, պոլիկլինիկական դիմելու, շտապ բուժօգնության կանչերի թիվը զգալիորեն նվազել է, քանի որ հիվանդների մի ստվար զանգված չի դիմում բուժիմնարկներ անվճարունակության պատճառով, հետևաբար չի կատարվում հիվանդացության տվյալ դեպքերի արձանագրություն: Ըստ վիճակագրական տվյալների մարզում գլուխ են բարձրացել սիրտ-անորթային համակարգի և ուռուցքային հիվանդությունները, որոնք երիտասարդացել են և մահացության հիմնական պատճառ դարձել (աղյուսակ 23):

Անհանգստացնող է նաև մարզում թոքախտով և խրոնիկ ալ-կոհոլիզմով տառապող հիվանդների աճը: Այդ հիվանդությունները, ինչպես հայտնի է, սոցիալական են:

Աղյուսակ 23

**Շիրակի մարզում գրանցված հիվանդությունները՝ 1999-2001 թթ.
(ըստ մարզպետարանի տվյալների)**

հ/հ	Հիվանդության անվանումը	1999թ.	2000թ.	2001թ.
1.	Սիրտ-անորթային հիվանդություններ	3727	4081	4162
2.	Շնչական համակարգի հիվանդություններ	1943	2036	1720
3.	Էնդոկրին հիվանդություններ (շաք. դիաբետ)	1943	2036	2182
4.	Ուռուցքային հիվանդություններ	1779	1896	1720
5.	Տուբերկուլոզ (առաջնակի դեպքեր)	314	324	296
6.	Դոգեկան հիվանդներ	3021	3023	2963
7.	ՍԵՓՃ	113	108	171

Սոցիալական իրավիճակը բնութագրող ցուցանիշներից է բնակչության կենսամակարդակի ցուցանիշը: Չնայած մեր ծեռքի տակ չկան մարզի բնակչության կենսամակարդակը բնութագրող

այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ մեկ շնչի հաշվով միջին եկամուտը, բնակելի տարածքը, կոնունալ պայմանները, ապահովածությունը կենցաղային սարքավորումներով և այլն, այդուհանդերձ, եղած վիճակագրական տվյալները ցուց են տալիս, որ մարզի բնակչության կենսամակարդակը բավական ցածր է: Մարզում կամու 55 000 կենսաթոշակառու, 30 000 աշխատության նպաստառու ընտանիք, ավելի քան 33 000 գործազուրկ (որից 26 800-ը միայն Գյումրիում), միանվագ դրամական օգնություն են ստանում ավելի քան 3100 ընտանիք: Բերված տվյալները ինքնին խոսում են մարզի բնակչության ցածր կենսամակարդակի մասին:

Ծիրակի մարզի տնտեսության սոցիալական ոլորտում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն կրթությունը, գիտությունը և մշակույթը: Դրանց ուսումնասիրումը պատկերացում է տալիս բնակչության կրթական ու մշակութային մակարդակների և կրթագիտական ու մշակութային օջախների տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունների մասին:

Մարզի տարածքում գործում են 181 հանրակրթական հաստատություն, որի մասին հանգամանալից պատկերացում է տալիս ստորև բերված այդուսակը (աղ. 24):

Մարզում գործում են նաև 10 պետական միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, 6 պետական բուհ և մասնաճյուղ (Գյումրու մանկավարժական ինստիտուտը, ՀՊՃ, ԵՐՊՏԻ, ԵրմԿԻ, ԵրԳՊԱ Գյումրու մասնաճյուղերը): Ի տարբերություն հանրակրթական հաստատությունների՝ վերջիններս տեղաբաշխված են միայն Գյումրիում:

Այլուսակ 24

Ծիրակի մարզի հանրակրթական հաստատությունները (ըստ մարզպետարանի տվյալների)

Դպրոց	Ուսումնական հաստատությունների թիվը	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը	Աշխատողների թիվը	Կադրերի պահանջը
Տարրական	5	15	56	57	5
Գիմնական	20	171	2059	618	20
Միջնակարգ	146	2740	53067	8043	180
Վարժարան	8	88	1540	361	0
Կրթական կամացական	2	59	1321	131	0
Ընդամենը	181	3073	58043	9210	205

Մարզի տարածքում նախկինում առկա մի շարք միջնակարգ տեխնիկական ուսումնարաններ այժմ դարձել են հոսքային ուսուցմամբ ավագ դպրոցներ:

Ներկայումս Շիրակի մարզում կրթության բնագավառում առաջնահերթ խնդիրներ են համարվում դպրոցաշինության և դպրոցների հիմնանորոգումների, նյութատեխնիկական վերազինման, հատկապես ջուրական շատ դպրոցներ մանկավարժական կայդերով ապահովելու, բոլոր հանայնքներում՝ դպրոցներ ունենալու, սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցից դուրս մնացած երեխաներին ուսումնական գործընթացի ներգրավման և այլ հարցեր: Առանձնակի ուշադրության են արժանի մարզի հատկապես լեռնային և սահմանամերձ գյուղերի (այդպիսիք մարզում 95-ն են) դպրոցները: Միայն Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների դպրոցներում կա 121 ուսուցչի պահանջարկ: Բարվոք չէ վիճակը նույնիսկ մարզկենտրոն Գյումրիում, որտեղ 2001 թ. կար 41 ուսուցչի պահանջարկ: Անհանգուտացնող է նաև այն հանգամանքը, որ վերջին տասնամյակի ընթացքում տիրող ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի պատճառով դպրոցները թողեցին բազմաթիվ մանկավարժներ, որոնց այնուհետև մեծ չափերի հասնող գործազրկության պատճառով փոխարինելու եկան ոչ մասնագետ և ոչ մանկավարժ կադրեր: Այժմ էլ լեռնային և սահմանամերձ գյուղերի դպրոցների ուսուցչական կազմի համարնան համար հաճախ ներգրավվում են ոչ մասնագետ կամ ոչ մանկավարժ կադրեր:

Շիրակի մարզը Դայաստանի Դանրապետության մշակութային կյանքի կարևորագույն հանգրվաններից մեկն է: Այստեղ հարյուրամյակների ընթացքում ծևավորվել են պատմամշակութային հարուստ ժառանգություն, մշակութային օճախների գործունեության ինքնատիպ և օրինակելի սկզբունքներ: 2001 թ. դրությամբ մարզում գործել են 328 մշակութային օբյեկտներ, այդ թվում՝ 32 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 2 թատրոն, 147 գրադարան, 10 թանգարան, 125 մշակույթի տուն, 3 կինոթատրոն և 9 նվագախումբ:

Դայաստանի Դանրապետությունում Շիրակի մարզն առանձնանում է նաև մարզական և սպորտային ցուցանիշներով: Մարզում 6 մարզական ընկերությունների ենթակայությամբ գործում են 34 մարզադպրոցներ, մեկ մարզահամալիր, մեկ մարզամշակութային կենտրոն, մեկ մարզադպրոց: Բոլոր մարզադպրոցներում պարագում են ավելի քան 10000 մարզիկ-մարզուիհիներ: Մարզադպրոցների սաներից 30-ը միջազգային կարգի սպորտի վարպետ են, մոտ 110-ը՝ սպորտի վարպետներ: Առավել մեծ մասսայականություն են վայելում ծանրամարտը, բռնցքամարտը, ֆուտբոլը, թեք ատլետիկան, հունահոռոմեական, ազատ ոճի և ծյուղի ըմբշամարտերը: Շիրակցի բազմաթիվ մարզիկներ դարձել են օլիմպիադական, աշխարհի ու Եվրոպայի չեմպիոններ:

ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԿԱՐՆԵՐ

Րայաստանի Դանրապետության համար այսօր առաջնային նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ (արդյունաբերական ներուժի վերականգնման, գյուղատնտեսական հողատարածությունների արդյունավետ օգտագործման և գյուղական քանակի ավելացնան, գործազրկության ծավալների կրճատման և աշխատատեղերի ավելացնան, արտագաղթի ծավալների կրճատման, սոցիալական պաշտպանվածության ապահովման, հանրապետության ծայրամասային և բարձրլեռնային բնակավայրերի հիմնախնդիրների առաջնահերթ լուծման և այլն) բնորոշ են բոլոր մարզերին, այդ թվում նաև Շիրակին։ Սակայն հանրապետության համար համընդհանուր այդ հիմնախնդիրներին Շիրակում գումարվում են նաև բնակարանաշինության, դպրոցաշինության, խնելու ջրի մատակարարման և այլ հիմնախնդիրներ, որոնց առկայությունը պայմանավորված է 1988 թ. աղետալի երկրաշարժի թողած հետևանքներով։

Անկասկած, մարզի սոցիալ-տնտեսական հետագա առաջընթացը և առկա հիմնախնդիրների լուծումը նախ և առաջ պայմանավորված է արտադրատնտեսական ոլորտի և մասնավորապես արդյունաբերության զարգացումով։ Ինչպես արդեն նշել ենք, Շիրակի տարածքում գործող արդյունաբերական ծեռնարկությունների արտադրական հզորությունները ներկայումս հիմնականում օգտագործվում են 5-10%-ով, իսկ գրեթե երեք տասնյակ ծեռնարկություններ ընդհանրապես արտադրանք չեն թողարկում։ 1990 թ.-ից հետո ծեռնարկություններում չեն ներդրվել ո՞չ նոր սարքավորումներ, ո՞չ էլ առաջատար տեխնոլոգիաներ։ Զեռնարկությունների մեծենասարքավորումների միջին տարիքը 15-ից բարձր է, և եթե նույնիսկ ֆիզիկապես նորմալ վիճակում են, ապա բարոյապես վաղուց մաշված են։ Ֆինանսական միջոցների անբավարարությունը, հումքային պաշարների սակավությունը և բնակչության ցածր գնորունակությունը արգելակում են ծեռներեցության զարգացումը։

Շիրակի մարզի տնտեսության ներկա վիճակի պայմաններում արդյունաբերական հզորությունների վերականգնումը և զարգացումը նախ և առաջ պետք է հիմնվի հանրապետության ներքին հնարավորությունների վրա։ Սակայն պետք է նաև ընդունել, որ

տնտեսական անկումը, առկա վարկային քաղաքականությունը, ֆինանսական նիջոցների սակավությունը սահմանափակել են ներդրումային հնարավորությունները։ Այսօր, առանց պետական աջակցության, հարկային բարենպաստ տարածքային քաղաքականության և ֆինանսավորման արտաքին աղբյուրների, անհնար է արդյունաբերության զարգացումը, շուկայի ընդլայնումը և մարզի բնակչության զբաղվածության հիմնախնդրի լուծումը։

Հիրակի մարզպետարանի կողմից կազմած սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրին հաճապատասխան առաջիկա տարիներին մարզում արդյունաբերության բնագավառում նախատեսվում է իրականացնել հետևյալ նիջոցառումները։

- ծեռնարկությունների արտադրական հզորությունների առավել արդյունավետ օգտագործում, առկա աշխատատեղերի պահպանում և նոր աշխատատեղերի ստեղծում,
իրացման նոր շուկաների ծեռքբերում, մրցունակ և պահանջարկ ունեցող արտադրատեսակների թողարկման ծավալների ավելացում,
փոքր և միջին ծեռնարկատիրության զարգացման օժանդակություն,
ժամանակակից առաջատար տեխնոլոգիաների ներդրում, համատեղ ծեռնարկությունների ստեղծում, արդյունաբերական ծեռնարկությունների միջև կոռպերացիայի զարգացում։

Մարզի թերեւ արդյունաբերական ծեռնարկություններում կշարունակվի ճյուղի ծեռնարկությունների համար անհրաժեշտ հումքի թողարկումը և վերջինիս վերամշակմանը բնակչության տարրեր տարիքային խմբերի համար հագուստեղենի, տրիկոտաժեղենի, սպիտակեղենի, գուլպեղենի և կոշկեղենի արտադրությունը։

Սննդարդյունաբերական ոլորտում նախատեսվում է ստեղծել նախադրյալներ գյուղմթերքների մշակումը սեփական հումքային բազայի վրա իրականացնելու ուղղությամբ։

Ծինհնդրուստրիայի ծեռնարկությունների աշխատանքը նպատակատրված կլիմի տեղական հումքի արդյունավետ օգտագործմանը, մարզում իրականացվող շինարարության պահանջների բավարարմանը։

Սեքտենաշինության և սարքաշինության ծեռնարկություններում աշխատանքները կնպատակատրվում գյուղմթերքների, գործիքների և պահեստամասերի թողարկմանը, բնական քարերի մշակմանը, նոր տիպի չափող սարքերի, հղկող, դարբնոցամալիչային, թանկարժեք քարերի նիստավորման սարքավորումների, կրնդենսատորների, վակուումային էլեկտրավառարանների և

բնակչության համար սպառնան ապրանքների արտադրության կազմակերպմանը:

Դասկանալի է, որ վերը նշված ծրագրերի իրականացման համար մարզի արդյունաբերությանն անհրաժեշտ են լրացուցիչ ներդրումներ և ֆինանսավարկային միջոցներ:

Ծիրակի մարզում ներկայումս առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը կամ էլ դրանց մեղմացումը մեծապես կախված է նաև մարզի տնտեսության կարևորագույն ճյուղի՝ գյուղատնտեսության ոլորտում տիրող իրավիճակի բարելավումից: Չնայած մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքն իր արժեքային արտահայտությամբ ավելի քան 5-6 անգամ գերազանցում է արդյունաբերության համապատասխան ցուցանիշին, այդուհանդերձ այստեղ ևս առկա են լուրջ հիմնախնդիրներ: Մարզում ցածր են մշակվող կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության ցուցանիշները: Լիարժեք չեն օգտագործվում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Մարզի մասշտաբով օգտագործվում է վարելահողերի ընդամենը 71%-ը: Աշոցքի և Անասիայի տարածաշրջաններում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 65 և 51% (աղ. 25): Արդյունավետ չեն օգտագործվում նաև մարզի հյուսիսարևմտյան շրջանների հյութալի արոտավայրերն ու բնական խոտհարքերը:

Այլուսակ 25

Ծիրակի մարզի վարելահողերի օգտագործման վիճակը (2001 թ.)
(ըստ մարզպետարանի տվյալների)

Տարածաշրջաններ	Վարելահողեր				Որից ոռոգվել		
	ընդամենը (հա)	օգտագործվել է (հա)	%	ընդամենը (հա)	օգտագործվել է (հա)	%	
Ախուրյանի	25468	20192	88	14865	13400	90	
Աշոցքի	13991	9163	65	601	482	80	
Արքիկի	15224	12632	83	2728	1608	59	
Անասիայի	14478	7388	51	3360	2368	69	
Անիի	15537	10837	70	802	741	92	
Ընդամենը	84698	60612	71	22356	18559	83	

Սեր հանրապետության, այդ թվում նաև Ծիրակի մարզի համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեն սահմանամերձ և բարձրեռնային բնակավայրերի ամրապնդման, դրանց սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության արտահոսքի դա-

դարեցման խնդիրները: Մարզի 128 գյուղերից սահմանամերձ բնակավայրի կարգավիճակը ունեն 9-ը, քարծրլեռնային բնակավայրեր են 39-ը, իսկ 47 բնակավայրեր համարվում են լեռնային: Բերված թվական տվյալները ինքնին վկայում են հիմնախնդրի կարևորության մասին:

Շիրակի արտադրատնտեսական ոլորտների ճգնաժամային ծանր պայմանները, ինչպես նաև 1988 թ. Երկրաշարժի աղետալի հետևանքները իրենց անմիջական ազդեցությունն են բողել մարզի բնակչության սոցիալական ապահովության, առողջության, բնակարանային և կոմունալ-կենցաղային պայմանների, ժողովրդագրական իրավիճակի, կրթամշակութային և առողջապահական համակարգի վրա: Առանձնապես անհանգստացնող է բնակչության վերարտադրության վիճակը: Մարզում 2001 թ. 1997 թ. համեմատությամբ ծնունդը նվազել է 38%-ով, իսկ բնական աճը պակասել է 25%-ով: Ժողովրդագրական ցուցանիշների այսպիսի նվազումը պայմանավորված է հիմնականում բնակչության արտագաղթով և պտղաբեր հասակի երիտասարդների թվի պակասով:

Հ/Տ, 6 ՏԸԾ

ԾԾ ՀԾ

ԾԾ ԾԾ

Ծ

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ծիրակի մարզի
բնակավայրերի ցանկը և բնակչության թիվը
(1926-2000թթ.)**

(սկզբնադրյուրները՝ 25 և վիճակագրական ծառայության տվյալներ)

Նամայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Հ. բնակչություն	Բնակչության թիվը ըստ տարիների				
			1926	1959	1979	1988	2000
1	2	3	4	5	6	7	8
Ախորյանի տարածաշրջան							
Գյումրի	ք. Գյումրի	1556	42313	108446	205922	230600	210900
Ազատան	Ազատան	1500	2481	3082	3890	4014	5034
Մխուրիկ	Մխուրիկ	1465	739	941	1107	1090	1196
Մխուրյան	Մխուրյան	1540	2447	2790	6364	9079	9700
Այգերաց	Այգերաց	1570	1366	1089	617	576	724
Առափի	Առափի	1500	987	1329	1589	1610	2022
Արևիկ	Արևիկ	1530	1155	1470	1455	1430	1825
Բայանդուր	Բայանդուր	1470	626	567	586	590	734
Բենիամին	Բենիամին	1520	442	546	500	515	690
Գետք	Գետք	1470	475	589	441	434	598
Երազգավորս	Երազգավորս	1450	925	1070	1103	1445	1448
Լեռնուտ	Լեռնուտ	1830	299	186	113	101	195
Կամո	Կամո	1660	1290	1334	1283	1170	1516
Կապս	Կապս	1710	449	428	535	552	733
Կառնուտ	Կառնուտ	1585	1149	783	667	686	1005
Կարմրաքար	Կարմրաքար	1775	236	285	50	18	45
Կրաշեն	Կրաշեն	1875	279	376	222	192	350
Նայկավան	Նայկավան	1540	1042	1398	1348	1185	1272
Նացիկ	Նացիկ	1650	888	879	820	793	1050
	Սայհսյան Ե/Կ	1640	40	98	33	-	25
Նովիտ	Նովիտ	1660	504	543	492	435	525
Նովունի	Նովունի	1740	165	412	475	399	740

1	2	3	4	5	6	7	8
Դարդաբանյան	Դարդաբանյան	1470	345	666	595	692	952
	Ախուրյան Ե/կ կից ավան	1460	17	-	28	-	12
Մայիսյան	Մայիսյան	1640	774	1004	1210	1187	1653
Մարմաշեն	Մարմաշեն	1600	743	1334	1341	1376	1906
Սեծ Սարիար	Սեծ Սարիար	1875	527	633	395	323	399
Մուսայելյան	Մուսայելյան	1640	1394	1439	1420	1371	1748
Ծիրակ	Ծիրակ	1635	1158	847	839	806	1100
Ոսկեհասկ	Ոսկեհասկ	1510	1203	2093	2326	2320	2636
Զաջուռ	Զաջուռ	1700	797	815	742	664	888
Զաջուռ Կայարան	Զաջուռ Ե/կ կից ավան	1895	46	113	393	310	330
Զրառատ	Զրառատ	1885	1420	1026	1061	989	1196
Վահրամաբերդ	Վահրամաբերդ	1670	272	602	752	764	1188
Փոքրաշեն	Փոքրաշեն	1900	218	309	212	176	222
Քերի	Քերի	1730	528	862	807	825	1146

Ամասիայի տարածաշրջան

Ալվար	Ալվար	2000	406	366	630	513	141
	Արավետ	1990	160	283	547	488	-
Աղվորիկ	Աղվորիկ	2030	457	692	1091	837	85
Ամասիա	Ամասիա	1865	357	1542	3329	3693	2520
Արդեմիս	Արդեմիս	2045	316	470	757	675	121
Արեգմադեմ	Արեգմադեմ	1880	695	803	1528	1448	413
Բանդիվան	Բանդիվան	1955	128	376	315	245	283
Բերդաշեն	Բերդաշեն	2020	147	435	871	761	200
	Պաղակն	2035	223	173	260	292	53
Գառնարիճ	Գառնարիճ	2080	295	301	566	495	190
	Եղնաջուր	2080	295	301	566	495	40
Գյուլիբուլաղ	Գյուլիբուլաղ	1715	1142	1529	2710	2555	860
Գետաշեն	Գետաշեն	1830	430	557	925	925	460
	Կամխուտ	1860	252	230	245	214	10
Զարիշատ	Զարիշատ	2085	120	321	223	196	71
	Երիզակ	2125	307	219	486	414	-
Չորակերտ	Չորակերտ	2045	195	255	472	431	106
	Շարիկ	2195	243	147	264	190	35

1	2	3	4	5	6	7	8
Ծաղկուտ	Ծաղկուտ	2060	559	594	985	923	140
	Լորասար	2160	284	165	319	288	22
Չողմիկ	Չողմիկ	1750	462	324	425	365	496
Չովտուն	Չովտուն	2015	352	236	253	180	199
Մեղրաշատ	Մեղրաշատ	1740	8	425	283	276	495
Շաղիկ	Շաղիկ	2045	-	145	239	283	90
Ողջի	Ողջի	1600	709	1032	1543	1553	508
Զրածոր	Զրածոր	1750	490	378	314	305	378

Արթիկի տարածաշրջան

Արթիկ	ք.Արթիկ	1750	3168	9071	16343	24774	24100
Անուշավան	Անուշավան	1700	1351	1503	1825	1759	2129
Արևշատ	Արևշատ	1940	1399	1166	1290	1310	1903
Գեղանիստ	Գեղանիստ	1830	1171	771	964	940	1069
Գետափ	Գետափ	1760	640	645	606	657	836
Լեռնակերտ	Լեռնակերտ	1990	1373	720	1200	1118	1469
Լուսակերտ	Լուսակերտ	1550	425	608	712	596	779
Ջայկասար	Ջայկասար	1640	396	209	199	195	228
Ջայրենյաց	Ջայրենյաց	1570	745	539	534	552	630
Ջառիճ	Ջառիճ	2000	880	1058	1029	1003	1203
Ջոռոն	Ջոռոն	1580	1564	1660	1841	1779	2090
Ջովտաշեն	Ջովտաշեն	1580	255	213	236	255	370
Մեծ Սանրաշ	Մեծ Սանրաշ	1970	1882	1651	1759	1792	2454
Մեղրաշեն	Մեղրաշեն	1665	1424	1057	1966	936	1278
Նահապետավան	Նահապետավան	2015	622	647	650	659	904
Նոր Կյանք	Նոր Կյանք	1630	1211	1138	1246	1251	1462
Պեմզաշեն	Պեմզաշեն	1800	1331	3599	2587	3382	2913
Սարալանջ	Սարալանջ	1990	1182	999	958	970	1118
Սարատակ	Սարատակ	1560	923	1062	1142	990	1327
Սպանդարյան	Սպանդարյան	1820	816	873	1118	1082	1537
Վարդաբար	Վարդաբար	1615	829	673	612	523	591
Տուֆաշեն	Տուֆաշեն	1680	575	627	422	400	524
Փանիկ	Փանիկ	1685	1685	1838	2377	2417	2771
Փոքր Սանրաշ	Փոքր Սանրաշ	1940	975	1114	1707	1747	2224

Ամի՞ տարածաշրամ

Սարալիկ	Սարալիկ	1739	1646	2177	4229	6545	7900
Աղին	Աղին	1480	443	612	359	354	566
Աղին Ե/Կ Կից ավան	Աղին Ե/Կ Կից ավան	1440	60	184	140	110	8
Անի կայարան	Անի Ե/Կ Կից ավան	1410	66	746	418	460	444
Անիպենզա	Անիպենզա	1300	196	1119	569	463	461
Բագրավան	Բագրավան	1555	598	856	816	817	870
	Խարկով	1500	303	235	33	-	38
Գուսանագյուղ	Գուսանագյուղ	1520	1062	1157	876	876	1015
Իսահակյան	Իսահակյան	1500	451	588	532	886	1000
	Բարձրաշեն	1620	618	532	338	-	29
Լանջիկ	Լանջիկ	1955	663	699	777	707	1012
Լուսադբյուր	Լուսադբյուր	1500	693	698	556	473	570
Դայկածոր	Դայկածոր	1440	840	596	413	430	507
Զիթիանքով	Զիթիանքով	1735	1406	1580	1259	1135	1378
Չորակապ	Չորակապ	1720	962	658	961	935	1117
Շիրակավան	Շիրակավան	1500	685	454	432	623	717
Զրափի	Զրափի	1515	-	-	694	820	994
Սառնադբյուր	Սառնադբյուր	1925	2523	2012	2460	2500	3164
Սարակապ	Սարակապ	1600	597	686	649	504	570
Քարաբերդ	Քարաբերդ	1900	1000	822	1002	896	1019

Աշոցք տարածաշրամ

Աշոցք	Աշոցք	1990	764	1429	2069	2501	2927
Արփենի	Արփենի	1929	479	285	367	332	403
Բաշզյուղ	Բաշզյուղ	2020	205	122	74	65	70
Բավրա	Բավրա	2150	494	579	562	488	548
Գոգհովիտ	Գոգհովիտ	1824	411	303	359	312	402
Ջուլգադբյուր	Ջուլգադբյուր	2000	499	497	330	384	443
Թավշուտ	Թավշուտ	2040	224	383	356	342	385
Թորոսագյուղ	Թորոսագյուղ	1950	461	316	287	314	317
Լեռնագյուղ	Լեռնագյուղ	1980	366	135	66	24	32
Կարմրավան	Կարմրավան	2010	296	232	208	180	223
Կաքավասար	Կաքավասար	1920	281	217	176	138	177
Կրասար	Կրասար	2000	349	350	352	574	524

1	2	3	4	5	6	7	8
Դարբաշեն	Դարբաշեն	2020	442	241	219	213	184
Չորաշեն	Չորաշեն	1950	507	295	304	266	246
Դազանչի	Դազանչի	2030	1152	828	564	538	643
Մեծ Սեպասար	Մեծ Սեպասար	1990	893	761	848	803	976
Սուսայելյան	Սուսայելյան	2050	258	469	408	404	372
Սալուտ	Սալուտ	2050	125	87	79	71	92
Սարագյուղ	Սարագյուղ	2250	378	320	287	170	190
Սարապատ	Սարապատ	2000	242	158	170	142	148
Սիզավետ	Սիզավետ	2070	1031	345	303	289	354
Վարդադեյուր	Վարդադեյուր	2030	271	93	70	62	103
Ցողամարգ	Ցողամարգ	1950	515	591	477	471	550
Փոքր Սարիար	Փոքր Սարիար	1980	255	387	283	252	272
Փոքր Մեպասար	Փոքր Մեպասար	1990	362	213	59	89	189

Օգտագործված գրականություն

1. Աթայան Զ. Խ., Հայկական ՍՍԴ բնությունը և նրա պահպանությունը, Երևան, 1982թ.
2. Ասլանյան Ա. Ա., Բաղդասարյան Ա. Բ., Ղուլյան Ս. Մ., Վալեսյան Լ. Յ., Հայաստան, Երևան, 1969թ.
3. Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Երևան, 1987թ.
4. Գաբրիելյան Գ. Կ., Լենինական, Երևան, 1984թ.
5. Ղուլյան Ս. Մ., Վալեսյան Լ. Յ., Հայկական ՍՍԴ տնտեսական աշխարհագրության ակնարկ, Երևան, 1967թ.
6. «Երեկոյան Երևան» օրաթերթ, 1989թ., թիվ 13.
7. Թաղևոսյան Յ. Թ., Զգվում են կապույտ երակները, Երևան, «Հայաստան», 1991թ.
8. Խաչատրյան Է. Ա., Հայկական ՍՍԴ օգտակար հանածոները, Երևան, 1963թ.
9. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, Երևան, 2001թ.
10. Կարապետյան Թ. Յ., Շիրակ. տնտեսական զարգացման ակնարկ, Երևան, 1984թ.
11. Կորլոսյան Զ., Խորիրյային Հայաստանի բնակչությունը վերջին հայուրամյակում, 1831-1931թթ, Երևան, 1932թ.
12. Հակոբյան Թ. Խ., Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Երևան, 1978թ.
13. Հակոբյան Թ. Խ., Սովետական Հայաստանի քաղաքները, Երևան 1977թ.
14. Հակոբյան Թ. Խ., Օհանյան Կ. Օ., Ավագյան Գ. Ե., Նազարյան Խ. Ե., Սովետական Հայաստան, Երևան, 1970թ.
15. Հակոբյան Թ. Խ., Սելիք-Բախչյան Ս., Բարսեղյան Յ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, I-V հատորներ, Երևան, 1986-2001թթ.
16. Հայաստանի Հանրապետության ազգային փողքանանություններն այսօր, I, Երևան, 2000թ.
17. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թվականին, վիճակագրական վերլուծական ժողովածու, Երևան, 2001թ.
18. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, վիճակագրական ժողովածու, Երևան, 1999թ.
19. 1989թ. հանաճիռութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Երևան, 1991թ.
20. Հայկական ՍՍԴ ջրագրությունը, ՀՍՍԴ ԳԱ իրատ., Երևան, 1981թ.

21. Դայկական ՍՍԴ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971թ.
22. Սարտիրոսյան Լ., Պողոսյան Դ., Նահապետյան Ա., Վալեսյան Լ., Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, Երևան, 2000թ.
23. Մուլդիջանյան Յա. Ի., Դայկական ՍՍԴ արգելանոցները և արգելավայրերը, Երևան 1975թ.
24. Շիրակի մարզական հաշվետվությունը 2001թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ
25. Պողոսյան Ա. Դ., Դայկական ՍՍԴ տարածության գյուղական տարաբնակեցումը, Երևան, 1999թ.
26. Վալեսյան Լ. Դ., Դայկական ՍՍԴ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 1988թ.
27. Վալեսյան Լ. Դ., Դասարակական աշխարհագրության ներառություն, Երևան, 1999թ.
28. Օհանյան Կ. Օ., Դայկական ՍՍԴ տարածքի ֆիզիկաշիարհագրական շրջանացումը, Երևան 1977թ.
29. Агроклиматические ресурсы Арм. ССР. Под ред. Р. С. Мкртчяна, Л., Гидромет., 1976г.
30. Атлас сельского хозяйства Арм. ССР, Москва-Ереван, 1984г
31. Багдасарян А. Б., Климат Арм. ССР, Изд. АН Арм. ССР, Ереван, 1958г.
32. Балян С. П., Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Ереван, 1969г
33. Валесян Л. А., Производственно-территориальный комплекс Армянской ССР, Ереван, 1970г.
34. Геология Армянской ССР, т.1. Геоморфология. Изд. АН Арм. ССР, Ереван, 1962г.
35. Государственный водный кадастр. Многолетние данные о режиме и ресурсах поверхностных вод суши, том XIII, Армянская ССР, Л., Гидромет, 1987г.
36. Мусаелян С. М., Водные ресурсы Арм. ССР, Ереван 1989г
37. Погосян Д., Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Ереван, 1986г.
38. Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы, (статистический сборник), Ереван, 1962г.
39. Справочник по климату СССР. вып. 16, ч. II, "Температура воздуха", Л. Гидромет, 1966
- 40 Справочник по климату СССР. вып. 16, ч. IV, "Влажность воздуха. Осадки и снежный покров", Л., Гидромет, 1969

ԲՈՎԱՌԱԿՈՂԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ I. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԵՐԸ ԵՎ ՈԵՍՈՒՐՍՍԵՐԸ	5
Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը.....	5
Երկրաբանական կառուցվածքը, մակերևույթը, և	
օգտակար հանածոնները	6
Կլիման	16
Սերբին ջրերը	23
Հողերը	34
Բուսականությունը	36
Կենդանական աշխարհը	39
Բնօգտագործման և բնապահպանության	
հիմնախնդիրները Շիրակի մարզում	40
ԳԼՈՒԽ II. ՊԱՏՄԱՄԱՐԴԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒԱՐՁԱՆՆԵՐԸ	45
ԳԼՈՒԽ III. ԲՆԱԿՉՈՂԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ	51
Բնակչությունը	51
Քաղաքային բնակավայրերը	66
Գյուղական բնակավայրերը	85
ԳԼՈՒԽ IV. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	99
Արդյունաբերությունը	100
Գյուղատնտեսությունը	105
Տրանսպորտը	111
Սոցիալական ոլորտը	114
ԳԼՈՒԽ V. ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ	119
ՀԱՎԵԼՎԱԾ	123
ՕՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՂԹՅՈՒՆ	128

**Մանասյան Մաքսիմ Գառնիկի
Գրիգորյան Արսեն Թորգոմի
Պոտոսյան Ակսել Հարությունի**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
բնությունը, բնակչությունը, տնտեսությունը

Դամակարգչային
աշխատանքը Շուշանիկ Գրիգորյան
Զնավորումը՝ Ս. Դովիաննիսյան

Տպագրությունը՝ Նահապետ ՍՊԸ

Թուղթ օֆսեթ 80գր., տպ.մամուլ

Տպաքանակ 300
գինը պայմանագրային